մեն մասերով ստեղծուած է Ս.ստուծոյ հրամանով,
և թէ՝ ոչինչ չկայ առանց Աստուծոյ եղած: Այս
ճշմարտութիւնն առնում ենք Ծննդոց գրքից, որ
սկսում է այս խօսքերով. „Խկզբանէ արար Աս-
տուած զերկին և զերկիը“: Սուրբ Պօղոս առա-
քեալը Յիսուս Քրիստոսի մասին ասում է. „Նովաւ
հաստատեցաւ ամենայն՝ որ ինչ յերկինս և որ ինչ
յերկրի. որք երևին և որք ոչն երևին. եթէ ա-
թոռք, եթէ տէրութիւնք, եթէ պետութիւնք, ե-
թէ իշխանութիւնք՝ ամենայն ինչ նովաւ և ի
նոյն հաստատեցաւ: Եւ նա է յառաջ քան զամե-
նայն, եւ ամենայն ինչ նովաւ եկաց բովանդակ“:
Կողոս. Ս. 16. 17:

„Հաւատամք“ի մէջ „աներեւոյթ“ բառը նշա-
նովում է անտեսանելի, կամ հոգեւոր աշխարհը,
որին պատկանում են մեր հոգին և հրեշտակները,
որոնք հոգեղին, բանական, ազատ կամք և կա-
րողութիւն ունեցող արարած են:

„Հրեշտակ“ նշանակում է պատգամաբեր,
գեսպան: Աստուած սոցա միջոցով իւր կամքը յալտ-
նում է մարդկանց: Օրինակ՝ Գաբրիէլ հրեշտակա-
պետն ուղարկուեցաւ Ս. Կողոս Մարիամին աւետե-
լու. Փրկչի լութիւնը: Սուրբ Գրքից երևում է, որ
հրեշտակներն առաջ ստեղծուեցան քան մարդիկ:
Յովի գրքում Աստուած ստեղծագործութեան մա-

սին ասում է. „Ով է, որ էարկ զվէմն անկեան է
դմա: Յորժամ եղեն աստեղք ծերք՝ ամենայն հրեշ-
տակը աստեղաց օրհնեցին զիս մեծաձախն: և ա-
մենայն հրեշտակը իմ գովեցին“: Յովի. Ա. 7.

Հրեշտակները թէւ բանաւոր, ազնուագոյն
և մարդկանցից գերագոյն են՝ բայց գարձեալ արա-
րածներ են, ուստի և մենք նոցա չենք պաշտում,
այլ պատում ենք՝ որպէս և սուրբերին:

Հրեշտակներն են մաքուր, ալսինքն զուտ հո-
գի: Նոքա Աստուծուն սպասաւորում են. „Հրեշտակաց
իւրոց պատուիրեալ է վասն քո, ի պահել զքեզ
յամենայն ճանապարհս քո“: Սաղմ. Ղ. 11.

Այն հրեշտակները, որոնք ապստամբ գտնուե-
ցան Աստուծոյ գէմ՝ կոչւում են հրեշտակներ սա-
տանալի, կամ գեր. Մատթ. Խ. 41: Յալտ. Ժ. 9:
Պետրոս Առաքեալն ասում է. „... ի Հրեշտակն
յանցուցեալս Աստուած ոչ խնալեաց, այլ խաւարալին
կապանօք արկեալ ի տարտարոսն՝ ետ պահել ի
գատաստաննա:“ Բ. Պետ. Բ. 4:

գ.) ԱՇԽԱՐՀԻՍ ԱՐԱՐՉՈՒԹԻՒՆԸ.

(Ա. յօդ. շարունակութիւնը)

Սուրբ Գիրքն ինչ է յալտնել մեզ աշխարհիս
արարչութեան մասին:— Նա ասում է. Սկզբից Աս-
տուած արաւ երկինքն ու երկիրը: Երկիրն էր անե-

ըւովիթ և անպատրաստ: Աստուած լաշորդաբար
արաւ ամեն բան.

Առաջին օրում՝ (աշխարհի) լուսը ստեղծեց: Երկրորդում՝ հաստատութիւնը, կամ տեսանելի եր-
կինքը՝ երկնալին կամարը:
Երրորդում՝ որոշեց ջրերը ցամաքից և ստեղծեց
բոլորը:

Չորրորդում՝ արեգակը, լուսինն և աստղերը:
Հինգերորդում՝ ջրալին կենդանիներն և թռչունները:
Վեցերորդում՝ ցամաքի վրայ տալրող կեն-
դանիներն և ամենից յետոյ ստեղծեց
մարդուն:

Ստեղծագործութիւնը վերջացաւ մարդով: Եօթնե-
րորդ օրը հանգստացաւ Աստուած իւր բոլոր գոր-
ծերից: Սորա համար է, որ եօթներորդ օրը կոչում
է Շաբաթ, որ ելրայեցերէն նշանակում է հան-
գիստ: Ծննդոց Բ. 2: Աստուծոյ բոլոր արարած-
ներն սկզբում միմիայն բարի, մաքուր, ազնիւ և
անլնաս էին. „Եւ ետես Աստուած զամենայն, զոր
արար և ահա բարի են յոյժ:“ Ծնն. Ա. 31:

Գ. ՄԱՐԴՈՒՍ ԱՐԱՐՉՈՒԹԻՒՆԸ.

Սուրբ Գրքից գիտենք հետեւեալը. Աստուած
ասում է, «Արասցուք մարդ լստ պատկերի մերում»:
Անշուշտ յոգնագէմ բայս „Արասցուք“ և գերա-

նունս „Մերում“ աստուածալին Անձերի բազմու-
թիւնն են ցոյց տալիս՝ որ լստ Ա. Գրքի երեք են:
Ծննդ. Ա. 26: Եւ ստեղծեց Աստուած առաջին
մարդու՝ Ադամի մարմինը հողից, վչեց նորա երե-
սին կենդանութեան շունչը, մուծեց Ադամին դը-
րախտի մէջ, տուաւ նորան կերակուր՝ բացի միւս
ծառերի պտուղներից, նաև կենաց ծառի պտուղը,
որ չարժանացաւ ուտելու մինչ դրախտումն էր:
Վերջապէս՝ երբ քնած էր Ադամը՝ առաւ նորա կող-
ուկը, և նորանից ստեղծեց առաջին կինը՝ Նւայ:
Ծննդ. Բ. 22:

Մարդս ընչով է Աստուծոյ պատկերը:—Ա.
Պօղոս Առաքեալի բացատրութեան համեմատ „Ար-
դարութեամբ եւ պրութեամբ ծշմարտութեանն“:
Եփես. Գ. 24:

Կենդանութեան շունչը, որ վչեց՝ է անտարա-
կուս չոգին, որ է հոգեւոր գոյացութիւն և անման
էութիւն: Բառս „դրախտ“ նշանակում է պարտէզ,
կամ այգի: Այս անունն ունէր նախածնողաց գե-
ղեցիկ և երանաւէտ առաջին բնակարանը, որ Ծը-
նընդոց գիրքը նկարագրում է որպէս բուրաստան:
Աստուած Եւային ստեղծեց Ադամի կողից, որպէսպի
մարդկալին բոլոր ցեղերը՝ միւնոյն մարմնից առնե-
լով իրանց ծագումն՝ բնականաբար հակուած լինէին
իրար սիրել եւ պահանջել:

Աստուծալին նախատեսութիւնը մարդուս ա-
ռանց որոշ նպատակի չէ ստեղծել: Այդ նպատակն

Եր՝ անել, քազմանալ, տիրել երկրիս, վալել
արդարութեամը երկրիս բարիքն և լինել յաւի-
տեան երջանիկ. Աճեցէք և բազմացարուք և
լցէք գերկիր և տիրեցէք դմա։ Ծննդ. Ա. 28։
Թէպէտև մարդս իւր ազատ կամքով զրկուեցաւ
այդ յաւիտենական երջանկութիւնից պատուիրա-
նազանցութեամքը, բայց Աստուած իւր էութեամբ
անփոփոխ լինելով՝ ըրփոխեց իւր նախաւահմանու-
թիւնը, այլ նոր զանապարհ բացեց մարդուս եր-
ջանկութեան համար իւր Որդուվը, որպէս վկայում
է Ա. Պօղոս Առաքեալը հետեւեալ խօսքերով. Ընտ-
րեաց զմեզ նովաւ (Որդւովն) յառաջ քան լինելն
աշխարհի։ Եփես. Ա. 4. և նոքա, որոնք հա-
ւատով և գործով կը հաճոյանան Աստուծոյ՝ պի-
տի լսեն ժամանակին Աստուածորդու ձախնը, թէ.
”Եկալք օրհնեալք Հօր իմոյ, ժառանգեցէք զպատ-
րաստեալ ձեզ արքայութիւնն ի սկզբանէ աշխար-
հի. Մատթ. ԻԵ. 34։ Ահա այս նպատակի համար
Աստուած նախասահմանել է մարդուս։

Աստուածալին նախասահմանութիւնը պէտք
է հասկանալ այսպէս. Աստուած իւր նախատեսու-
թեան և անսահման ողորմութեան համեմատ սահ-
մանել է տալ՝ և իրօք իսկ տուել է ծշմարիտ մի-
ջոց երջանկութեան հասնելու համար. Բայց իրօք
նոքա միայն հասնում են երջանկութեան, որոնք
յօժարակամ ընդունում են նոքա շնորհած միջոց-
ներն և ընթանում նոքա՝ երջանկութեան համար՝

նախազծած ձանալարհով. որպէս և վկայում է
Առաքեալը. «Բայց գիտեմք՝ եթէ որոց սիրենն զԱստ-
ուած՝ յամենայնի գործակից լինի ի բարիս, որք
հրաւիրանաւն կոչեցան.—Եւ զորս կոչեացն, զնո-
սին և արդարացոյց, զնոսին և փառաւորս արար...»
Հոգի. Ը. 28—30։

Աստուած ամենայն ինչ բարի արաւ և ոչինչ՝
չար. Ուրեմն չարն է Աստուծոյ կամքի, յայտնած
ծշմարտութեան գէմ գործելը. Աստուած մարդուս
ազատ և անծնիշխան ու բանական է ստեղծել։
Եւ բանականութիւնն այնքան է մարդուս մէջ՝
որով կարող է ճանաչել բուն բարին, բայց բարին
գործելու և ընդործելու իշխանութիւնն իւր ձեռ-
քումն է։ Եթէ մարդս իւր ինքնիշխանութիւնը,
կամ ազատութիւնը գէպի չարը գործ դնէ, այսինքն
բարու հակառակը գործէ՝ մեղանչած կըլինի երկու
մեծ պատուիրանի գէմ, այն է՝ Աստուածաիրու-
թեան և ընկերսիրութեան։ Երկու գէպքում ևս
լանցանք գործելով, մեղաւոր պիտի ճանաչուի թէ
Աստուծոյ և թէ մարդկանց առաջ, և մինչեւ որ
մարդս իւր մեղքերը ըքքաւէ՝ չէ կարող արժանա-
նալ խոստացուած երջանկութեան։ Մեղքերը քա-
ւելու համար էլ Աստուած հաճել է ցոյց տալ մեզ
միջոցներ, որոց ընդունելն ու ընդունելը գարձեալ
մեր ազատ կամքին է թողած։ Ըստ արամ և Ա.
Գիրքն ասում է. «Առաջի մարդոյ է մահ և
կեանք. լոր կամեսցի՝ միսեսցէ զձեռոս իւր։»

Թէպէտև պատուիրանազանցութեան պատճառով մարդս անկաւ իւր առաջին երանական վիճակից, և այնուհետև իւր մարմինը թշուառութեանց և ախտերի ենթարկուեցաւ՝ բայց նախ իւր հոգին ըստ առաջնորն մնաց անմնահ, և երկրորդ՝ չըզրկուեցաւ երբէք ինքնիշխան ազատ կամքից. ժողովող. Բ. 23—26: Իմաստ. Սողոմ. Բ. 24: Գ. 1—4: Եւ երբ ՚ Դարձցի հողն մեր լերկիր՝ որպէս եւ էրն՝ եւ հոգին դարձցի առ Աստուած, որ ետ զնա“. Ժողով. ԺԲ. 7:

Որովհետև, ըստ Ս. Գրքի՝ Աստուած իւր սիրելիների համար է պատրաստել խոստացած երջանկութիւնն իւր թագաւորութեան մէջ, ուստի երջանկութիւն ցանկացողը պիտի ձգտի լինել սիրելի Աստուածոյ: Աստուածուն սիրելի լինելու համար՝ պէտք է պահել նորա պատուիրանները:

Ե) ԱՍՏՈՒԱԾՈՅ ՆԱԽԱՋԵՆԱՄՈՒԹԻՒՆԸ

Աշխարհիս և մարդուս ստեղծագործութեանն անմիջապէս հետեւում է աստուածալին նախախնամութիւնը՝ վերաբերմամբ աշխարհիս ընդհանրապէս, և մարդոց՝ մասնաւորապէս: Աստուածալին նախախնամութիւնը նորա ամենակարողութեան, ամենիմաստութեան և ամենաբարութեան մի անընդհատ ներգործութիւնն է, որով Աստուած պահպանում է բոլոր արարածների գոլութիւնն ու զօ-

րութիւնը, ուղղում է նոցա դէպի իրանց բարի նպատակը, օգնում և գործակից է լինում նոցա դէպի բարին, և երբ բարուց հեռանալու պատճառով յառաջ է գալիս ձախորդութիւն՝ այն ժամանակ նա կամ դադարեցնում է ալդ՝ և կամ թէ փոխարկում, դարձնում է խրատական միջոց՝ օգտակար հետեւանքների հացնելու նպատակով: Աստուածալին նախախնամութեան մասին ինքն Յիսուս Քրիստոս ասում է. „Ճակեցարներ ի թռչունս երկնից՝ զի ոչ վարեն և ոչ հնձեն և ոչ ժողովեն ի շտեմարանս, և հայրն ձեր երկնաւոր կերակրէ զնոսա. ոչ ասկաքէն դուք առաւել էք քան զնոսա. Մատթ. 9. 26: Այս ասութեան մէջ պարզ երևում է, որ Աստուածոյ նախախնամութիւնը տարածւում է թէ ընդհանրապէս արարածոց՝ և թէ մասնաւորապէս մարդոց վրայ:

Աստուած իւր նախատեսութեամբ և խնամածութեամբ անդուլ և անդադար պահում և կառավարում է համայն տիեզերքը. Ինչ որ Աստուած չնչին ըշհամարեց ստեղծել, չնչին չէ համարում նաև պահել և խնամել: Կարդանք Ս. Գրքից Յովեայ Ա. 41 համարը. Սաղմ. ձԴ, ձԽԵ. 15. 16. ձԽԵ. 8. 9: Առակ. ՁԶ. 33: Ես. ՁԴ. 26. 27: Մատթ, Ձ. 29, 30: Գործ. ՁԷ. 24—29 և ալն, և կը տեսնենք, որ Աստուած է, որ իշխում է բոլոր դէպքերի և պատահմունքների վրայ. չըկալ և չէ կարող լինել ամենաչին համարուած մի դէմլք անգամ, որ

Աստուծոյ սահմանած օրէնքներին հակառակ պատահի, մի մազ անգամ մեր դլխից գետին չի ընկնիլ առանց գիտութեանն Աստուծոյ: Այսպէս՝ անհատների և ազգերի կանգնումն ու անկումը, որպէս Քրիստոսի եկեղեցու յառաջդիմութիւնն ու վիճակն ես՝ գտնում են Աստուծոյ ձեռքում, որ ամեն բան իր կամքի եւ խորհրդների համեմատ է զործ դընում: Ըստ այս և Ս. Գիրքն ասում է. “Զփոքըն և զմեծն ինքն արար, և միօրինակ խնամ ունի ամենեցուն”. Իմաստ. Զ. 8: «Նա տայ ամենայնի կեանս և շունչ և զամենալն ինչ»: Զի նորվաւ կեամք և շարժիմք և եմք: Գործ. Ժ. 25. 28: Զի ի ձեռին նորա եմք, և՛ մեք, և՛ բանք մեր, և՛ ամենալն հանճար, և՛ գործոց խելամտութիւն: Իմաստ. Ե. 16: „Արդար ես և արդարութեամք վարես զամենալն”: Ոչ այլ Աստուած գոյ, բաց ի Քէն՝ որում փոլիթ իցէ վասն ամենեցուն: Իմաստ. ԺԲ. ԺԹ: Գեղեցիկ է ասում և մեր Սուրբ Քրիզոր Լուսաւորիչը, թէ՝ նա է տուիչ և յաջողիչ (ուղղիչ) երկնաւորաց և երկրաւորաց: Յաճախ.

Բ. ՅՈՒՂՈՒՅԾ

„Հասաւամք եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս, յՈրդին Աստուծոյ...“ „ Որդի Աստուծոյ“ է կոչում Ս. Երրորդութեան երկրորդ Անձը, ըստ իւր Աստուածութեան. նա ինքը կոչում է և Յի-

առւ՝ այն օրից, երբ ծնաւ և երկեցաւ երկրիս վերայ՝ որպէս մարդ: «Քրիստոս» անունը տուին նորան մարգարէներն՝ երբ դեռ սպասում էին նորա գալստեանը: «Յիսուս» նշանակում է փրկիլչ. այս անունը բատկացրեց նորան Գաբրիէլ հրեշտակապետը: Աստուծոյ Որդուն տրուեցաւ այդ անունը ծընելելուց առաջ, որովհետեւ ծնաւ մարգկանց փրկելու համար:— «Քրիստոս» բառը նշանակում է Օծեալ: Հին ժամանակ Օծեալ էին կոչւում երրայեցոց թագաւորները, քահանայապետները, քահանաներն և մարգարէները, որովհետեւ այդ կոչումներն ստանալու համար օծւում էին Սուրբ իւղով: Բայց Քրիստոս ոչ թէ նիւթական իւղով, այլ նորա մարդկացին ընութեանը Ս. Հոգու շնորհները լրիւ հաղորդուած լինելու սպատճառով կոչուեցաւ Օծեալ: Ս. յիսկ պատճառով ևս նորան են պատկանում գերադոյն աստիճանով մարգարէական կանխագիտութիւնը, քահանայապետական սրբութիւնն և արքայական կարողութիւնը: Նաև „Տէր“ ենք ասում Յիսուս Քրիստոսին, որովհետեւ նա ինքն է ճշմարիտ Աստուած, և Աստուծոյ անուններից մէկն է „Տէր“ բառը: Յիսուս Քրիստոսի աստուածութեան մատին Ս. Գիրքն ասում է. «Ի ոկքանէ էր բանն, և բանըն էր առ Աստուած և Աստուած էր բանն». Յովհ. Ս. 1: Յիսուս Քրիստոսն անուանւում է և միաձին, որ նշանակում է, թէ նա է միակ որդին Աստուծոյ՝ Զօր Աստուծոյ էութիւնից, և ըստ այս մի

է Հօր հետ ըստ էութեան։ Հետեաբար՝ անհամեմատ գերազանց է բոլոր Ա. հրեշտակներից և Ա. մարդկանցից, որոնք նոյնպէս կոչւում են Աստուծոյ որդիք, բայց ոչ ըստ էութեան, այլ ըստ շնորհաց։ Յովհ. Ա. 12։

Հանգանակի մէջ՝ Միածին, բառն առնուած է Ա. Գրքի հետեւեալ վկալութիւնից. Եւ բանն մարմին եղեւ և բնակեցաւ ի մեզ, և տեսաք զփառս նորա՝ զփառս իբրև զՄիածնի՝ առ ի Հօրէ, լի շնորհօք և ճշմարտութեամբ։ Յովհ. Ա. 14։ «ԳԱՍՏՈՒԱԾ ՈՉ ՈՔ ԵԹԵՍ ԵՐԵԿՔ, ԲԱՅց Միածին ՈՐԴԻ, ՈՐ Է Ի ՏՈՂ ՀՕՐ՝ ՆԱ ԱՊԱՄԵԱՋ։ ՅՈՎՀ. Ա. 18։ Հանգանակի մէջ՝ «ԾՆԵԱԼԻ Ի ՀՕՐԵ, ԽՈՍՔՈՎ ԱՊԱՄԵԼՈՎԱԳՆՈՒՄ Է ՈՐԴՈւ անձնական այն յատկութիւնը, որով նա տարբերում է Ա. Երբորդութեան միւս Անձերից։

Լոյս ի լուսոյ, ասելով՝ Ա. Հայրերը կամեցան նիւթական օրինակով կարելոյն չափ բացատրել Որդու ծնունդը Հօրից։ Արեգակից ծագող ճառագալթները լուսաւորում են երկիրս և կարծը նիւթերի հանդիպելով՝ բեկելելում և տարածում են ամեն ուղղութեամբ, բայց սոքա միշտ և ամեն տեղ միենոյն բազագրութիւնն ու յատկութիւնն ունին։ Այս նմանութեամբ՝ Հայր Աստուածն յաւետենական լոյս է (Ա. Յովհ. Ա. 5). նորանից ծընւում է Որդին Աստուած՝ որ նոյնպէս յաւիտենական լոյս է։ Որեմն և Հայրն Աստուած և Որդին

Աստուած են միակ յաւիտենական լոյսը։ Որդին է Հօր Աստուածալին էութիւնից ծագող անբաժան ճառագալթը։ Այս իսկ մտքով և ասուած է։ Աստուած յԱստուծոյ, այսինքն թէ ինչպէս Հայրն է ճշմարիտ Աստուած՝ նոյնպէս և Որդին։ Սորա համաձայն և Ա. Գիրքն ասում է. «Գիտեմք, եթէ Որդին Աստուծոյ եկն և ետ մեզ միտս. զի ծանիցուք զճշմարիտն և եմք ի ճշմարտին Որդուոյ նորա Յիսուսի Քրիստոսի, զի նա է ճշմարիտ Աստուած և կեանք յաւիտենականք»։ Ա. Յովհ. Ե. 20։

«ԾՆՈՒՆԴ և ոչ արարած»։ այս յաւելուածը դրուած է Արիսոսի աղանդը մերժելու համար. ուրովհետև նա ուսուցանում էր, թէ «Որդին արարած է» և ոչ արարիչ»։ Արիսոսի աղանդը հերքուցաւ նիկիոյ առաջին ժողովում։

«Նոյն ինքն ի բնութենէ Հօր, խօսքը նշանակում է, թէ Հօր հետ միւնուն աստուածալին յատկութիւնն ու էութիւնն ունի։ Ինքն Յիսուս ասաց իւր և Հօր մատին, թէ՝ «Ես և Հայր իմ մի եմք»։ Յովհ. Փ. 30։ Եւ որովհետև Հայրն և Որդին մի են՝ ուստի և Որդու համար ասում է Հանգանակը՝ թէ «Որով ամենայն ինչ եղեւ յերկինս և ի վերաց երկրի, երևելիք և աներւովթք»։ Որպէս և Ա. Գիրքն է վկայում, թէ. «Ամենայն ինչ նովաւ եղեւ»։ Յովհ. Ա. 3։

Գ. ՅՈՒՂԻԵՅ

Աստուած ամենուրեք է, այն է՝ թէ երկնքում
և թէ երկրիս վերալ, իբրև պարզ Հոգի: Բայց և
այնպէս Հանգանակի մէջ ասում ենք. «իշեւը ի
յնրկնից»: Նորա համար ենք այդպէս ասում, որ
մինչ չէր մարմնացել՝ երկրիս վերալ անտեսանելի
էր, բայց մարմնացաւ և երեւեցաւ մեզ մեր կեր-
պարանքով: Յիսուսի աշխարհ իշնելու մասին Ս.
Դիբքը վկայում է. «Եւ ոչ ոք ել յերկինս, եթէ ոչ՝
որ էջն յերկնից» Որդի մարդոյ, որ էն յերկինս:
Յովհ. Գ. 13:

Յիսուսի Քրիստոսի իշման նպատակի համար
ասած է. «Որ յաղագս մեր մարդկան և վասն մե-
րոյ փրկութեան»: Այսինքն՝ իշաւ նա, ոչ թէ որևէ
ազգի կամ մի քանի մարդկանց համար, այլ հա-
մայն մարդկային ազգի փրկութեան համար: Իշաւ
մեզ մեղքից, անէծքից և մահից փրկելու և մեզ
նորից արժանացնելու բուն նպատակին:

Ի՞նչ է մեղքը:—Ս. Դիբքի խօսքով՝ մեղքն է ա-
նօրէնութիւնը՝ օրինազանցութիւնը, կամ պատուիրա-
նալանցութիւնը, որով լ՛գտն՝ և մենք նորանով
զրկուեցանք բուն երջանկութիւնից: Ա. Յովհ. Գ.
4: Թէպէտեւ մարդս ստեղծուած էր Աստուածոյ
պատկերով և պիտի լինէր նորա պէտ սուրբ և ան-
մեղ՝ բայց մեր նախածնողները չըպահելով Աս-
տուածոյ պատուիրանը՝ մեղանչեցին և զրկուեցան

Աստուածոյ պատկերը լինելուց: Նոցա դէպի մեղքը
տանողն էր Աստուածոյ երեսից ընկած չար ոգին,
որ և կոչւում է փորձիչ, բանսարկու, դե, սատա-
նալ, չար հրեշտակ և այլն: Ս. Դիբքն ասում է՝
«Որ առնէ զմեղս ի սատանայէ է; զի իսկզբանէ
սատանալ մեղանչէ: Ա. Յովհ. Գ. 8: Իսկ Յիսուս Քը-
րիստոս յանդիմանելով կեղծաւոր փարիսեցիներին՝
ասաց. „Դուք ի հօրէ ի սատանայէ էք և զյանկու-
թիւնս հօրն ձերով կամիք առնել. զի նա մարդաս-
պան էր իսկզբանէ և ի ճշմարտութեան ոչ եկաց.
զի ոչ գոյ ճշմարտութիւն ի նմա. յորժամ խօսիցի
սուա՝ յիւրոց անտի խօսի, զի սուտէ և հայր նորա:
Յովհ. Ը. 44: Ա. Կաւասիկ այս չար սատանան, որի
մասին խօսում է Ս. Դիբքը, պատրելով մեր նա-
խածնողներին՝ հաւանեցրեց նոցա՝ աստուածալին
պատուիրանից դուրս գալ: Ի՞նչ էր այդ պատուի-
րանը:—Ա. Աստուած մեր նախածնողներին դնելով
փափկութեան դրախտի մէջ՝ ասաց, թէ բոլոր ծա-
ռերի պատուղներից կերէք, „բայց ի ծառոյն գիտու-
թեան բարոյ և չարի մի ուսաիցէք, զի յորում ա-
ւուր ուտիցէք ի նմանէ՝ մահու մեռանիցիք“: Ծննդ.
Բ. 17: Նոքա չըպահեցին այս պատուիրանն և կե-
րան այն արգելած պտղից: Իսկապէս մահուիթն
այն պտուղը չէր, այլ պտղի ճաշակմամբ Աս-
տուածոյ կամքի դէմ հակառակելու ոգին, և այս
էր մահու բուն առիթը: Ուրեմն անհնագանդութեան,
կամ հակառակութեան ոգին բաժանեց մարդուս

Ամտուծուց և նորա շնորհներից, որով և մարդս
զրկուեցաւ Սատուծոյ կենակյութիւնից ու օտարա-
ցաւ նորանից, կամ իսպառ մոռացաւ նորան, և այս
է „մահով մեռանիլ“ խօսքի բուն իմաստը։ Անունս
„Ծառ գիտութան ըարլոյ և չարի“ շատ յարմարա-
ւոր է, որովհետեւ մարդս այդ ծառով գործնա-
կանապէս ճանաչեց և իմացաւ, թէ որպիսի ըարիք
կայ Սատուծոյ կամքին հնազանդելու մէջ, և որ-
պիսի չարիք նորա կամքին հակառակելու մէջ։
Նոյն ծառի միջոցով մարդս պիտի ճանաչէր ըարին
և չարլ, ուստի և ամենագէտն Սատուած պատշա-
ճօրէն տուաւ այն ծառին նոյն անունը։ Ս. Գիրքը
պատմում է, թէ փորձիչն օձի կերպարանքով մօ-
տեցաւ Եւային դրախտի մէջ և հաւատացրեց նո-
րան, որ եթէ արգելուած սլտուզն ուտեն՝ կը ճա-
նաչեն բարին ու չարն և կը լինին իրբւ աստուած-
ներ։ Եւան գալթակղեցաւ այս խօսքերից և պտղի
գեղեցկութեամբ հրապուրուած՝ առաւ ու կերաւ
ինքը և Ս.դամին տուաւ, և նա ևս կերաւ։ Եւան
չըդիմագրեց փորձիչ գազանին և ոչ էլ Ս.դամ դի-
մագրեց Եւային։ Սուրբ Գրքից գիտենք, որ սատա-
նան այնքան էլ հզօր խելքի տէր չէ, որ ում կա-
մենայ յաղթէ։ Գիտենք, որ Յովե երանելին փշրեց
սատանալի բոլոր զէնքերն և տարաւ յաղթութիւնը.
Նոյնպէս շատ առաքինի մարդիկ չենթարկուեցան
սատանալի փորձութիւններին։ Ուստի եթէ Եւան
և Ադամն ևս կամենալին՝ կարող էին ի դերեւ հա-

նել նորա հնարները, բայց նոքա ի չարը գործ դը-
րին իրանց պարզեած անօնիշխանութիւնը։ Նոքա
իրանց անժմուժկալութեանն և իմաստափրութեանը
զոհեցին իրանց սիրող Ս.դարչի մի հասակ արգելա-
կան պատուիրանը, որ նոցա կամքը գօրացնելու-
համար էր տուել, ուստի և ընկան մեղքի տակ։
Մեղքին հետեւեցին անէծքն ու մանը։ Անէծքն է մեղ-
քի դատապարտութիւնը։ Սատուծոյ արդար դատա-
տանով՝ և նոյն մեղքից ծնուած, կամ յառաջացած
մանը աշխարհիս մէջ՝ ի պատիժ մարդկանց։ Սատ-
ուած ասաց Ս.դամին. „Անիծեալ լիցի երկիր ի
գործմ քո“։ Ծննդ. Գ. 17. Ս.դամալին մեղքից առա-
ջացաւ կրկնակի մահ. մարմնական՝ որ պատահում
է՝ երբ նորան կենդանացնող հօգին անջատում է,
և հոգեւոր՝ երբ հոգին զրկուում է՝ աստուածալին
շնորհներից, որոնք ոգեւօրում են նորան առաքինա-
կան գործերի մէջ։ Յայտնի բան է՝ հօգին չէ կա-
րող մեռնել մարմնի պէս, բայց նա ևս ունի իւր մահը։
Երբ մարմինը մեռնում է՝ կորցնում է իւր զգացո-
ղութիւնն և քայլքայում է, իսկ երբ հոգին է մեռ-
նում մեղքով՝ զրկուում է հօգեւոր լուսից, խնդու-
թիւնից և երջանկութիւնից, բայց չէ քայլքայում
և չէ ոչնչանում, այլ մնում է յուսահատ խաւարի,
տագնասէ և տանջանքի մէջ։ Պատուիրանազանցու-
թեան մեղքով միայն մեր նախածնողները չըմեռան,
այլ և բոլորս նոյն մեղքով վարակուած լինելով՝ մեռ-
նում ենք Ս.դամի և Եւայի պէս։ Մահկանացու նա-

խածնողներից, բնականաբար, յառաջացաւ մահկանացու սերունդ: Ալս մասին Ս. Գիրքն ասում է. „Զի որպէս ի միոջէ մարդոյ մեղք յաշխարհ մտին և ի մեղաց անտի մահ, և այնպէս յամենայն մարդիկ տարածեցաւ մահ՝ որով ամենեքին մեղան“: Հոռովմ, Ե. 12: Անշուշտ Ադամն ու Եւան նոյն պտղի ճաշակմամբ՝ ճաշակեցին հոգմւոր մնահ ևս՝ Աստուծոյ անդարձ վճռին համեմատ: Հոգեոր մահու ճաշակմամբ՝ մեռաւ նոցա մէջ սկզբնական սըրբութեան, մաքրութեան և ճշմարտասիրութեան ոգին, որի փոխարէն նոցա էլութեանը տիրեց մի այլ զգացմունք, այլ մտածմունք, այլ տեսակի դատողութիւն և այլ ոգի, որոնք նոցա առաջուայլ յատկութիւններին բոլորովին հակառակն էին: Աստուած ջրկամեցաւ նոցա իսկոյն և եթ մամնական մահով մեռցնել. բայց հրաման արձակեց մահկանացութեան՝ այս խօսքերով. „Հող էիր, և ի հող դարձցիս“: Ծննդ. Գ. 19: Աստուած չկամենալով մեղաւոր մարդոց թողնել դրախտի մէջ, որպէս զի Կենաց ծառի պտղից չուտեն ու նոյն մեղքի մէջ շապրեն յաւիտեան՝ հանեց նոցա այն տեղից: Աստուած ասաց. „Արդ՝ գուցէ ձգիցէ զձեռն և առնուցու ի ծառոյն կենաց, ուտիցէ եւ կեցցէ յաւիտեան“: Եւ եհան արձակեաց զնա Տէր Աստուած ի դրախտէ անտի փափկութեան՝ զործել զերկիր՝ ուստի առաւ: Ծննդ. Գ. 23: Հանելով նախածընողներին փափկութեան դրախտից և բնակեցնելով

նորա դիմացը՝ „Հրամայեաց Քրօքէից... շուրջանակաւ պահել զճամսապարհս ծառոյն կենաց“: Ծննդ. Գ. 24: Ուրեմն՝ մեղանչելուց յետոյ՝ այլ ևս չըկերան կենաց ծառի պտուղն և մնացին մահկանացու: Թրախտից դուրս հանուելուց յետոյ՝ Ադամն ու Եւան ունեցան երկու որդի՝ Կային և Հաբէլ, որոց առաջինն երկրագործ էր և երկրորդը խաշնարած: Կայինը Հաբէլի ջեռմեռանդութեանը նախանձելով՝ սպանեց և տրտմութեան մէջ ձգեց ծնողներին: Գորանից յետոյ՝ Ադամն ունեցաւ մի այլ որդի, որին անուանեց Սէթ: Ուրեմն Ս. Գիրքը սովորցնում է մեզ, թէ նախ՝ Ադամն ու Եւան՝ կամ մարդս ստեղծուած էր լինել 1, ըստ մարմնոյ և 2, ըստ հոգւոյ անմահ՝ երկրորդ՝ պատուիրանպանցութեամբ մարմնով մահկանացու եղաւ, իսկ հոգին պահելով հանդերձ իւր անմահութիւնը՝ կորցրեց սակայն իւր մզքբնական բարի բարի յատկութիւնները և բովանդակ անմեղութիւնը ջնջուեցաւ և երրորդ՝ այնուհետև Ադամն „իւր կերպարանքն ու պատկերն“ ունեցող զաւակներ ունեցաւ. այսինքն թէ՝ իւր մարմնական եւ հոգեւոր յատկութիւններն ունեցող զաւակներ: Զաւակները ծննդեամբ ժառանգեցին իրանց ծնողաց բոլոր բնական և հոգեւոր յատկութիւնները: Այսպէս և մենք, որ նորա զաւակներն ենք՝ ունինք նորա մարմնի պէս մահկանացու մարմին, նորա հոգու պէս անմահ, բայց մեղսակիր հոգի, նորա մտքի պէս սահմանափակ միտք, նորա

կամքի պէս անհաստատ և դէպի չարը հակամէտ
կամք և աղճ. ըստ այսմ և Ս. Գիրքն Ադամի որ-
դոց՝ ամինքն բոլոր մարդոց համար ասում է, թէ
Միտք մարդոյ հաստատեալ են ի խնամն չարի
ի մանկութենէ իւրմէ։ Ծննդ. Է. 21։ Հռովմ. Բ. 7։
Որովհետեւ Աստուած մարդուն ստեղծել էր
բուն յափտենական կեանքի և երջանկութեան հա-
մար, իսկ մարդու պատուիրանազանցութեան մահա-
ցու մեղքով զբկուեցաւ այդ բարիքը ժառանգելուց,
և որովհետեւ ոչ ինքն Ադամ և ոչ մի արարած չէր
կարող վրկել մարդուն այն մեղքից և վերստին ըն-
դունակ դարձնել ժառանգելու յափտենական կեան-
քի բարիքը, ուստի արդարադատ ու բարերարն Աստ-
ուած, թէ և դատապարտեց Ադամի յանցանքը, բայց
միենոյն ժամանակ չըլապաղեց խոստանալ փղկու-
թեան յոյսն եւս։ Այս յոյսն էր «կնոջ զաւակը»,
որ պիտի ջախջախէր օձի, այսինքն՝ մեղաց ըուն
պատճառի գլուխը։ Ուրիշ խօսքով՝ խոստացեալ
էր Յիսուս Քրիստոս, որ պիտի ջնջէր սա-
տանալի իշխանութիւնն և մարդկանց ազատէր մեղ-
քից, անէծքից և մահից։ Յիսուս Քրիստոս կոչում
է «կնոջ զաւակ», որովհետեւ ծնուեց Ս. Կոյս Մա-
րիամից Ս. Հոգու զօրութեամբ։ Այս պատճառով
կոչում է և կուսածին։ Փրկիչ ուղարկելու խոս-
տումն շատ օգտակար եղաւ, որովհետեւ այն խոստ-
ման ժամանակից սկսած՝ մարդկէկ կարող էին վրկա-
րար յուսով հաւատուալ գալոց փրկչին, որպէս մենք

հաւատում ենք հանդերձեալին։ Թէպէտեւ շատերը
մոռացան այն խոսքումն, բայց հաւատացողներ
միշտ կային, թէև սակաւաթիւ։ Ս. Աստուած իւր առաջին խոստումն շատ ան-
գամ կրկնեց նահապետներին, օրինակ՝ Աբրահամին
սասց, «Օքնեսցին ի զաւակի քում ամենամ ազ-
գըք երկրի։ Ծննդ. Ի. 18։ Դաւթին ևս խոստացաւ նոյն բանը հետևեալ խօսքով։ Հաւա-
տարիմ լիցի անուն նորա և արքայութիւնն նորա
առաջի իմ մինչև ցյաւիտեան։ Բ. թագ. Ե. 16։
«Արմնացաւ» ասելով՝ հասկանում ենք, որ
Աստուածոյ Որդին, կամ Բանն առաւ իւր վրայ մարդ-
կալին մարմին՝ առանց մեղաց։ Ըստ այս՝ թէ «և
բանն մարմին եղեւ»։ Յովհ. Ս. 14, և թէ «Զի
զայն, որ ոչն գիտէր զմենու, վասն մեր մեղս արար,
զի մեք եղեցուք նովաւ արդարութիւն Աստուածոյ։
Բ. Կորնթ. Ե. 21։

Հանգանակի մէջ «մարմնացաւ» խօսքին իսկոյն
և եթ հետևում է «մարդացաւ» խօսքը, որպէս զի
ոչ ոք չըկարծէ, թէ միմիայն զգեցաւ մարդկալին
մարմին և այլ ոչինչ, այլ հաւատանք, որ նա ըս-
տացաւ մարդկալին բոլոր յատկութիւններն ևս, թէ
մարմինը, թէ հոգին, թէ միտքն և թէ բոլոր
կերպերը՝ բացի մեղքից՝ իրօք և կատարելապէս,
և ոչ թէ կարծիքով, կամ երեւոյթով։ Այս մասին
Ս. Պօղոս առաքեալն ասում է. «Զի մի է Աստուած
և մի միջնորդ Աստուածոյ և մարդկան՝ մարդն Յի-

սուս Քրիստոս։ Ա. Տիմ. Բ. 5։ Ապա ուրեմն՝ մի և նոյն Քրիստոսի միակ անձի մէջ անքաժան և անշփոթապէս միացած են երկու ընութիւնն՝ Աստուածալին և մարդկային, և ըստ այսօն երկու բնութեանց՝ նաև երկու կամք և երկու ներգործութիւննք, բայց միայն մի Անձն, որ է Անձն Աստուածամարդոյ։ „Քրիստոս“ անունը չէ նշանակում միմիայն Աստուած, կամ միմիայն մարդ, այլ երկու միասին առած—Աստուած և մարդ։ Այս պատճառով մեր եկեղեցական Հաւատամքը՝ դաւանում է այսպէս։ «Եղեւ Աստուածն կտտարեալ՝ մարդ կատարեալ, հոգով, մտօք և մարմնով, մի անձն, մի դէմ։» Ժամազիրը։

Մեր եկեղեցու ուղիղ դաւանութեան համեմատ՝ կարելի է ասել և՛ մի ընութիւն և՛ երկու ընութիւնն ունէր Քրիստոս։ Երկու ընութիւնն ասելով՝ խոստովանում ենք Նորա աստուածային և մարդկային բնութիւննը. իսկ մի բնութիւնն ասելով՝ խոստովանում ենք երկու բնութեանց անքաժան և անշփոթ միաւորութիւննը։ Ինչպէս որ Աստուածութիւնն ու մարդկութիւննը միաւորուելով եղաւ մի աստուածալին Անձն, մի Դէմ, մի Քրիստոս, այսպէս և Բանի ընութիւնն և մարդի ընութիւնն միաւորելով՝ եղաւ մի ընութիւն՝ անքաժաննելի եւ անշփոթ։ Նոյն միաւորութեան մէջ իւրաքանչիւր բնութիւնը պահպանեց իւր իսկական յատկութիւնն անկորուստ, անայլայլելի և անփոփոխ։

Աստուածորդու մարդացման մասին Սուրբ Ղուկասու աւետարանն այսպէս է պատմում՝ թէ, երբ Աստուծոյ հրեշտակն աւելուց կոյս Մարիամին Յիսուսի լրացման անօրէնութիւնը՝ Կոյսն ասաց. «Զիամրդ լինիցի ինձ ալդ, քանզի զայր ոչ գիտեմ։ Սուրան հրեշտակը պատասխանեց. «Հոգին սուրբ եկեսցէ ի Քեզ. և զօրութիւն բարձրելով հովանի լիցի ի վերայ Քո. քանզի և որ ծնաներցն է ի Քէն, Սուրբ է և Որդի. Աստուծոյ կոչեսցի։ Ղուկ. Ա. 34. 35.

Մարիամ Սուրբ Կոյսն Աքրահամի և Թաւթիցն էր, որից ծնուելու էր Աստուծոյ խոստացած Փրկիչը։ Նոյն ցեղիցն էր և արդար Յովսէփը, որ նշանուած էր Մարիամի հետ, որպէս զի լինի Կոյսի պահապանն և ոչ ալը, կամ ամուսինը, որովհետեւ Մարիամը նուիրել էր իւր անձն Աստուծուն և ուխտել էր միշտ կոյս մնալ։ Այս ճշմարտութիւննը յայտնի է Յովսէփին եղած Տեսիլքից։ Յովսէփին արդար լինելով՝ երբ նկատեց Մարիամի լրութիւնը՝ յուզուեցաւ և «խորհեցաւ լրելեալն արձակել զնա։ Եւ մինչդեռ նա զայս ածէր զմտաւ՝ ահա հրեշտակ Տետոն ի տեսլիան երևեցաւ նմա և ասէ. Յովսէփ, որդի Թաւթի, մի երկնչիք առնուլ առ քեզ զՄարիամ կին քո, քանզի ոու ինմայն ծնեալ է, իչոգույն Սրբոյ է։ Մատթ. Ա. 18—20։ «Եւ զարթուցեալ Յովսէփ ի քնոյ անտի՝ արար որպէս հրամայեաց նմա հրեշտակ Տետոն. Եւ էտու

յինքն գկինն իւր։ Եւ ոչ գիտէր զնա։ մինչեւ ծնաւ զորդին իւր զանդրանիկ և կոչեաց զանուն նորա Յիսուս։ Մատթ. Ա. 24, 25։ Հայաստանեալց եկեղեցին ուղղափառապէս գաւանում է Կոյս Մարիամին Աստուածածին և միշտ Կոյս։ Ս. գաւանութիւնը հիմնուած է Եսայի մարգարէի հետևեալ խօսքի վրայ՝ թէ։ Ահա Կոյս լուսցի և ծնցի որդի և կոչեսցեն զանուն նորա Էմմանուէլ։ Եսայ. Ե. 14։ Էմմանուէլ՝ նշանակում է Աստուած մեզ հետ։ Նաև Յովհաննէս Մկրտչի մայրը՝ Ս. Եղիսաբեթ սուրբ Հոգուով լցուած՝ անուանեց Կոյս Մարիամին „Մար Տեառն“՝ ասելով բարձրաձայն։ Եւ ուստի է ինձ այս, զի եկեսցէ մայր Տեառն իմոյ առ իս։ Ղուկ. Ս. 43։ Մար Տեառն, կամ մայր Աստուածոյ և կամ Աստուածածին՝ համանիշ բառեր են։ Ի՞նչ մտքով պէտք է Կոյս Մարիամին անուանել Աստուածածին, — Թէև Յիսուս Քրիստոս ծնուեցաւ նորանից ոչ ըստ Աստուածութեանն, որ լաւիտենից էր, այլ միայն ըստ մարդկութեան՝ սակայն արժանի է կոչուիլ Աստուածածին նորա համար, որ նորանից ծնուածն է ծշմարիտ Աստուած, որին երկրագում են երկնաւորներն և երկրաւորները։ Այս մտքով և եկեղեցին պատում է նորան և համարում Քերովբէից և Սերովբէից բարձր։ Այս մեծ սկալուուի համար է, որ եկեղեցին նորան բոլոր

սուրբերից նախակարգելով՝ ասում է. „Բարեխօն ունիմք սուրբ զՄարիամ՝ զԱստուածածինն, զՓառաւորեալ և օրհնեալ միշտ սուրբ Կոյսն, սուրբ զՅտեփաննոս նախավկայն, սուրբ զառաքեալսն և զմարգարէսն, զարի և զլաղթող սուրբ զվկայն և զմեծ խոստովանողն Քրիստոսի զհարբարեալն մեր՝ զսուրբն Գրիգորիոս՝ Լուսաւորիչն Հայաստանեալց աշխարհի։“ Սուրբ Աստուած, Երգին կցում ենք նաև՝ աւանդութեամբ Թովմայ առաքեալին վերագրած Հրաշալի մաղթանքս, „Փառաւորեալ և օրհնեալ միշտ սուրբ Կոյս Աստուածածին Մարիամն մայր Քրիստոսի, մատո՛ զաղաշանս մեր՝ Մրդւոյ Քո և Աստուծոյ մերոյ։“ Աստուածալին նախատեսութիւնը բազմաթիւ նախագուշակութիւններով հետզհետէ նախապատրաստեց մարդկանց ընդունել գալոց Փրկչին՝ նախապէս իւր մարդարէների ձեռքով որոշելով նորա երկրաւոր կենաց հանգամանքներն ու պարագաները։ Օրինակ՝ Եսայի մարդարէն նախաձայնեց, թէ՝ Կոյսից պիտի ծնուի Փրկիչը։ Եսայ. Ե. 14։ Միքիա մարդարէն գուշակեց, թէ՝ Փրկիչը ծնուելու է Բեթղեհէմում։ Այս գուշակութիւնը հասկացել էին հրէաները լառաջ քան Քրիստոսի ծնունդը։ Մատթ. Բ. 5, 6։ Մաղարիտ մարդարէն՝ Երաւաղէմի Երկրորդ Տաճարը շինելուց իւտոյ՝ մարդարէացաւ, թէ՝ Փրկչի

գալլ մօտ է, և թէ կը գալ այս Տաճարը, թէ նորան
նախընթաց կը լինի մէկը՝ Եղիալի նման, որով
պարզ ցոյց առուեցաւ Յովհաննէս Մկրտչի նախըն-
թացութիւնը: Մաղաք, Թ. 1. Թ. 5.

Զաքարիա մարգարէն գուշակեց Փրկչի հան-
դիսաւոր մուտն Երուսաղէմ: Զաքարիա. Թ. 9:
Եսայի մարգարէն զարմանալի պարզութեամբ
կանխաբաննեց Փրկչի չարչարանքը: ԾԳ:

Դաւիթ մարգարէն պատկերագրեց Փրկչի չար-
չարանքը խաչի վրայ՝ այնպիսի ճշտութեամբ, որ ա-
սես, թէ նա այն գրեց՝ նոյն խաչի մօտ: Սաղմ. ԻԲ:

Դանիէլ մարգարէն եօթանասուն եօթներորդ-
ներով 490 տարի յառաջ գուշակեց Փրկչի յայտնու-
թիւնը, կամ երկումն, Նորա մահը խաչի վրայ, սո-
րան հետեղ տաճարի և Երուսաղէմի քայլայումն
և Հին ուխտի զոհերի դադարումը: Դանիէլ. Թ.

Աշխարհ եկած Յիսուս մանկան ճանաչեցին
շատերն այլ և այլ սքանչելիքներով և նշաններով:
Օրինակ՝ արևելքան մոգերը, կամ իմաստունները ճա-
նաչեցին նորան մի աստղի միջոցով, որ երևեցաւ
նորա ծննդից առաջ արևելեան կողմից: Իեթղէ հիմի
հովիւները ճանաչեցին նորան հրեշտակների այս
խօսքով՝ թէ Շնաւ ձեզ այսօր Փրկչ, որ է օ-
ծեալ տէր, ի քաղաքի Դաւիթի: Ղուկ. Բ. 11: Սի-
մէօն ծերունին և Աննա մարգարէուհին ճանաչե-
ցին նորան Սուրբ Հոգու մի առանձին ազդմամբը:
Երբ մանուկ Յիսուսը դարձաւ քառոսնօրեայ, տար-

ուեցաւ տաճարը: Այս ժամանակ Սիմէօնը նորան
իւր գիրկն առաւ, օրհնաբանեց Աստծուն և ասաց.
«Արդ արձակես զծառալս Իոն, Տէր, ըստ բանի քրում
ի խաղաղութիւն, զի տեսին աչք իմ զիթկութիւնն
Քո, զոր պատրաստեցեր առաջի ամենայն ժողովրդոց.
լուսի յալտնութիւն հեթանոսաց, և փառա ժողովրդ-
դեան քում Խրակէլի: Ղուկ, Բ. 29—33:

Ծերունին Սիմէօն ալր սքանչելի գոհաբա-
նականն Աստծուն մատուցանելուց յետոյ՝ դարձաւ
գէպի Կոլսն և ասաց մանկան համար. „Ահա սա
կալ ի գլորումն և ի կանգնումն բազմաց ի մէջ
Խրակէլի, և ի նշան հակառակութեան: Եւ ընդ Քո
խկ անձն անցցէ սուր, զի յայտնեսցին ի բազում
սրտից խորհուրդք“: Ղուկ. Բ. 34—36.

Յովհաննէս Մկրտիչը ճանաչեց նորան Յորդա-
նան գետի մէջ մկրտելիս՝ մի զարմանալի յայտնու-
թեամբ, այն է՝ Սուրբ Հոգու աղաւնակերպ իջմամբ
Փրկչի վերալ և Հօր ձայնովն երկնքից՝ թէ „Դա է
որդի իմ սիրելի, ընդ որ հաճեցալ“: Մատֆ. Գ.
17: Այսպիսի մի ձայն նորա մասին լսելի եղաւ նաև
Պետրոսին, Յակովբոսին և Յովհաննէսին, երբ այս
առաքեալները Թափոր լերան վերալ ներկալ եին
Փրկչի հրաշալի պայծառակերպութեանը: Դա
է որդին իմ սիրելի, դմ'ա լուարուք, Մարկ.
Թ. 6:

Բացի սոցանից՝ շատ շատերը ճանաչեցին նո-
րան՝ նորա վարդապետութեան գերազանցութեամբ,

մանաւանդ՝ գործած հրաշքներով և նշաններով։
Հրաշագործութեամբ Յիսուս բժշկեց անքու-
ժել հիւանդութիւններով բռնուած մարդոց և այ-
սահաըներին։ Նա բժշկում էր խօսքով միայն, կամ
ձեռքի ջօշավամբ, և մինչև անդամ՝ երբ նոքա-
դիպչում էին նորա հանդերձի ծալին բժշկում
էին։ Մի անգամ հինգ և մի այլ անգամ չորս հա-
ցով լագեցրեց անապատում մի քանի հազար մար-
դոց։ Զքերի վերայ ման եկաւ, իբրև ցամաքի վե-
րայ և լոկ խօսքով դադարեցրեց մըրիկը։ Յարուց
մեռեալներ՝ օրինակ՝ Նալինի ալիք կնոջ որդուն,
Յալրոսի աղջկանն և Ղազարոսին՝ մեռնելուց չորս
օր յետով։

Որովհետև Աստուածորդին մեր փրկութեան
համար ծնուեցաւ, ուստի պէտք է իմանալ, թէ նա
ինչպէս փրկեց մեզ։ — Նա մեզ փրկեց իւր վարդա-
պետութեամբը, կեանքովը, մահովն եւ յարու-
թեամբը։ Քրիստոսի վարդապետութիւնն Աստուծոյ
թագաւորութեան Աւետարանն էր, որ է ուսումն
յաւիտենական երջանկութեան, որ և այժմ քալոգ-
ւում է Քրիստոսի եկեղեցու մէջ ամեն տեղ։ Մարկ.
Ա. 14—15։ Քրիստոսի վարդապետութիւնը մեզ
համար դառնում է փրկարար՝ երբ ընդունում ենք
նորան ճշմարիտ հոգւով և մեր կեանքը վարում ենք
նորա համեմատ։ այլապէս՝ նա փրկարար չէ լինում։

Քրիստոսի Շշմարիտ խօսքը դառնում է հա-
ւատացեալ քրիստոնէի մէջ սուրբ և անմահ կեան-

քի սերմն, որ վրկարար և կենդանարար զօրու-
թիւն ունի։ Եւ Պետրոս առաքեալի խօսքով՝ ճշմա-
րիտ քրիստոնեաներն են՝ „Ծնեալք վերատին ոչ յա-
պականութեան սերմանէն, այլ յանապականացուէն՝
կենդանի և մշտնջենական բանիւն Աթուծուծոյ“։ Ա.
Պետր. Ա. 23։ Իսկ Յիսուս Քրիստոսի կեանքը մեզ
համար կը լինի փրկարար՝ երբ նորան նմանող լի-
նէինք, որպէս ինքն է ասում։ „Եթէ ոք զիս պաշ-
տեսցէ, զկնի իմ եկեսցէ։ և ուր եսն եմ՝ անդ և
պաշտօնեալն իմ եղիցի։ Յովհ. մբ. 26։

Յ. ՅՕԴՈՒԽԱԺ:

Ինչու պէտք է Յիսուս Քրիստոս խաչուքը,
քանի որ նորա վարդապետութիւնն ու գործերը
պատուի եւ մեծարանքի զգացումն պէտք է յա-
րուցանէին ամենի մէջ դէպի նա։ — Թէև այսպէս
պիտի լինէր՝ բայց Հրէից ծերերն ու գլիբները սաս-
տիկ ատում էին նորան, որովհետև նա յանդիմա-
նում էր նոցա սառութիւնն ու անօրէն կենցաղա-
վարութիւնը։ Այն կեղծ օրինականները նախանձում
էին նորան, որովհետև ժողովաւրդը նորան աւելի
էր մեծարում և պատւում։ Նորա հրաշագործու-
թիւնների ու վարդապետութեան համար, քան թէ
իրանց. այս իսկ պատճառով նորան զըլարտեցին և

մահի դատապարուեցին: Նոքա անմեղին մատնեցին հեթանոս դատաւորի՝ Պոնտացի Պիղատոսի ձեռքը, որ կարգուած էր Հռովմայեցաց կողմից կուսակալ Յուղակի երկրին: Արտեղ կատարուեցաւ Յակովի մարդարէական գուշակութիւնը, թէ. «Մի պակասեցի իշխան ի Յուղայ և մի պետ լերանաց նորա, մինչև եկեսցէ նա, որոյ իւրն է հանդերձեալքն. և նա է ալլովալութիւն հեթանոսաց: Ծննդ. Խթ. 10:

Հանդանակի այս խօսքերը «չարչարեալ, „խաչեալ“ «թաղեալ, դրուած են ցոյց տալու համար, թէ ինչպէս որ մարդարէները նախաճառել էին այդ մասին՝ լրիւկատարուեցան: Տես Ղուկ. Խթ. 25, 26: Ա. Կորնթ. ԺԵ. 3. 4: Այլ և սոյն դաւանութեամբ եկեղեցին հերքում է այն ամեն աղանդաւորների սուտ վարդապետութիւնը, որոնք կարծում էին, թէ Յիսուսի մարմինը, չարչարանքն և մահը միայն առ աջօք՝ երեսութական էին, և ոչ իսկական, ապա թէ ոչ, ասում էին՝ նա չէր կարող յարութիւն առնել և համբառնալ: Ա. Գրքից յայտնի է սակայն, որ նորան խաչող Հրէից ծերերն ու քահանայապետները պահապաններ անդամ դրին նորա գերեզմանի մօտ և այն կնքեցին իրանց կնիքներովք:

Բայց ինչպէս կարողացան չարչարել և մեռցնել Յիսուսին, քանի որ նա Աստուած էր: — Նա չարչարուեցաւ, խաչուեցաւ ու մեռաւ ոչ թէ իւր Աստուածութեամբը, որ անչարչարելի է և անմահ, այլ իւր մարդկութեամբը: Եւ չարչարուեցաւ ու

մեռաւ ոչ այն պատճառով՝ որ չէր կարող ապատուիլ դոցանից, եթի կամենար՝ այլ այն պատճառով միայն՝ որ ինքն էր այդ կամենում, ինքն էր այդպէս տնօրինել ի յաւիտենից. ինքն էր այդ ամենը մարդարէների ձեռքով առաջուց յալտնել մարդկութեան և ահա ինքն է առում, թէ „Ես դնեմ զանձն իմ, զի միւս անգամ առից զնա: Ոչ ոք հանէ զնա լինէն, այլ ես դնեմ զնա անժամը իմով. իշխանութիւն ունիմ՝ դնել զնա, եւ իշխանութիւն ունիմ՝ միւս անզամ՝ առնորւ զնա: Յովհ. Փ. 17—18: Հրէայք այս խօսքերն ի դերե հանելու մըտքով, նախ՝ Յիսուսի մասն ստուգեցին ամենալն ճշտութեամբ, և ապա թաղեցին: Մարկոս, ԺԵ. 44: Յովհաննէս, ԺԹ. ՅՅ:

Յիսուս իւր մահով մեզ ազատեց, փրկեց մեղքելից, անէծքից և հոգեւոր մահից:

Մեղքերից ազատելու մասին Ս. Գիրքն ասում է. „Որով (Յիսուսով) ունիմք զփրկութիւն ի ձեռն արեան նորա, զթողութիւն մեղաց ըստ մեծութեան շնորհաց իւրոց“: Եփես. Ա. 7:

Անէծքից ազատելու մասին ասում է. „Քը յիսուսոս գնեաց զմեզ յանիծից օրինացն, եղեալ վասն մեր անէծք“: Գաղատ. Գ. 13:

Մահից ազատելու մասին. „Որդ՝ որովհետեւ մանկունք հաղորդեցին արեան և մարմնոյ, և ինքն իսկ մերձաւորութեամբ կցորդ եղեւ նոցունց, զի մահուն իւրով խափանեսցէ զայն, որ զիշխա-

նութենմահու ունէր՝ ալսինքն է զստտանալ, և
ապրեցուացէ զախոսիկ, որ մահուն երկիւղիւ հա-
նտապազ կէին վտարանդեալք ի ծառայութիւն։
Երբ Բ. 14—15:

Այժմ տեսնենք, թէ Յիսուս Խը մահով ինչ-
պէս է մեզ ազատում մեղքերից, անէծքից և մա-
հից։ Որպէս զի այս գաղտնիքին, կամ խորհրդին
պատշաճաւոր կերպով կարողանանք հաւատալ։ Աս-
տուծոյ խօսքը մեզ խելամուտ է անում անչափ,
որչափ որ խելամտել կարող ենք համեմատելով Յի-
սուսին Ադամի հետ։ Բնականաբար՝ Ադամն է սկիզբն
և գլուխ համայն մարդկութեան, որ նորանից ծա-
գելով, ժառանգեց նորա բոլոր էութիւնը։ Խոկ Յի-
սուս Քրիստոս, որի մէջ Աստուածութիւնը միացաւ
մարդկութեան հետ՝ եղաւ նոր և ամենազօր գլուխ
և սկիզբն մարդկութեան, որին միացնում է իւր
հետ կենդանի հաւատի միջոցով։ Ուստի ինչպէս որ
լանձն Ադամալ եղանք մեղսակիր, արժանացանք
անէծքի և մահի նոյնպէս և լանձն Յիսուս Քրիս-
տոսի ազատում ենք մեղքից, անէծքից եւ մահից։
Նորա կամաւոր չարչարանքն ու մահը մեզ համար
անփոխարինելի լինելով՝ իբրև Անմեղի և Աստուա-
ծամարդի մահ՝ միւնոյն ժամանակ արժանաւոր և
վայելուց հատուցումն է աստուածալին արդարու-
թեան, որ մեզ մահի դատապարտեց մեղքի պատ-
ճառով։ Նա իւր դթութեամբն ու ողորմութեամբը՝
իւր չարչարանքովն ու մահովը զնեց մեզ մահի դա-

տապարտութիւնից, շնորհեց մեղաւորներին մեղ-
քերին թողութիւն և շնորհաց միջոցներ՝ մեղքե-
րին և մահին լազմթելու համար։ Այս բալորը հաս-
տատուած է Աստուծոյ խօսքովը, թէ կոհանալ
(պարտէ) զհօրէ, ..որ վրկեացն զմեզ յիշլսնութենէ
խաւարի, և վոխեաց զմեզ լարքալութիւն Որդուն
իւրու սիրելուու և Եւ նովաւ (հաճեցաւ) հաշտեցու-
ցանել զամենայն ի նոյն, արար խալաղութիւն
արեսամը խաչին իւրոյ, որ ինչ վերկի և որ ինչ
երկինս։ Եւ զձեզ Հաշտեցոյ, և ի ձեռն մնան
ուսն իւրոյ՝ լանդիման կացուցանել զձեզ առուրս
և անբիծ և անարատս առաջի նորա (չօր), եթէ
կալցէք ի հաւատոն արմասացեալք և Հաստու-
ածալք և անշարժք ի լուսոյ Աւետարանին։ Զիրո-
հուրդն որ ծածկեալ էր ի լաւիտեանցն և լազգաց,
որ ալժմ լաւոնեցաւ սրբոց խրոց, որոց կամեցաւ
Աստուած ցուցանել թէ զինչ է մեծութիւն փա-
ռաց խորհրդոյն նորա ի հեթանաս, որ է Քրիս-
տոս ի ձեզ՝ Յոյսն վառաց։ Կող Ա. Գլ. Ճ. Ճ.
”Եւ զձեզ, որ երգեմն մեռեալն էիր ի
մեղս... կենդանացոյց լանձին իւրում, շնորհեաց
մեզ զամենայն լանցանա մեր և ջնջեաց զձեռա-
գեր մերու հակառակութեանն հրամանօքն իւրովք։
Որ կայր մեզ հակառակ՝ երարձ զայն ի միջոյ և
բնւեռեաց ընդ խաչափային։ Մերկեաց զիշխա-
նութիւնս և զպետութիւնս. լայտ լանդիման խայ-
տառակեաց նշանակեալ զնոսա յանօին իւրում՝ ի

յարութեան՝ իւրում։ Առղոս. Բ. 13—16։
 Արգեօք ամեն մարդի համար էր Քրիստոսի
 չարչարանքն և մահը, թէ մի որոշ դասակարգի,
 կամ ազգի համար։ Այս մասին Ս. Գիլքն ուսու-
 ցանում է, թէ ամենի համար նա զոհեց իրան և
 ամենին պարզեց շնորհ և փրկութիւն, բայց այս
 շնորհից և փրկութիւնից նոքա են միայն օգտում,
 որոնք յօժարակամ մասնակցում են նորա չարչա-
 րանքներին։ «կերպարանակից լինելով նորա
 մահին»։ Փիլ. Գ. 10։
 Ի՞նչպէս կարող ենք մասնակից լինել նորա
 չարչարանքներին և մահին, եթէ ոչ կենդանի հա-
 ւատով և Ս. խորհուրդների միջոցով, որոց մէջ
 ծածկուած ու կնքուած է Յիսուս Քրիստոսի փրկա-
 րար չարչարանքների և մահի զօրութիւնը, և վեր-
 ջապէս մեր մարմնի կամքը դնելով նորա կամքի կա-
 ռավարութեան տակ։ Այս մասին ասում է Ս. Պօղոս
 առաքեալը. «Զի ես օրինօք օրինացն մեռալ, զի
 Աստուծոյ կեցից և ընդ Քրիստոսի ի խաչ ելից...
 այլ որ այժմս կեամ մարմնով Հաւատովք Որդւոյն
 Աստուծոյ կեամ»։ Գաղատ. Բ. 19, 20. „Եթէ ոչ
 գիտէք, զի որ միանդամ մկրտեցաք ի Քրիստոս Յի-
 սուս՝ ի մահ անդը նորա մկրտեցաք»։ Հոռմ. Զ. 3։
 «Իսկ որ քրիստոսեանքն են, զմարմինս իւրեանց
 ի խաչ հանեն՝ կարեօքն և ցանկութեամբ հան-
 գերձ»։ Գաղատ. Ե. 24։
 Ի՞նչ է նշանակում «մարմինը խաչել կարեօք

եւ ցանկութեամբ»։ Այդ կարելի է, անել ժուժ-
 կալ լինելով կրքերի և ցանկութիւնների մէջ։ Օրի-
 նակ՝ երե քարկութիւնը դրդում է մեզ մեր թշնա-
 մուն չարաբանել և նորան չարութիւն անել՝ պէտք
 է ամենայն ճիգն գործ դնել այս զգացմունքը զայե-
 լու։ Ինչպէս Յիսուս Քրիստոս խաչի վրայից օրհնում
 էր իւր թշնամիներին՝ մենք ևս պէտք է մեր թշն-
 ամիներին օրհնենք և ներենք. ահա սորանով կա-
 րող ենք խաչել մեր բարկութեան կիրքը, և այն
 այսպէս։

Յիսուս Քրիստոս իւր յարութեամբը տուաւ մեզ
 ամենամեծ ապացուց, թէ իւր չարչարանքն ու մահը
 փրկարար են մարդկանցս համար, և սորանով հաս-
 տատուն հիմք դրաւ մեր երանական յարութեան։
 «Ալ արդ՝ Քրիստոս յարուցեալ է ի մեռելոց, առա-
 ջին պտուղն ննջեցելոց։ Քանզի մարդով եղեւ մտհ,
 և մարդով յարութիւն մեռելոց։ Որպէս Սղամաւն
 ամենեքին մեռանին՝ նոյնպէս և Քրիստոսիւ ամե-
 ներին կենդանասցին, իւրաքանչիւր յիւրում կար-
 գի, նախ՝ Քրիստոս (յարեաւ), և ապա Քրիստոսեանք
 (յարիցեն) ի գալստեան նորա»։ Ա. Կորնթ. ՓԵ.
 20—24։

Երեքօրեալ թաղման միջոցին, քրիստոնէական

Եկեղեցու դաւանութեան համաձայն Յիսուս Հոգովն իջաւ դժոխք, քարոզեց Հոգիներին, աւերեց դժոխքն և ազատեց փրկութեան ապասող Հոգիները:

Բայց ինչէ դժոխքը:—Ս. լդ. նշանակում է մի խաւար տեղ, կայան, կամ Հոգեոր մթնամած խաւարի, ուր հաճաձայն Եկեղեցու դաւանութեան և Ս. Հայրերի բացատրութեան՝ մեղաւորների Հոգիները զրկուած են Աստուծոյ տեսութիւնից և սոլա հետ միազած երանութիւնից: Նոյն իսկ պատուի սանազանց հրեշտակները դատապարտուած են մնալ այդ խաւարի մէջ մինչև զատաստանի օրը: Եւ գհրեշտակս, որ ոչ պահեցին զիւրեանց իշխանութիւնն, այլ թողին զիւրեանց բնակութիւնն, լուատաստանս մեծի աւուզն՝ մշտնշենաւոր կապանքը պահեաց ի խաւարի, Յուգ. Ա. 6:

„Թէպէտե մեռաւ (Քրիստոս) մարմնով, այլ կենդանի է Հոգուով, որով և ոգուցն, որ էին ի բանտին, երթեալ քարոզեաց: Ս. Պետր. Գ. 18—19:

„Յերրորդ աւուր յարուցեալ“ է ասում Հանդանակը՝ Հիմնուելով Ս. Գրքի փաստերի վերայ: Ս. լդ. մասին խօսում են Հիմ և Նոր կտակարանները: Դաւիթ մարգարէն ի գետս Յիսուսի ասաց: „Ս. սուտած փրկեսցէ զանձն իմ ի ձեռաց դժոխոց, լորժամ ընդունին զիս“: Սաղմ. Խթ. 16: „Որչափ ցուցեր ինձ նեղութիւն բազում և չարչարանս, դարձար մխթարեցեր զիս, և ի խորոց անդնդոց Երկը հաներ զիս“: Սաղմ. Հ. 20: Եւ

յատկապէս երբորդ օրն Աստուած պիտի յարուցանէր նորան, ինչպէս գուշակում է Ովսէ մարգարէն. „Ողջացուացէ զմեզ լետ երկուց առուրց, և յաւուրն երջորդի յարիցուք և կեցցուք առաջի նորա, և ծանիցուք և զհետ երմիցուք ճանաչել զմէր“. Զ. 2: Ս. լու մարգարէութիւնը թէւ յոգնակի առաջին գէմքով է խօսում, բայց վերաբերում է նախ՝ Փրկչի յարութեան, որով և մենք ստացանք յուր յարութեան և ճանաչեցինք մեր վախճանը: „Քրիստոս... յարեաւ յաւուրն երջորդի ըստ գրոց“: Ս., Կորնթ. Ֆե. 4. Ինքն Յիսուս Քրիստոս իւր թաղման և յարութեան օրինակ տուաւ Յօնան մարգարէի մնալը Կետի փորում՝ երեք տիւ և Երեք գիշեր:— Տես և Գործոց Բ. 27:

Ի՞նչպէս իմացւեցաւ Յիսուսի յարութիւնը:— Մտթէոս աւետարանին ասում է. Նաբաթ երեկոին, կամ կերակնամտին՝ Մարիամ մագիտենացին և միւս Մարիամն եկան գերեզմանը տեսնելու: Մինչև նոցա գալը՝ մեծ շարժում եղաւ, որովհետե Տիլոջ հրեշտակն երկնքեց իջնելով՝ մօտեցաւ և յետ գլորեց գերեզմանի կափարիչը կամ վէմը, որով ծածկուած էր գերեզմանի գուռն, և նստաւ նորա վերալ. „Եւ էլ տեսիլ նորա իբրև զփալվակն և հանդերձ նորա սպիտակի բիրե զգիւն: Եւ յահէ անտի նորա կը ուղարկան պահապանքն և եղեն իբրև զմեռեալ“. Մտթէ, Խթ. 3—4: Կանալք հասան գերեզմանն և տեսնելով հրեշտակին՝ վախեցան, բայց հրեշտակն

ասաց նոցա. „Մի երկնչիք դուք, գիտեմ զի զՅի-
սուս զխաչելեալն խնդրէք, չէ ասո, քանզիյարեաւ
որպէս ասացն. եկալք տեսէք գտեղին, ուր կալը“:
Մատթ. Ի. 5—6: Նոյն հրեշտակը միւնոյն ժա-
մանակ պատուիրեց կանանց, որ շուտով գնան պատ-
մեն աշակերտներին և ասեն, թէ „լարեաւ. և ա-
հա լառաջանալ քան զձեզ ի Գալիլիա՝ անդ տե-
սանիցէք զնա“.—7: Ալա կանալք շտաղով ելան
գերեզմանից և ահով ու շատ խնդրեամբ վա-
գեցին աշակերտներին պատմելու: Յիսուս պատա-
հեց նոցա և ասաց. „Ո՞ղջ էք“. „Նոքա մատու-
ցեալ կալան զոտս նորա և երկրագին նմա“: Այն
ժամանակ Յիսուս ասաց նոցա. „Մի երկնչիք. եր-
թալք, ասացէք եղբարցն իմոց զի երթիցեն ի Գա-
լիլիա և անդ տեսցեն զիս“: Եւ երբ նոքա գնացին,
պահապան զօրականներից ոմանք մտան քաղաքը՝
և պատմեցին քահանայալետիցն զամենայն որ ինչ
եղեն“: (Անդ. 8—12):

Այս աւետարանական փաստերի հիմամբ է, որ
մեր եկեղեցին „Քրիստոս Յարեաւն“ ասում է շա-
բաթ երեկոյ կամ կիրակնամուտներին, իսկ միւս ե-
կեղեցիները՝ գետի լուս կիրակէ՝ կէս գիշերն անցած:
Յարութեան օրն և լետոյ ևս շատերին երևե-
ցաւ Յիսուս ինչպէս՝ Պետրոսին, Եմաւուս գնացող
երկու աշակերտներին և վերջապէս բոլոր առաքեալ-
ներին մի տան մէջ, որի գոները փակած էին: Այ-
նուհետեւ քառասուն օրուայ ընթացքում շատ ան-

գամ երևեցաւ նոցա. և „ասկա երևեցաւ աւելի ևս
քան զհինգ հարիւր եղբարց միանգամայն“: Ա.
Կորնթ. ԺԵ. Յ: Քառասուն օրուայ ընթացքում
Յիսուս շատ անգամ երևելով իւր աշակերտներին
ուսուցանում էր նոցա իւր արքայութեան խորհուրդ-
ները: Գործ. Ա. Յ:

Զ. ՅՈՒՂԻԱԾ

„Համբարձաւ յերկինս և նստաւ ընդ աջմէ
չօր“: Այս մասին Ս. Գիրքն ալսպէս է պատմում:
„Որ էջն, նոյն է՛ և որ ելն ի վերոյ քան զամե-
նայն յերկինս, զի լցցէ զամենայն“: Եփես. Գ. 10:
„Ս.սպիսի ունիմք քահանայապետ՝ որ նստաւ ընդ
աջմէ մեծութեանն աթոռողն յերկինս“: Եբր, Բ. 1:
Յիսուս Քրիստոս համբարձաւ յերկինս ոչ մի-
այն ըստ Աստուածութեանն, որով ընդ միշտ էր
այնտեղ, այլ մարդկութեամբ եւս նոյն մարմնովն:—
„Նստաւ ընդ աջմէ չօր“ խօսքը նիւթապէս ը-
պէտք է հասկանալ, այլ հոգևորապէս. որովհետեւ
Աստուած ամենուրեք լինելով՝ չունի աջ ու ձախ
կողմեր: Այդ գարձուածով հասկանում է Ս. Գիրքն
ոչ այլ ինչ, այլ թէ Յիսուս Քրիստոսն է համազօր,
համապատիւ և համափառ հալը Աստուծոյ:— Այս
Յիսուս որ վերացաւն ի ձէնց յերկինս, սոյնպէս ե-
կեսցէ, զոր օրինակ տեսէք զնա երթեալ յերկինս“:
Տես. Գործ. Ա. 11:

Հ. ՅՈՒՌԻԱԾ. Եւ ամպայու սկզբ
հայու ։ Ե գովա ընառատար այ Ա ՋՇ Ե ՁԵ ։ Հաօն
։ Գալոց է նովին մարմնովն և փառօք Հօր ի
դատել զկենդանիս և զմեռեալս, որոյ թագաւորու-
թեան ոչ գոյ վախճան։ Եւ ամպայու սկզբ
Երկրորդ գալստեան մասին Ս. Գիրքը Հետե-
ւեալն է պատմում, թէ Երբ Յիսուս Գիթենեաց լե-
րան վերայ իւր վերջին պատուէրները տուաւ տա-
սըն և մէկ աշակերտներին և ասաց, որ սուրբ Հո-
գին պիտի ստանան և լինին իրան վկայ մինչև
”Ե ծագս ուշաբհի՝” վերացաւ. և ամպն կալսւ
զնա յաշաց նոցա։ Եւ մինչդեռ պշուցեալ էին ընդ
Երկինս Երթալոյ նորա՝ Երեւում են նոցա Երկու
սպիտակագգեատ մարդիկ (հրեշտակներ) և ասում են.
”Սրբ Դալիլիացիք, զի՞ կայք հայեցեալ ընդ Երկինս.
այս Յիսուս, որ վերացաւն ի ձենջ լերկինս՝ սոլն-
պէս եկեսցէ՝ զօր օրինակ տեսէք զնա Երթեալ լեր-
կինս։ Գործ. Ս. 1—12:

Ուրեմն Հրեշտակների ստածին սիէս՝ Յիսուս
գալու է նոյն մարմնովն, որով և վերացաւ. Գալու
է նոյն մարմնովն և իւր Հօր փառքովը՝ դատելու
կենդանիներին և մեռեալներին։ Եւ իշխանութիւն
ետ նմա դատաստան առնել. և զի Որդի մարդու է
ընդ այն զի՞ զարմանալք։ Զի եկեսցէ ժամանակ,
լորում ամենեքին որք ի գերեզմանս կալցեն, լու-
ցեն ձախին նորա և եկեսցեն արտաքս. որոց բա-
րիս գործեալ իցէ՝ ի յարութիւն կենաց. և որոց

զչար արարեալ իցէ՝ ի յարութիւն դատաստանաց։
Յովհ. Ե. 28 և 29։ Այս դատաստանը պէտք է լինի
միանգամայն արդար, որպէս ինքն է ասում, թէ
ոչ կարեմ ես յանձնէ առնել և ոցինչ, այլ որպէս
լսեմ դատեմ. և դատաստանն իմ՝ արդար է. Յօն։
Յիսուսի Երկրորդ գալուստը միանգամայն տար-
բեր է լինելու իւր առաջին գալստից։ Առաջ նա
եկաւ խոնարհ վիճակով, ծառալի կերպարանքով,
որպէս զի մեզ համար չարչարանք և անարդանք
կրէ, իսկ Երկրորդ անգամ գալու է մեզ դատելու,
և գալու է իւր փառքերով և բոլոր Ա. Հրեշտակ-
ներն իւր Հետո Մատթ. ԻԵ. Յ1. Եւ առանց բա-
ցառութեան դատելու է ամեն մարդի, թէ հաւա-
տացեալներին և թէ անհաւատներին, թէ աղքա-
տին, թէ արքային, թէ մեծին և թէ վորքրին։
Տէրն մեր պիտի դատէ իւրաքանչիւրին արդար դա-
տաստանով և հատուցանէ ամեն մէկին իւր հա-
ւատի, գործերի և խորհուրդների համեմատ. Եւ
Երթիցեն նոքա (մեղասորք) ի տանջանսն յաւիտե-
նականս, և արդարքն՝ ի կեանսն յաւիտենականս։
Մատթ. ԻԵ. 46։ Այսպէս ամենայն ծառ (մարդ) որ
ոչ առնէ պտուղ բարի՝ հատանի և ի հուը արկանի։
Մատթ. Ե. 19. „Բայց ասեմ ձեզ, թէ ընդ ամե-
նան դատարկ բանի, զոր խօսիցին մարդիկ՝ տացեն
համար յաւարն դատաստանի։ Մատթ. Ժ. Յ6։
Վերջին դատաստանի ժամն ու ժամանակը զք
յալանեց մեզ Յիսուս, որպէս զի ամեն ժամանակ

պատրաստ լինինք Համար տալու մասն մը ըն է Յիսուսի թագաւորութիւնը, որ վախճան չէ ունենալու: Նախ նորա թագաւորութիւնն է բոլոր տիեզերքը, երկրորդ՝ բոլոր մարդիկ երկրիս վրայ, որ հաւատում են նորան, և երրորդ՝ յաւիտենական փառաց թագաւորութիւնը: Այս վերջինի համար է ասած «Որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան»: Տիեզերքի վրայ ունեցած թագաւորութիւնը կոչում է քնութեան թագաւորութիւն, երկրորդը՝ շնորհաց թագաւորութիւն, իսկ երրորդը կոչում է փառաց թագաւորութիւն, որ վախճան կամ վերջ ունենալու չէ, և հանգանակն այս թագաւորութեան վրայ է խօսում:

—————
Հ. ՅՕՂՈՒԱԾ

Աւթերորդ յօդուածը խօսում է Սուրբ Հոգու մասին և դաւանում է նորան Շշմնիտ Աստուած: Այս ձշմարտութեան համար Ս. Գրքի մէջ բազմաթիւ ապացուցներ կան: Պետքոս առաքեալը յանդիմանելով Անանիալի ստախօսութիւնը՝ հետեւեալն է ասում, „Հնդէր Ելից սատանայ զսիրտ քո ստել քեզ Հոգւոյն Սրբո... ոչ ստեցեր մարդկան, ալ Աստուծոյ« Գործ, Ե. Յ. Սուրբ Հոգին՝ Հօր և Որդու հետ տալիս է կեանք և կենդանութիւն արարած-

ներին ընդհանրապէս, և մանաւանդ հոգեսոր կեանք հաւատացեալներին: „Եթէ ոք ոչ ծնցի ի ջրոյ և ի Հոգւոյ՝ ոչ կալէ մտանել յաղքալութիւնն Աստուծոյ«: Յովհ, Գ. Յ. Հայաստանեաց եկեղեցին հիմնուելով Յիսուս Քրիստոսի յատուկ և բացորոշ ցուցման վրայ՝ խօստովանում և հաւատում է, որ Ս. Հոգին բոլիսում է միմիան: Հօրից և ոչ Որդուց ևս ըստ այսմ թէ՝ „Բայց յորժամ եկեսցէ միսիթարիչն, զՈր Ես առսցնեցից ձեզ ի Հօրէ, զՀոգին ճշմարտութեան, որ ի Հօրէ ելանին, նա վկայեացէ վասն իմ«: Յովհ. ԺԵ. 26:

Սուրբ Հոգու բղխմանայս վարդապետութիւնը չէ կարելի ենթարկել որևէ փոփոխութեան, կամ լրցացուցման՝ նախ՝ այն պատճառով, որ Հայաստանեաց ուղղափառ եկեղեցին սոյն վարդապետութեան մէջ կրկնում է Յիսուս Քրիստոսի իսկական խօսքը միան, որ, հարկաւ, ուրիշ ամեն խօսքից գերազանց է, և Խնքն է միայն ապացուց ամեն Հոգեսոր և կլօնական ճշմարտութեանց: Երկրորդ՝ չէ կարելի փոփոխել, որովհետեւ երկրորդ տիեզերական ժողովը (Կոստանդնուպոլիսի Ա), որի գլխաւոր առարկան էր հաստատել Ս. Հոգու բղխման վարդապետութիւնը՝ ներմուծեց Հանգանակի մէջ այս վարդապետութիւնն այնպէս որոշ և հաստատուն կերպով, որ մինչև անգամ երրորդ Տիեզերական ժողովն իւր եօթներորդ կանոնով, նգովքով արգելեց

Հաւատի նոր Հանդանակ կազմել և Կաթուղիկէ Եկեղեցին Հայոց (և Յունականը) պահեց ցամոր անփափոխ Բայց Հոռվմէական Եկեղեցին, որպէս և Նորանից բաժանուած բողոքական Եկեղեցիներն՝ ըսդունեցին մի այլ վարդապետութիւն, որով գաւանում են, թէ Հոգին բղխում է „Ի Հօրէ և յՈղութոյ“։ Այս վարդապետութիւնը հակառակ է թէ Ս. Աւետարանի պարզ վկայութեան և թէ Երկրորդ Տիեզերական Ս. ժողովի վճռին։

Սուրբ Հոգուն Երկրագագում և վառաբանում ենք հաւասար Հօր և Որդույ, Հիմնուելով Յիսուս Քրիստոսի խօսքի վրայ, թէ „Մկրտեցէք զնոսա լանուն Հօր և Որդույ և Հոգուն Սրբոյ“ Մատթ. Փ. 19։

Ս. Հոգու մասին Հանդանակում ասած է. Որ խօսեցաւ յօրէնս և ի մտրդարէս։ Սուրբ Հոգբերն այս խօսքը մտցրին Հանդանակի մէջ հերքելու համար ոմանց սուտ վարդապետութիւնը, որով ուսուցանում էին, թէ Հին Կոստանդնուպ չէ գրուած Ս. Հոգու ազգեցութեամբ, ուրեմն և Ս. Գիրք չէ, այլ մի սովորական գիրք։ Բայց ահա Պետրոս Առաքեալն ասում է. „Քանզի ոչ եթէ ըստ կամաց մարդկան տուաւ մարդարէութիւն Երբէք, այլ ի Հոգուն Սրբոյ կրեալք խօսեցան մարդիկ լՍատուծոյ“ Բ. Պետր. Ա. 21։ Թէ նոր Կտակարանն և Սուրբ Հոգուոյ ազգեցութեամբ և ցուցմանը գրուցաւ այլ մասին ևս դարձեալ նոյն Սռաքեալն ա-

սում է. „Որք (Առաքեալք) աւետարանեցինն ձեզ Հոգուին Սրբով, որ առաքէն յերկնից“ . . . Ա. Պետր. Ա. 12. Իսկ Պողոս Առաքեալն առելի պրաշ կերպով այս մասին ասում է. „Մեք ոչ եթէ զհօգի աշխարհիս այսորիկ առաք, այլ զնոգին, որ յԱստուծոյ . . . Եւ զոր խօսիմքս ոչ եթէ մարդկեզն ուսմամբ ճարտարութեամբ բանից, այլ վարդապետութեամբ Հոգուն ընդ հոգևորս զհոգեորսն համեմատեմք“։ Ա. Կորնթ. Բ. 12, 13. Ահա այս հիման վրայ ասացին սուրբ հայրերը. „Հաւատամք և ի սուրբ Հոգին՝ լանեղն և ի կատարեալն, որ խօսեցաւ յօրէնս և ի մարդարէս և բաւետարան“։

Հանդանակի մէջ առաքեալների մասին չէ միշտած, թէ նոքա ևս Սուրբ Հոգուով գրեցին, դորա պատճառն այն է, որ Հանդանակը գրելիս գեռ ոչ ոք չէր կասկած յարուցել Առաքեալների ներշնչման նկատմամբ։

Սուրբ Հոգին Յիսուսի յարութիւնից լիսուն օր լետոյ, այսինքն Պենտէկոստէին՝ համաձայն Յիսուսի խօստման՝ իջաւ հերեղէն լիքուների ձևով առաքեալների և աշակերտների վրայ, որոց հետ էր և Ս. Կոյս Մարիամ Աստուծածինը՝ Վերնատան մէջ։

Գործ Ա. գլ.։ Նոքա Ս. Հոգին ստանալուց լետոյ՝ սկսեցին քարոզել Աստուծոյ Աւետարանն և մի քանի օրեց ունեցան հարիւրաւոր հաւատացեալներ։

Որոց հաղորդում է Սուրբ Հոգին՝ նոքա ըս-

տանում են նորանից այլ և այլ շնորհներ։ Պօղոս
Առաքեալի վկայութեամբ՝ Սուրբ Հոգու շնորհները
սոքա են. իմաստութիւն, գիտութիւն, հաւատք,
շնորհ, բժշկութեան սքանչելագործութիւն, մար-
դարձարէութիւն, ընտրութիւն հոգւոյ, լեզուախօսու-
թիւն և թարգմանութիւն։ Պարգևից Սուրբ Հոգին
ամեն մարդի հաւատար չափով չէ շնորհում այս
պարզեները. այլ որպէս և որչափինքն էկամենում։
Ա. Կորնթ. ԺԲ. 8—10: Սուրբ Հոգու գլխաւոր
պարզեները կամ շնորհները մարդարէն Եսայի այսպէս
է թուում. «Հոգի Աստուծոյ, Հոգի իմաստութեան
և հանձարոյ, Հոգի խորհրդոյ և գօրութեան, Հոգի
գիտութեան և աստուածալաշտութեան... Հոգի
երկիւղի Աստուծոյ»; Եսայ. ՃԱ. 1—3: Աստու-
ծուց այս պարզեներն ստանալ կարող ենք Եկե-
ղեցու. Ա. Խորհուրդների միջոցով, ջերմեռանդ,
անկեղծ ու ճշմարիտ աստուածալաշտութեամբ և
յանուն Յիսուս Քրիստոսի մատուցած սրտեռանդն
ազօթքներով; «Խնդրեցէք և տացի ձեզ, հայցեցէք
և գտշեք, բաղխեցէք և բացցի ձեզ. զի ամենայն որ
խնդրէ՝ առնու, և որ հայցէ՝ գտանէ, և որ բաղխէ՝
բացցի նմառ»; Մատթ. Է. 7—8:

Թ. ՅՈՒՂԻԱԾ

Ի՞նչ է Եկեղեցին։ Եկեղեցին է ժողով ճշմա-
րիտ հաւատացեալների, որոնք իրար հետ միացած

են ուղղափառ հաւատով, աստուածալին օրէնքով,
Ա. խորհուրդներով և սրբագործուած վարչու-
թեամբ։ „Հաւատալ Եկեղեցուն նշանակում է գա-
ւանել Յիսուսի Քրիստոսի ճշմարիտ Եկեղեցին, հնա-
գանդել նորա վարդապետութեանն և կարգադրու-
թիւններին, հաւատի լինի Յիսուսի Քրիստոսի փրկարար
և կենդանարար շնորհը, և թէ ինքն Յիսուս Քր-
իստոսն է նորա յաւիտենական հիմնադիրն ու գլ-
ուկով։ Թէև Եկեղեցին տեսանելի է, և տեսանե-
լին չէ կարող լինել հաւատի առարկայ, այլ միայն
անտեսանելին բայց պէտք է այնպէս հասկանանք,
որ Եկեղեցու մէջ հաւատում ենք միմիայն աստ-
ուածային աներեւոյթ շնորհացը, սա է իսկապէս
մեզ սրբացնողը նոյն Եկեղեցու մէջ։ Նոյն Եկեղե-
ցին մինչ Երկրի վրայ է՝ տեսանելի է, և նորան
են պատկանում բոլոր ճշմարիտ ուղղագաւան քը-
րիստոնեաները. բայց միևնուն ժամանակ անտեսա-
նելի է, որովհետև նա գոյութիւն ունի և Երկն-
քում, որին պատկանում են բոլոր հանգուցեալնե-
րի հոգիները, որոնք հանգեան ի Տէր ճշմարիտ հա-
ւատով, սուրբ վարքով և առաքինի գործերով։ Երկ-
րաւոր և Երկնաւոր Եկեղեցիների մասին մեր հաս-
կացողութիւնը հաստատում է Պօղոս Առաքեալի
այս վկայութեամբ, թէ՝ „Մատուցեալ էք ի Սիօվն
լեառն, և ի քաղաք Աստուծոյ կենդանուոյ լերու-
սաղէմ լերկինս, և ի բիւրաւոր բանակս հրեշտա-

կաց, և յեկեղեցիս անդրանկաց գրելոց յերկինս, և առ դատաւորն ամենեցուն Աստուած, և յոգիս արդարոց կատարելոց, և ի նորոց կտակարանաց միջնորդն Յիսուս: «Եթէ Ժ. 22—24: Տեսանելի եկեղեցին կոչում է Զինուորեալ, իսկ անտեսմելին Յաղթական: Եկեղեցին կոչում է զինուորեալ՝ ճշմարիտ հաւատով սպառազինուուած լինելու և մոլութեանց դէմ պատերազմ մղելուն համար: Յաղթական եկեղեցին է ննջեցեալ սուրբերի ժողովն երկնքում՝ որոնք բարւոք պատերազմն պատերազմելոց և կեանքի ընթացքը ճշմարտութեամբ աւարտելուց յետոյ փառաց պասակի յուսով ելան աշխարհից. „Զբարւոք պատերազմն պատերազմեցալ, զընթացն կատարեցի, դհաւատան պահեցի. այսուհետեւ կայ մնայ ինձ արդարութեան պատկն“: Բ. Տիմոթ. Դ. 7. 8:

Եկեղեցի կոչում են նաև աղօթքի տները, կամ Տաճարները, բայց փոխարքերաբար և ոչ իսկովիթեամբ:

Ի՞նչ տեղից գիտենք, թէ Աստուծոյ շնորհները գտնուում են ճշմարիտ եկեղեցու մէջ:—Որովհետեւ եկեղեցու գլուխն ինքն Միածին Որդին է, որ է »ի շնորհօք և ճշմարտութեամբ«. (Յովհ. Ա. 14. 17)-ապա ուրեմն և նորա մարմինը, որ է եկեղեցին՝ մասնակից է նոյն շնորհներին: Այլ և ինքն Յիսուս Քրիստոս խոստացաւ իւր աշակերտներին ուղարկել Միախթարիչ Սուրբ Հոգին, որ լինի նո-

ցա հետ յաւիտեան: Այս խոստման համաձայն հաւատում ենք, որ Ա. Հոգին միշտ եկեղեցու հետ է և ինքն է կացուցանում եկեղեցու հովիներ: Եւ եմ ազաշեցից գշայր, և այլ մխիթարիչ տացէ ձեզ, զի ընդ ձեզ ընակեսցէ ի յաւիտեան՝ գչոգին ճըշմարտութեան... զի առ ձեզ ընակեսցէ և ընդ ձեզ եղիցի... Զի ես կենդանի եմ և գուք կենդանի լինելոց էք...: Յովհ. Ժ. 16—19: Պօղոս առաքեալը Յիսուս Քրիստոսի մասին ասում է. Եւ գնա եղ (Հայր) գլուխ ի վերայ ամենայն իրիք եկեղեցւոյ, որ է մարմին նորա, լրումն՝ որ գամենայն յամենալնի լուս: Եփես. Ա. 22—23: Նոյն Առաքեալն ասում է եկեղեցու հովիներին. „Զգո՞ր կացէք անձանց և ամենայն հօտիդ, յորում նոյն զանդ Հոգին սուրբ տեսուչը՝ հոգուել զժողովուրդ: Տեսուըն, զոր ապրեցոց արեամբ իւրավ“: Գործ. ի. 28: Քրիստոսի եկեղեցին յաւիտեան պիտի մնալ և Յիսուսի շնորհը երբէք նուազելու չէ նորանից: Այդ երեսում է հետեւել խօսքից. „Նինեցից գեկեղեցի իմ, և դրունք գժոխոց զնա մի յաղթահարեսցեն“: Մատթ. Ժ. 18: „Ես ընդ ձեզ եմ զամենալն աւուրս՝ մինչև ի կատարած աշխարհի“: Մատթ. ի. 20: Նմա (Հօր) փառք յեկեղեցուն և ի Քրիստոս Յիսուս, յամենայն ազգս յաւիտենից յաւիտեանս ամէն“: Եփես. Գ. 21:

Ի՞նչո՞ւ է եկեղեցին մի:—Որովհետեւ մի հօգեւոր մարմին է նաև ունի մի գլուխ և մի հիմն, որ

Ե Յիսուս Քրիստոս, և ներշնչում է միմիայն աստուածալին Ս. Ճողովիլը: „Մի մարմին և մի հոգի, որպէս և կոչեցարուք ի մի լուս կոչման ձերոյ. մի է Տէր, մի Հաւատք, մի Մկրտութիւն, մի Աստուած և Հայր ամենեցուն, որ ի վերայ ամենալի, և ընդ ամենեսին և յամենեսին ի մեզ“: Եփես. Պ. 4—6: Քրիստոսի Մի եկեղեցու միակ հիմն լինելը հաստատում է Պօղոս Առաքեալն ար բացարար խոսքով, թէ „ըստ շնորհացն Աստուծոյ, որ տուեալ են ինձ, իբրև իմաստուն ճարտարապետ հիմն եղի, բայց այլ է՝ որ շինէն. ալլ իւրաքանչիւր ոք զգուշ լիցի՞ թէ որպէս շինիցէ. զի հիմն այլ ոչ ոք կարէ դնել, քան զեգեալն՝ որ է Յիսուս Քրիստոս“: Ս. Կորնթ. Գ. 10—11: Յիրաւի, որովհետեւ եկեղեցին պէտք է լինի յաւիտեան, ապա ուրեմն նորա գլուխն ևս պէտք է լինի անմահ, յաւիտենական, և հետեւաբար, միմիայն ինքն Յիսուս կարող է լինել գլուխ և հիմն իւր եկեղեցու, և ոչ որ և է մահկանացու և սխալական ոք: Այս պատճառով առաքեալներն իսկ կոչում են Եկեղեցու պաշտօնեայ և ոչ հիմն և զլուիլու կողոս. Ս. 24—25: Եկեղեցու միութեան ճշմարտութիւնը դնում է ամեն քրիստոնէի վրայ պարտականութիւն՝ „Փութալ պահել զմիաբանութիւն հոգուն յօդիւ խտղաղութեան“: Եփես. Գ. 3: Թիվակտու Քրիստոսի եկեղեցին Մի է, բայց ալդ Միութիւնը բաղկացած է մասերից, որոնք և

կոչում են մասնաւոր եկեղեցիներ, օրինակ՝ Եկեղեցի Երուսաղէմի, Անտիոքի, Աղէքսանդրիայի, Եփեսոսի, Հայոց, Գաղատացոց, Յունաց, Հռովմալ և այն Քրիստոսի Եկեղեցին Մի (1) որովհետեւ մի է Աստուծու. 2) որովհետեւ Մի է Յիսուս Քրիստոս՝ բոլոր հաւատացեալների յուրը, 3) որովհետեւ Մի է Աստուծոյ և մարդոց մէջ խաղաղութեան Միջնորդը: Քրիստոսի եկեղեցին է ընդհանրական, կամ տիեզերական, որ և կոչում է կաթոլիկէ, որովհետեւ ընդունում է իւր ծոցը բոլոր ճշմարիտ հոգուին Ս. Երրորդութեան երկրպագող, և ա. աւագանի մկրտութեամբ վերածնուած հաւատացեալներին՝ առանց խտրութեան սկզի, ծագման, լեզուի և ազգութեան:

Քրիստոսի եկեղեցու միութեան և ընդհանրականութեան, կամ կաթուղիկէութեան պայմանից զրկում են այն առանձին կամ ինքնուրին Եկեղեցիները միայն՝ որոց դաւանութեան մէջ կայ հակառակութիւն Ս. Գրքի յայտնեալ ճշմարտութեանց դէմ:

Քրիստոսի եկեղեցին բացի Մի և ընդհանրական լինելուց՝ է միանգամայն և Սուբբ, որովհետեւ սուբբ է իւր Հիմնադիրն ու Գլուխն Յիսուս Քրիստոս, որ և իւր արիւնով և Աւետարանի ճշմարտութիւններովն ու Ս. Խորհուրդներովը սրբեց իւր ճշմարիտ հաւատացեալներին սկզբնական մեղքից, անձքից ու մահից, և տուաւ նոր միջոցներ՝ անձնական մեղքերից ևս սրբուելու, արդարանալու և

յաւիտենական երանութեանը հաղորդ լինելուց
Քրիստոսի եկեղեցին բացի այս երեք յատկու-
թիւններից՝ է և Առաքելական, որ է իւր չորրորդ
յատկութիւնը։ Առաքելական է կոչւում, որպիշետև
նախ նորա հիմնադիրն է Խնքն Յիսուս Քրիստոս,
որ է Երկնային գերագոյն Առաքեալն, Երկրորդ՝ ո-
րովհետև Յիսուսից անմիջապէս ուղարկուած առա-
քեալների ջանքերովը հաստատուեցաւ, Երրորդ՝
առաքեալների օրինաւոր յաջորդների քարոզութեամբ
տարածուեցաւ, չորրորդ՝ առաքելական գրութեանց
և աւանդութեանց համաձայն հաւատն ու բարյա-
կանն է պաշտում և ամեն բանի մէջնոցա քարո-
զած ճշմարտութիւններին է հետեւում։

Քրիստոսի Կաթուղիկէ եկեղեցին է Քրիստոսի
խորհրդական սուրբ մարմինը, սուրբ Հոգու կենդա-
նի տաճարը, Քրիստոսի Երկրաւոր արքայութիւնը,
որի մէջ միմիայն նոքա են իրօք գտնուում, որոց
հաւատը, յոյսն և սէրը ճշմարիտ, անկեղծ և սուրբ
են, և սոքա պիտի ժառանգեն փրկութիւն։ Ամե-
նայն ոք, որ իւր անձը համարում է Քրիստոսի ե-
կեղեցու անդամ, պէտք է իմանայ, որ լոկ քրիստո-
նեալ անունով չէ կարող վայելել եկեղեցու շնորհ-
ները, «Զի անիրաւք զարքայութիւնն Աստուծոյ
ոչ ժառանգեն», Ա. Կորնթ. Զ. 9, 10։

Յայտնագէտ և իրօք չեն անդամ եկեղեցու և
անմասն են սրբերի հաղորդակցութիւնից և վայե-
լած փրկութիւնից նախ յարտնի կամ գաղտնի ամ-

հաւատները, ուրացողներն ու մոլորեալները, երկ-
ըորդ՝ նոքա, որոնք ուրանում են հաւատի էական
ճշմարտութիւնները, որոց նզովում է կաթուղիկէ
եկեղեցին՝ գատապարտելով նոցա հերետիկոսութիւ-
նը, երբարդ՝ նոքա, որոնք ինքնահնար վարդապե-
տութեամբ մոլորեցնում են եկեղեցու անդամներին՝
աղճատելով աստուծացունց Ա. Գերքը, կրամտելով
կամ աւելցնելով։ Բ. Օրին. Դ. 2. Ճ. 32. Յալտ.
Ի. 19. Բ. Տիմ. Բ. 18. Գաղատ. Ա. 6—9 և այլն։

Ժ. ՅՈՒԻՆԸ

(Հաւատամք) ի մի մկրտութիւն, յապաշիս-
րութիւն, ի քառութիւն եւ ի թողարթիւն մեղաց։
Քրիստոնէական հաւատավեր կնքում է
մկրտութեամի՞ն և միւս խորհրդներով։
Խորհրդն է սրբար գործողութիւն, որին
ենթակալ եղան ընդունում է աստուծալին շնորհն
աներևութապէս։

Սրբարար խորհրդներն եօթն են. 1, մկրտու-
թիւն. 2, դրոշ. 3, Հաղորդութիւն. 4, Ապաշ-
խարտութիւն, 5, Կարգ սրբազնագործութեան կամ
ձեռնադրութիւն, 6, պատկ կամ ամուսնութիւն, 7,
Օծումն հիւանդաց. 1, Մկրտութեամբ մարգս խոր-
հրդաբար վերածնւում է հոգևոր կեանքով. 2,
դրոշմավ մարգս ատանում է շնորհ, որ տալիս է
հոգուն հոգեսոր աճումն և զօրութիւն. 3, Հաղոր-
դութեամբ ստանում ենք հոգեսոր սնունդ. 4, Ա-

պաշխարութեամբ բժշկում ենք հոգևոր հիւանդութիւններից—մեղքերից:

5. Սրբազնագործութեամբ կամ ձեռնադրութեամբ ստացում է շնորհ՝ հոգևորապէս վերածնելու և դաստիարակելու ուրիշներին՝ Ա. Գրքի վարդապահութեամբ և Ա. Խորհրդների միջոցով:

6. Ամուսնութեան խորհուրդը սրբագործում է ամուսնութիւնը՝ բնական ծնունդն և զաւակների դաստիարակութիւնը). 7. Հիւանդաց 0օման խորհուրդը սրբում է հիւանդին թեթև մեղքերից և լինում է առիթ նաև առողջանալու: Հաւատամքի մէջ ասելով «ի մի մկրտութիւն, լապաշխարութիւն, ի քաւութիւն և ի թողութիւն մեղաց»՝ չէ լիշում միւս մնացած խորհուրդները, որ հարկաւ իւր պատճառն ունի, և այս է. նախ՝ կային մարդեկ, որոնք կարծում էին, թէ ուղղափառ եկեղեցուն առաջ պատկանող և լետոյ աղանդաւոր դարձած մարդոց պէտք է երկրորդ անգամ մկրտել, երբ նորից դառնալու լինին ուղղափառ եկեղեցու ծոցը. բայց երկրորդ Տիեզերական ժողովն այդ կարծիքի դէմ ներմուծեց Հանդանակի մէջ՝ Մի մկրտութիւն» վճիռը:

Ապաշխարութիւն, բառը չկար նիկեոյ Հանդանակում՝ որպէս և «ի թողութիւն մեղաց» խօսքը: Այս վերջինը ներմուծուեցաւ Կ. Պօլսի Ա. խալ Տիեզերական երկրորդ ժողովի Հանդանակի մէջ, իսկ մեր Հանդանակն աւելցրեց դորան «ապաշխարութիւն» խօսքն ևս: Սորա նպատակն այն էր, որ հասկաց-

նեն հաւատացեալներին, թէ ինչպէս որ առկղզնական մեղքի թողութիւնը լինում է մկրտութեամբ՝ ներգործական կամ անձնական մեղքի քաւութիւնն ու թողութիւնն էլ լինում է ապաշխարութեամբ: Այս դաւանութիւնը թերեւս հիմնեցին Ա. Գրքի այս խօսքի վրայ, թէ՝ «Քարողել (պարտէ) յանուն նորա (Քրիստոսի) ապաշխարութիւն և թողութիւն մեղաց յամենալն ազգս, Ղուկ. ԻԴ. 46. 47: Այս խորհրդներից միայն կարգը կամ ձեռնադրութիւնը լինում է եպիսկոպոսի ձեռքով, իսկ միւս բոլոր խորհուրդները մատակարարում են թէ եպիսկոպոսի և թէ քահանայի ձեռքով: Մկրտութիւնը, դրոշմը, ապաշխարութիւնն ու հաղորդութիւնը բոլոր քրիստոնեալ հաւատացեալների համար կարեւոր են, իսկ ամուսնութիւնը, կարգն և հիւանդաց օծումը տրուում են փափագող արժանաւորներին միայն: Մկրտութեան, դրոշմի և կարգի խորհուրդներն անկրկնելի են, իսկ միւսները կը ընելի: Մկրտութիւնը չէ կրկնուում, որովհետև նախ մի է Ա. Երրորդութիւնը, որի անունով արդէն միանդամ մկրտուեցաւ. երկրորդ՝ պատկերն է Քրիստոսի մահու, որ մի անգամ մեռաւ մեր համար և այլ ևս մեռնելու չէ: Իսկ դրոշմով և կարգով ընդունած շնորհներն, որ Աստուած պարգևեց, անցնֆելի և անփոփխելի են, որպէս ինքն Աստուած անփոփխելի է:

ՄԵՐՑՈՒԹԻՒՆ

Մկրտութիւնը մի խորհուրդն է, որին ենթակայ եղողը՝ յանուն Ս. Երբորդովթեան Հօր, Որդւոյ և Ս. Հոգւոյ՝ օրհնեալ ջրի մէջ մարմնով երեք անգամ ընկղմուելով՝ մեռնում է մեղքի համար, և Ս. Հոգւով վերածնում է հոգեօր, սուրբ և բարոյական կեանքի համար։ Մկրտութեան խորհուրդը սահմանեց Խնքն Քրիստոս՝ մկրտուելով Յովհաննէս Մկրտչից Յորդանան գետում։ Մատթ. Գ։

Մկրտութեան կերպը սահմանեց Քրիստոս՝ պատուիրելով աշակերտներին, թէ՝ «Գնացէք ալսուհետեւ՝ աշակերտեցէք գամենայն հեթանոս, մկրտեցէք զնոսա լանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սըրբոյ։ Մատթ. Խ. 19։ Մկրտութեան կարևորութիւնը ցոյց տուաւ Քրիստոս առելով. „Եթէ ոչ ոք ծնցի ի ջրոյ և ի Հոգւոյ, ոչ կարէ մտանել յարքայութիւնն Աստուծոյ։ Յովհ. Գ. 5։ Պօղոս առաքեալը մկրտութեան խորհրդին տալիս է նաև հետեւեալ բացատրութիւնները. Որ մի անգամ մկրտեցաք ի Քրիստոս Յիսուս՝ ի մահ՝ անդր նարա մկրտեցաք։ Հոգվմ. Զ. Յ. Գիտեմք, եթէ Քրիստոս յարուցեալ է ի մեռելոց, ալսուհետեւ ոչ մեռանի, և մահ նմա ոչ ևս տիրէ. Հոգվմ. Զ. Գ. „Թաղեցաք ընդ նմին (ընդ Քրիստոսի) մկրտութեամբն ի մահ։ (անգ. 3)։ Առաջին վկայութիւնը ցոյց է տալիս, թէ մկրտութիւնը պէտք է լինի Ս. Երբորդութեան

անունով և արդ է մկրտութեան էական մասն։ Երկրորդը ցոյց է տալիս, թէ մկրտութիւնն է Քրիստոսի մահու պատկերը։ Երբորդն և չորրորդը ցոյց են տալիս, թէ անկրկնելի է մկրտութիւնը, որովհետեւ Քրիստոսի մահու պատկերը լինելով՝ ինչպէս որ Քրիստոս մի անգամ մեռաւ՝ մկրտութիւնն են մի անգամ պիտի լինի։

Մկրտութիւնը կատարւում է ալյապէս։ Քահանան կամ եալիսկոպոսը մկրտուողին ընկղմում է աւազանի ջրի մէջ երեք անգամ։ Առաջին անգամ ընկղմում է և ասում, «լանուն Հօր» Երկրորդ անգամ՝ „և Որդւոյ։ Երբորդ անգամ»։ և Հոգւոյն Սըրբոյ։ Թէւ Ս. Գրքի մէջ Երիցս ընկղման մասին ասուածք չկալ, բայց Ս. Գիտնեսիոս Արիստագացին, որ առաքելոց աշակերտն էր՝ ասում է. „Մկրտչ զնա (մկրտուողին) քահանայապետն Երիցս ընկղմմամբ”։ (ի դիրս եկեղեց. քահանայապետ. մասն Բ. գլ. Բ.)։ Նոյն Գիտնեսիոսը, Կիւրեղ Երաւաղէմացին և մեր եկեղեցու Ս. Հայրապետներն ու վարդապետները, օրինակ՝ Ներսէս ու Սարգիս Հնորհալիներն և այլն՝ վկայում են, որ Երբակի ընկղմրւմն մկրտելիս՝ նշանակում է Քրիստոսի Երեքօրեայ թաղիւմն։

Մկրտուողից՝ նախ քան մկրտուիլը՝ եկեղեցին պահունջում է հրաժարիլ սատանայական ամենայն խարէւթիւններից ու մողրութիւններից. սորտ համար է առում, «Հրաժարիմքը»։ ալնուհետեւ պա-

Հանջում է Հաւատի դաւանութիւնը, և սորա համար է ասւում „Հաւատի Հանգանակը“, որ նըշանակում է, թէ նորա մէջ լիշուած ճշմարտութիւնները մկրտուղղը խոստվանում է և դաւանում։ Ուրեմն մկրտուղղից դիմաւրապէս երկուքան է պահանջում։ Զղջումն և Հաւատ. „Ապաշաւեցէք և մկրտեսցի իւրաքանչիւր ոք ի ձէնջ յանուն Տեառն Յիսուսի Քրիստոսի ի թողութիւն մեղաց, և ընկալիք զաւետիս (զշնորհս) Հոգուն սրբոյ։ Գործ. Բ. 38։

Յանուն Տեառն Յիսուսի Քրիստոսի, ասելով՝ չըպէտք է հասկանալ, թէ միայն Յիսուսի Քրիստոսի, անունով պէտք է մկրտել, չիշելով Հօր և Ս. Հոգու անունը, այլ թէ՝ ոչ Մովսէսի և ոչ Յովհաննէսի մկրտութեամբ մկրտել, որոնցով մեղաց թողութիւն չէր լինում, այլ Միմիայն Յիսուս Քրիստոսի սահմանած մկրտութեամբ, որով և իսկապէս լինում է թողութիւն սկզբնական մեղաց, վերածնութիւն հոգեոր, որդեգրութիւն երկնաւոր Հօր և ժառանգութիւն արքայութեան։ Այս հաստատում է Պողոս առաքեալն ասելով՝ Որք մի անգամ ի Քրիստոս մկրտեցարուք, զՔրիստոս զգեցեալ էք. չիք Խտիք՝ ոչ Հրէի և ոչ Հեթանոսի։ Գաղատ. Դ. 28։ — Այսուհետեւ չես ծառայ, այլ որդի. Եթէ որդի՝ և ժառանգ Աստուծոյ։ Գաղատ. Գ. 7։ Մկրտուղղը միայն շնորհով է դառնում Աստուծոյ որդի և ոչ ընութեամբ, որովհետեւ

բնութեամբ մենք Աղամի որդիներն ենք։ Երբ մկրտուղղից եկեղեցին պահանջում է այն՝ ինչ որ մանուկը տակաւին ըրգիտէ՝ հապա ինչու ենք մկրտում։ Մանուկներին մկրտում է եկեղեցին նոցա ծնողաց և կնքահօր հաւատովն ու երաշխաւորութեամբ։ Ծնողըն և կնքահալրը պարտագրում են եկեղեցու առաջ ուսուցանել մկրտուող մանկանը՝ Հաւատ, երբ որ նա մեծանայ։ Եթէ արդ երաշխաւորութիւնը ըլինի, կարելի չէ երեխալին մկրտել։ Երեխաներին մկրտելն անշուշտ պէտք է. հարկ ըլկալ թողնել նոցա մինչ որ նախ՝ հաւատն ուսանին և ապա իրանց բերանովը խոստվանին ընդունելի հաւատի դաւանութիւնը։ Արդէն բացաբայտ երևում է, որ առաքեալներն ևս մկրտում են մանուկներին նոցա ծնողաց հետ, և այս հիման վրայ մեր եկեղեցին ևս մկրտում է մանուկ հասակում։

Իսկ ինչ վերաբերում է նարօտին, որ լինում է կարմիր ու սպիտակ գոյնի թեւելից ոլորած, կընդգուղին, որ է սպիտակ կտաւ, և խաչին, որոնք գործ են ածւում մկրտութեան ժամանակ՝ հնագոյն ժամանակներից մնացած են ծիսաբանների մէջ և ունին ալս նշանակութիւնը. նարօտի կարմիր գոյնը Յիսուսի կողից ըլիսած արեան, և սպիտակը՝ ջրի լայտարար նշանն է. սպիտակ կնդուղն է անմեղութեան և սըբուելու նշանակը. խաչը՝ Քրիստոսի պատուիրաններին հնագանդելու տեսանելի նշանը։

Մկրտութեան կարգը կատարելուց յետոյ՝ քահանան մկրտուած և դրոշմուած մամկանը գրկած հանում է բեմն և ապում. „Ճառայտ (կամ աղախինը՝ անունը յիշելով) Քրիստոսի եկեալ յերեխայութենէ (անմկրտութիւնից) ի մկրտութիւն. ի մկրտութենէ յերկրագութիւն՝ երկրագէ սուրբ սեղանոյս, երկրագէ սուրբ խրանիս, երկրագէ սուրբ աւազանիս, որ մերկացաւ զանօրէնութիւն եւ զգեցաւ զլոյս աստիւածգիտութեան“:

Ս. յ. նուիրման կամ ընծայման մաղթանքից ետևնում ենք, որ մկրտութիւնը պէտք է կատարուի, սուրբ եկեղեցում, որտեղ են ս. սեղանը, ս. խորանն և ս. Աւազանը, և ոչ թէ տներում, ուր դոքա չկան: Թէպէտե մկրտութիւնը գործնական դաւանութիւն, հոգեւոր վերածնութիւն լինելով չէ կրինում՝ բայց եթէ մէկը մկրտուած լինի այսպիսի եկեղեցում, որ կամ որդու աստուածութեան, կամ Ս. Հոգւոյ աստուածութեան դէմ է մոլորում՝ նորա մկրտութիւնն անվաեր է և հարկ կայ վերըստին մկրտելու: Այդպէս են, օրինակ՝ Նեստորական, Արիոսեան և Մակեդոնեան կամ հոգեմարտների եկեղեցիները, որոց առաջին երկուսը Որդու՝ և վերջինը Ս. Հոգու աստուածութեան դէմ են մոլորում. ուրեմն և յանուն Ս. Երրորդութեան չեն մկրտուած, որ խորհրդի վաւերականութեան էսական պարմանն է: Նմանապէս պէտք է կրկին մկրտել այնպիսի աղանդի անդամներին, որ մկրտութիւնը

չէ ընդունում իբրև մի խորհուրդ, որ մարմնի լրացմամբը սրբում է մարդուս սկզբնական մեղքից և նորաստեղծում նորան նոր կեանքով, այլ համարում է կամ հոմանիշ Հրէից թշպատութեան, որ էին լոլ արտաքին նշաններ՝ հեթանոսներից որոշելու համար, և կամ հոմանիշ Հրէից և Յովհաննէսի Մը կը բառութեան, որոնք լոկ արարողութիւններ էին կամ նշանակներ օրինական սրբութեան և ասլաշխարութեան: Մարկ. Ա. 4—8: Եբր. Թ. 9—10: Եկեղեցին ընդունում է նաև արեան մկրտութիւն և սիրոյ մկրտութիւն, որոնք վերապահուած են Ս. Նահատակներին, Ֆարտիրոսներին և վկաններին, համաձայն Քրիստոսի խօսքին, „Զբաժտվին, զոր ես ըմպելոց եմ՝ ըմպիցէք, և զմկրտութիւնն, զոր ես մը կրտելոց եմ՝ մկրտիցիք“: Մարկ. Փ. 39: Ինչպէս և մեր եկեղեցին երգում է. «Նահատակք պանծալիք և սիրեցեալք ի Երկնաւոր հօրէն, ուր մկրտեցայթ ընդ Քրիստուի արեամք զերով ի մահ խաչին»: Ժամագիրք:

—————

Գրոշմն է խորհուրդ, որով պարզեւում է հաւատացեալին Ս. Հոգու շնորհն՝ հոգեւոր կեանքի մէջ աճելու և զօրանալու: Ս. միւռոնով օծելով ճակա-

տը, զգայարաններն և մարմնի որոշ մասերը։ Քահանան Ս., միւռունն ածում է ձեռքի ափն և իսաչանից կնքում՝ մկրտուածի ճակատը, աչքերը, ականջները, հոտոտելիքը, ձեռքերը, միւրը, քամակն և ոտքերը։

Արդեօք Ս. Գրքից վաստ ունի՞ք, որ գրոշմը առանձին խորհուրդն է։—Այս խորհրդի ներքին ներգործութեան մասին Յովհաննէս առաքեալին ատում է «Եւ գրւք օծութիւն ունիք առ ի Սբոյն և գիտէք ամենեքին... Օծութիւնն, զոր ընկալարուք ի նմանէ՝ բնակեսցէ ի ձեզ, և չէ ինչ պիտոյ՝ եթէ ոք զձեզ ուսուցէ, այլ որպէս զի նորա օծութիւնն ուսուցանիցէ զձեզ վասն ամենալինի, և ճշմարիտ է և չէ սուտ, և որպէս ուսուցն զձեզ՝ կայք ի նմա։» Ո. Յովհ. Բ. 20—27։ Յովհաննէսի պէս է ասում և Պօղոս առաքեալը՝ թէ. „Որ հաստատեացն զմեզ ձեօք հանդերձ ի Քրիստոս՝ և օծ զմեզ՝ Աստուած է, որ և կնքնացն զմեզ և ետ զառհաւատչեալ (նշանը, կնիքը) Հոգոյն ի սիրոս մեր։» Բ. Կորնթ. Ս. 21—22։ Այստեղից է առած բառս կնիքս աստուածային, որ գործ է ածում քահանան միւռոնով կնքելիս։

Թւում է, թէ Յովհաննէս առաքեալի խօսքը վերաբերում է տեսանելի կամ արտաքին օձման ևս, որի մասին նոր կտակարանը յալտնապէս չէ խօսում, այլ աւելի պարզ խօսում է ծենոնալրութեամբ գրոշմելու կամ կնքելու նկատմամբ։ Այս-

պէս օրինակ՝ երբ Երուսաղէմում գտնաւող առաքեալները լսեցին, թէ Փիլիպպոսի (սարկաւագ) քարոզութեամբ Սամարիակի մէջ ևս արք և կանալք ընդունեցին Աստուծոյ խօսքն ևս մլպտուեցան։ ուղարկեցին նոցա մօտ Պետրոս և Յովհաննէս առաքեալներին, «Որք իջեալ՝ կացին յաղօթս ի վերայ նոցա, որպէս զի առցեն զնոգի սուրբ զի ցայնժամ չեւ եւս էր եւ ոչ ի վերայ միոյն Յիսուսի էին յանուն Տեառն Յիսուսի։ Յայնժամ եղին զծեռս ի վերայ նոցա և առնուին Հոգի սուրբ։» Գործ. Ա. 14—17։

Նմանապէս Եփեսացիք մկրտուեցան Յիսուսի անուամբ, բայց երբ Պօղոսը հրեց իւր ծեռքը նոցա վրայ՝ այն ժամանակ՝ եկն Հոգի սուրբ ի վերայ նոցա։» Գործ. ՃԹ. 5, 6։

Առաքեալների յաջորդներն սկսեցին դրոշմել ս. իւղով փոխանակ ծեռնալրութեան։ Գուցէ այս բանին օրինակ եղաւ Հին ուխտի ժամանակ եղած օծութեան եղանակը։ Տես. Ելից Ա. 25։ Գ. Թագ. Ս. 39։ Առաքեալների աշակերտ Դիոնիսիոս Արիսպագին ասում է. „Սրբազնին աստուածածնելութեան (դրոշմի) կատարողականն պարգև և շնորհք՝ իւղոյն աստուածայնով կատարմամբ կատարի։» Տես ի գիրս եկեղ. քահ. ԳԼ. Դ.։ Մեր եկեղեցին ս. միւռոնի գործածութիւնը Ս. Գրիգոր Լուսաւորչի ժամանակից ունի, ինչպէս վկայում է Ագաթանգեղոսը՝ Տրդատ թագաւորի և ժողովրդի մը-

կըտութեան հանդէսը նկարագրելով։ Եւ ներսէս
ննորհալին՝ Սամոստացոց գրած թղթումն պսում է։
„Սուրբ միւռոնաւն դրոշմեցէք զճակատ և զզակար-
րանսն ասելով. յանուն Հօրե Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։
Դրոշմէ խորհրդի հաստատութիւնն եղաւ
նախ՝ օրինակով, երբ սուրբ Հոգին աղաւնակերպ
իջաւ Յորդանանում Քրիստոսի վրայ, և յետոյ՝ իրա-
պէս հաստատուեց Պենտեկոստէի, կամ Հոգեգալըս-
տեան օրը՝ երբ Յիսուսի խոստման համաձայն Ա.
Հոգին իջաւ վերնատունը առաքեալների վերայ։

գ) ԱՊԱՇԽԱՐՈՒԹԻՒՆ

Ապաշխարութիւնն է խորհուրդ, որով հա-
ւատացեալը խոստովանելով իւր մեղքերը՝ քահա-
նակից յախնապէս լած թողութեան միջոցին՝
գաղտնապէս սրբում՝ է իւր մեղքելոյց նոյն իսկ
Յիսուս Քրիստոսով։ Այս խորհրդի սկիզբը հաս-
տում է մինչև Յովհաննէս Մկրտչի օրելը։ Նորա
մօտ գալիս էին այլ և այլ դասակարգի մարդիկ,
որոց նա քարոզում էր մկրտութիւն ապաշխարու-
թեան՝ մեղքերի թողութեան համար, և նոքա
խոստովանում էին իրանց մեղքերը, Մարկ. Ա. 4,
5։ Ապա Յիսուս խոստացաւ իւր առաքեալներին
տալ իշխանութիւն մեղքերը թողնելու՝ ասելով.
„Ամէն ասեմ ձեզ. զոր կապիցէք յերկրի՝ եղիցի կա-
պեալ յերկինս, և զոր արձակիցէք յերկրի՝ եղիցի

արձակեալ յերկինս։ Մատթ. ֆմ. 18: Պակախը-
լարութիւնից լետոյ՝ իրօք տուաւ խոստացած իշխա-
նութիւնն՝ ասելով. „Առէք զհոգի մարդ, եթէ
ումեք թողուցուք զմեղս, թողեալ լիցինոցա.
եթէ զուրուք ունիցիք, կալեալ լիցի“; Յով. Ի 22,
23: Եկեղեցին պահանջում է ապաշխարողից մեղ-
քերի կատարեալ զղուժն, դիտաւորդիթիւն իւր
կեանքը հոգեորապէս բարձոքելու, Հաւատի Քրիս-
տոս. և յուս նորա ողորմածութիւնն վերայ. «Զի որ
ըստ Աստուծոյն տրտմութիւննէ, ապաշխարութիւն
ի Քրիութիւն առանց զղանալոյ գործէ։ իսկ աշ-
խարհի տրտմութիւն մահ գործէ» Բ. Կորնթ. Ե.
10: „Եւ ի դառնալ մեղաւորին յանօրէնութենէ
իւրմէ՝ և առնիցէ իրաւունս և արդարութիւն, նո-
քիմբք կեցցէ։ Եզեկիէլ. Լ. Գ. 19: «Նմա (Յիսուսի
Քրիստոսի) ամենալն մարգարէքն վկայեն, թողու-
թիւն մեղաց առնուլ անուամբ նորա ամենալն
հաւատացելոց ի նա։» Գործ. Ժ. 43:
Կան և այլ միջոցներ՝ սրտերն ապաշխարու-
թեան նախապատրաստելու, և են օժանդակ միջոց-
ներ. օրինակ՝ սկանք և աղօթք։ Կայ և մի այլ մի-
ջոց, որ սուրբ եկեղեցին զործ է դնում ապաշխարող
մեղաւորի խղճմտանքը մաքրելու և խաղաղացնելու
նովատակով. այդ միջոցը կոչում է աւալաշիարանք։
Հանգամանքներին նայելով եկեղեցին իւր պաշտօնեա-
ների ձեռքով առաջադրում է ապաշխարողին մի քանի
բարեպաշտական հրահանգներ, անարդարութեան հա-

մար հատուցումն անելու և յանցաւոր ձգտումներին յաղթելու համար. օրինակ՝ ժուժկալութեան ընտելաց- նող պահեցողութիւն, բարեգործական զոհաբերու- թիւն, հրաժարումն պէս պէս վայելքներից և ծանր կամ մեծամեծ յանցանքների համար՝ որոշ ժամա- նակով զըկումն հաղորդութեան Ա. խորհրդից: Սակայն այս ամեն սահմանափակութեանց ժամա- նակ՝ պէտք է դեկավարուիլ առաքեալի խօսքով. «Զի մի յառաւել տրտմութենէն ընկղմեսցի այնպի- սին» (մեղաւորն): Բ. Կորնթ. Բ.:

Դ) ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ

Հաղորդութիւնն այն խորհուրդն է, որին հա- տառացողը՝ հացի և գինու տեսակի տակ՝ ճաշակում է Քրիստոսի ճշմարիտ Մարմինն ու Արիւնը՝ յաւի- տենական կեանք ունենալու համար: Այս խորհուր- դը սահմանեց Տէր Յիսուս Քրիստոսն իւր չարչա- րանքից փոքր ինչ առաջ՝ իւր Փրկարար չարչարանքի կենդանի պատկերը նորա մէջ յառաջադոյն նկարա- գրելով, և առաքեալներին հաղորդելով. նոցա պատ- ուէր տուաւ միշտ կատարել այս խորհուրդն իւր լիշտակի համար. „Զայս արարէք առ իմու լիշտ- ակի”:¹ Այս խորհուրդը կազմում է քրիստոնէական աստուածալաշտութեան կարգի էական մասը: Աստ- ուածալաշտութեան այն մասը, որի մէջ կատարում

է խորհուրդն՝ կոչում է Ա. պատարագ (Զոհ): Տեղը, ուր որ մատչելու է ս. պատարագը՝ անշոշտ ս. եկեղեցու կամ տաճարի Սեղանն է, թէպէտև հար- կաւոր ժամանակ կարելի է պատարագ մտտուցանել շարժական, օձեալ վէմի վրայ ևս վրանի տակ, որ- պէս արին Վարդանանք ազգային մեծ պատերազմի ժամանակ՝ ինչպէս վկայում է Եղիշէն. „Եւ սեղան՝ ուղղեալ զամենասուրբ խորհուրդն կատարեցին“: Այս խորհուրդը պատարագ է կոչում, որովհետև Քրիստոս իւր մարմնովն ու արիւնով Ա. Սեղանի վրայ խորհրդապէս պատարագում է, ինչպէս որ պատարագուեցաւ խաչի վրայ: Ասում է Տէրունա- կան ընթրիք, կամ վերջէն ընթրեաց խորհուրդ, որովհետև Յիսուս այս խորհուրդը սահմանեց իւր Երկրաւոր կեանքի վերջին Երեկոյի ընթրիքն ուտե- լիս: Յիսուս այդ Երեկոյին աշակերտների հետ ու- տում էր զատկական գառը, որ իւր զենման նախա- նկար օրինակն էր: Կոչում է Հաղորդութիւն, որով- հետև Տիրոջ Մարմինն ու Արիւնը ճաշակելով հա- ղորդում, միաւորում ենք հոգեպէս Քրիստոսի հետ, և սորանով բոլորս միանում ենք ի Քրիստոս, իբրև մի մարմին. «Զի ամենէքին ի միոցէ հացէ անտի վայելեմք»: Ա. Կորնթ. Բ. 17: Կոչում է հաց բնկանել և օրհնութիւն կամ գոհութիւն (Գործ. Բ. 42—46. Բ. 7 և ալիս), որովհետև կա- տարուում է օրհնութեամբ, գոհութեամբ և բեկ- մամբ հացի. ըստ որում այս խորհուրդը սահմանե-

լիս՝ „Առ Յիսուս Հաց, օրիննաց և եթեկ...“ և
առեալ բաժակ գոհացաւ... և օրիննեցին... և զո-
հացեալ ելին ի լեառն Զիթենեաց։ Մատթ. Իջ.
26—36։ Մարկ. ԺԴ. 22—26։ Ղուկ. ԻԲ. 19. Ս.
Կորնթ. ԺԱ. 23—29։ Եւ վերջապէս կոչում է
պարզապէս խորհուրդ, վասն զի խորհուրդ է Տի-
րոջ Մարմոյ եւ Արեան, չարշարանին եւ մահ-
ուան, խորհուրդ՝ բովանդակ փրկարգութեան։

Հաղորդութեան խորհրդի զգալի նիւթերն
են ցույնի հացեն և խաղողի զինին։ Հացը լինում
է անխմժոր (բաղարջ) և գինին անջրահիառն կամ
անսալակ։ Այսպէս անելու պատճառն է բուն նախ-
նական աւանդութիւնն և Հրէից օրինական սովո-
րութիւնը։ Պատէքի տօնն էր, երբ Յիսուս սահմա-
նեց այս խորհուրդը, ուրեմն ըստ օրինական սովո-
րութեան (Ելից ԺԲ. 15) անխմժոր կամ բաղարջ էր
այն հացը, որը բեկեց Յիսուս։ Ըստ աւանդութեան
առաքեալների ժամանակից միսած մինչև արևելեան
և արեւմտեան եկեղեցիների բաժանուիլը, բոլոր ե-
կեղեցիք անխմժոր հաց էին գործածում Ս. խորհրդիս
մէջ։ Այն բաժանումից մինչև ցայսօր ևս՝ Հայու-
տանեալց և ուրիշ շատ եկեղեցիներ գարձեալ պա-
հեցին բաղարջ հացի գործածութիւնը։ Նմանապէս
Յիսուսի սահմանակարդ խօսքի մէջ լոկ զինի է լիշ-
ուած։ և այն՝ որիցի բերը։

Հայոց եկեղեցին այս մասի մէջ ևս աւանդա-
պահ մնաց և Լուսաւորչից ընդունածը չըփոխեց,

ինչպէս և Ներսէս շնորհալին է գըում։ Հացի և
գինու նուելները ժողովուրդն էր բերում, որ եկե-
ղեցու հետ հաղորդութեան մէջ լինելու նշանն էր։
Այս խորհրդի էական լուսքը, կամ կերպական
ձեն էր ասել. «Առէք կերէք, այս է մարմին իմ,
որ վասն ձեր և բազմաց բաշխի ի քաւութիւն և
ի թողութիւն մեղաց։ Արբէք ի սմանէ ամենեքեան,
այս է արիւն իմ նորոյ ուխտի, որ վասն ձեր և
բազմաց հեղանի ի քաւութիւն և ի թողութիւն մե-
ղաց։ Որովհետեւ ինքն Յիսուս ասաց. «Եթէ ոչ
կերիջիք զմարմին Որդոյ մարդոյ, և արբջիք զարիւն
նորա, ոչ ունիք կեանս յանձինս. — Որ ուտէ զմար-
մին իմ և բմպէ զարիւն իմ, ունի զկեանս յաւիտե-
նականս, և ես յարուցից զնա յաւուրն լետնում»։
«Որ ուտէ զմարմին իմ և բմպէ զարիւն իմ, լիս
բնակեացէ և ես ի նմա։ Յովհ. Զ. 54—57։ Այս
աստուածալին խօսքերից հետեւում է, որ ամենայն
քրիստոնեալ, ինչ հասակի և լինի՝ պէտք է հաղոր-
դուի Յիսուսի հետ՝ ճաշակելով նորա Մարմինն ու
Արիւնը, որ ունենայ յաւիտենական կեանք։ Հայս-
տանեալց եկեղեցին սկզբից մինչև ցայսօր հաղոր-
դում է Յիսուսի Քրիստոսի կենարար Մարմնովն ու
Արիւնով թէ չափահաս և թէ անչափահաս հաւա-
տացեալներին, որպէս անում են բոլոր արևելեան
եկեղեցիք։ Հովովմէական եկեղեցին Սկիհի մէջ սրբա-
գործած հացիցն և գինուց չէ հաղորդում ժողովր-
դին, այլ միայն պատարագիչ քահանան է ճաշա-

կում նորանից՝ տսելով, ու ասս իմ և յաղագս ամենեցուն, ։ Ժողովրդին ըլսրբազործուած հացից միայն մասն է տալիս, իսկ Ս. Արիւնից միանդամայն անմնան է թողնում նրան։ Բայի սորանից չէ հաղորդում մանուկներին, մինչեւ որ տասն և երեք տարեկան ըլլինին։

Հոռմէական եկեղեցուց բաժանուած բողոքական եկեղեցիներն եւս մանուկներին չեն հաղորդում մինչեւ նոցա 15—16 տարեկան լինելը։ Բողոքական եկեղեցիները չեն ընդունում սըբագործուած հացը, որպէս խակական Արիւն Յիսուս Քրիստոսի, այլ համարում են լոկ նշանակը միմիայն լոկ հաց և լոկ գինի Ե՛տրիշուինչ։ Եթէ չենք կամենում թերահաւատութեան և ամբարշտութեան մատնուկ՝ պէտք Ե՛հաւատանք Ս. Գրքի խօսքին միայն։ Խնքն Յիսուս Քրիստոս է ասում։ «Այս է մարմին իմ, և ոչ թէ իմ մարմնիս նշանակը կամ օրինակը։ Եթէ այդ ասողը Քրիստոս ինքն է, ապա ովք կարող է նորանից լաւ և ճիշտ իմանալ այդ խորհրդի էութիւնը։ Եթէ այն հացն ու գինին տէրունական խօսքի գորութեամբ սըբագործուելով չըգոյափոխուեին, այլ մնային լոկ հաց և լոկ գինի, էլ ինչու կասէր առաքեալը, թէ Ա. Յուսուհետեւ որ ուտիցէ զհացս, կամ ըմպիցէ զբաժակս Տեառն անարժանութեամբ, արտական եղիցի մարմնոյ եւ արեան Տեառն. փորձեսցէ մարդ զանձն իրը, և ապա ի հացէ անտի

կերիցէ, և ի բաժակէն արբցէ, զի որ ուտէ եւ ըմպէ անարժանութեամբ, դատաստանս անձին իւրամ ուտէ, և ըմպէ, զի ոչ իւտրէ զմարմինն Տեառն։ Ա. Կորնթ. ՖԱ. 26—29։ Պարզ է ուրեմն, որ այն հացն ու գինին բողոքականների անածի պէս Քրիստոսի Մարմնի և Ս. Պետր Նշանակները չեն, այլ հացի և գինու տեսակի տակ Տիրոջ բուն Մարմինն ու Արիւնն են, ապա թէ այդպէս ըլլինէր, ինչ հարկ կար, որ առաքեալը հրամայէր, որ մարդ նախ փորձէ իւր անձն և ապա ուտէ և ըմպէ այն, որպէս զի չըգատապարտուի։ Եւ ուրեմն՝ նոքա, որ չեն խտրում Տիրոջ մարմինն և արիւնը, դատապարտելի են և հակառակ Քրիստոսին և նորա առաքեալին։ «Փորձեսցէ մարդ զանձն, ասելով առաքեալը կամենում է, որ մենք նախապատրաստուած մերձենանք այն Ս. Խորհրդին։ Նախապատրաստութեան համար պահանջում է մեղքերից մաքրուել խոստովանութեամբ, և ապաշխարութեամբ, հրաժարուել մարմնական անվայել ըղձերից և եռանդրուն փափակ և դիտառքութիւն ունենալ մնալու աստուածացին պատուիրանապահութեան մէջ։ Նոքա, արոնք արժանավայել նախապատրաստութեամբ, հաւատով, յուսով և լիակատար սիրով կը հազորդուին, կը նդունին թողութիւն իրանց մեղքերին, կը միանամ Քրիստոսի հետ հոգով և արժանի կը լինին ժառանգել յափուենական կեանքը։ Արիւնն Յիսուսի Որդւոյ նորա սըբ-

բէ զմեղ յամենալն մեղաց : Ա. Յովհ. Ա. 17: Եթէ ոք ուտիցէ ի հացէ յալմանէ արկեցցէ ի յաւիտեան : Յովհ. Զա 51—55: անգործ պարագան առաջանալ ու մաս դժուանգաղ ցըմք միւտի զիննայան առաջանալ ու յարակ ի ցանց շահման մրգած առանասսպագ դայուն ու յա այսպիս և ե) ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ անձաւ պայման հայութանը անմասն նախածնողներին զուգեց ալս խօսքով . “ և եղիցին երկորեան ի մարմին մի “ . և օրհնեց ասելով . „ Ամեցէք եւ բազմացարուք “ : Սորանով ամուսնութեան և միակնութեան հիմն դրաւ : Յիսուս Քրիստոս այս միաւորութիւնն անբաժանելի եւ անլուծանելի արաւ ասելով . « Ապա ուրեմն ոչ են երկու (ալր և կին)՝ ալլ մի մարմին : Արդ զոր Աստուած զուգեւաց՝ մնարդ մի՛ մեկնեացէ : » Մատթ. Փթ. 6: « Պօղոս առաքեալն իսկ ամուսնութիւնը Քրիստոսի և Եկեղեցու միութեան նմանեցնելով ասաց . « խորհուրդս այս մեծ է, բայց ես ասեմ իսկ ի Քրիստոս և յեկեղեցի : » Եփես. Ե.—32: Մի ալլ տեղում ևս ասաց . « Պատուական է ամուսնութիւնը և սուրբ են անկողինք : »

—Եկեղեցու այս մեծ խորհրդով՝ վեսման ու հարսն ազատ և փոխադարձ հաւանութեամբ նշանւում և Եկեղեցու ու քահանալի օրհնութեամբ

այսակւում են՝ ուվատելով մնալ ցմ՞ահ միմեանց հաւատարիմ , և զաւակներ սնուցանել քրիստոնէական հոգւով , ընդարձակել Քրիստոսի Եկեղեցին . Եյարատեա անել մարդկալին ցեղը բարեսնունդ անդամներով :

Բոլոր քրիստոնեայ Եկեղեցիները , բացի բողոքականից՝ ամուսնութիւնն ընդունում են իբրև խորհուրդ , իսկ ոչ — քրիստոնեաները՝ իբրև քաղաքական կամ ընկերական դաշնագրութիւն : Բողոքական Եկեղեցիները թէպէտեա ամուսնութիւնը խորհուրդ չեն համարում , բայց ընդունում են , որ ամուսնութիւննը պէտք է լինի ցկեանս միաւորութիւն առն եւ կնոջ :

Քրիստոս սահմանեց՝ ամուսնութիւնն իբրև աստուածային մշտատե հաստատութիւն , և կին արձակելին արգելեց , բացի մի պատճառից միայն : Կին արձակելու մասին Հարցնող փարիսեցնոյն ասաց . « Ապաքէն ասացաւ , թէ որ անձակիցէ զիկն իւր՝ տացէ նմա զարձակմանն : Բայց ես ասեմ ձեզ . եթէ ամենայն որ արձակէ զիկն իւր առանց բանի պոռնկութեան , նա տայ նմա շնալ , և որ զարձակեալն առնէ շնայ : » Մատթ. Ե . 31—32: Մարկոսի 2—13: Ղուկ. ՓԶ. 18:

Մովսէսի Հրամայած արձակման պատճառը Յիսուս վերագրում է Հրէց խստասրտութեան : Խըստասիրա հրէաներն արձակում էին իրանց կնոջն ըստ ամենալն վնասու : ալսինքն՝ ամենալն մի

յանցանքի համար։ Կնոջ յանցաւորութեան քննիչն և դատավորն ալըն էր. ուստի երբ կամենար՝ արձակում էր առանց խղճահարուելու, որովհետեւ օրէնքն այդ թող էր տալիս. Փրկիչն արգելեց այդ կամայականութիւնն և արձակելու համար ճանաչեց միակ պատճառ պղոնկութիւնը, կամ ամուսնական հաւատարմութեան խախտումն։ Այսպիսով՝ ամուսնութեան և ընտանիքի հիմքը հաստատեց սիրոյ եւ հաւատարմութեան վրայ։ Ս. յդ սիրոյ և հաւատարմութեան համար ահա թէ ինչ է պատուիրում առաքեալը. „Ա՛րք, սիրեցէ՞ր զկանայս ձեր, որպէս և Քրիստոս սիրեաց զեկեղեցի, և զանձն իւր մատոնեաց վասն նորա... Պարտին արք սիրել զիւրեանց կանայն՝ իւրեւ զիւրեանց մարմինս. որ սիրէ զկին իւր՝ զանձն իւր սիրէ...“։ „Իւրաքանչիւր ոք զիւր կին այնպէս սիրեցէ՝ իւրեւ զիւր անձն, և կին երկնչիցի յառնէ իւրմէ։ Եփես. Ե. 25—33։ „Խորհուրդս այս մեծ է, բայց ես ասեմ իսկ ի Քրիստոս և յեկեղեցի“։ (անդ 33)։ „Որպէս եկեղեցին հնագանդ լինի Քրիստոսի, նոյնպէս և կանայք իւրեանց արանց յամենալի“։ (անդ 24)։

Երբ այրն իւր կնոջը կը սիրէ, և կը սիրէ իւր անձը զոհելու չափ, կը սիրէ իւր անձի պէս՝ իսկ կինը նորան ոչ միայն կը սիրէ փոխագարձաւը, այլև յամենալի հնագանդ կը լինի նորան՝ ինչպէս եկեղեցին Քրիստոսի, արսինքն, ոչ թէ հարկից ստիպուած, այլ սիրուց շարժուած՝ ազատակամ, արդարւ

այնպիսի ամուսինների մէջ ամուսնական ուխտի հաստատութեան և փոխագարձ հաւատարմութեան մասին ոչ մի տարակուսանկը լինել չէ կարող։ Սուաջին և երկրորդ ամուսնութեան պատկե հրաման է տալիս եկեղեցական օրէնքը, երբորդը ներելի է համարում, իսկ չորրորդն և աւելին անկանոն է նոյն օրէնքով և պախարակելի։

զ) ՕՃՈՒԽՄՆ ՀԻՒԱՆԴԱՑ

Այս խորհուրդը սահմանեց Յիսուս Քրիստոս՝ հաւատ պահանջելով ախտամէտներից և պատուիլուելով՝ այլ ևս չմեղանչել՝ բժշկուելոց յետոյ։ Եւ հաստատեց իշխանութիւն տալով իւր աշակերտներին՝ հիւանդների վրա ձեռք դնելու և մեղքերը թողնելու. „Եւ կոչեցեալ առ ինքն զերկոտասանեսին աշակերտան իւր, եւո նոցա իշխանութիւն այսոց պղծոց հանել զնոսա, և բժշկել զամենան ցաւս և զամենալն հիւանդութիւնն“։ Մատթ. Ժ. 1։ «Զիւանդս բժշկեցէք, զբորոսս սրբեցէք, զդես հանեք»։ (անդ 8)։

Այս իշխանութեամբ զինուած՝ Դես բազումս հանեին և օծանէին իւղով զբազում հիւանդս, և բժշկէին զնոսա, Մարկ. Զ. 13։ Առաքեալներն ևս եկեղեցու պաշտօնեաներին պատուիրեցին կատարել այդ խորհուրդը հիւանդների վրայ։ Յակոբոս առա-

քեալն ասում է. „Հիւանդանայցէ ոք ի ձէնջ, կոչեսցեն զերիցունս եկեղեցւոյն, և արասցեն ի վերաց նորա աղօթս, օծցեն իւղով լանուն Տեառն. և աղօթքն հաւատովը՝ փրկեսցէ զաշխատեալն, և յարուացէ զնա Տէր, և եթէ մեղս ինչ իցէ՝ գործեալ՝ թողցին նմա...։ Քանզի լոդ զօրաւոր են աղօթք արդարոյ լօգնականութիւնն։ Յակ. Ե. 14—16։ Այս առաքելական բացատրութիւնից երևում է, որ խորհրդիս էական մասերն են հիւանդի կողմից հաւատն, եկեղեցու պաշտօնէի կողմից աղօթքը, իսկ օժանդակ նիւթական միջոցն է՝ օրհնած իւղով հիւանդի զգայարաններն օծեն։ Բայց մեր եկեղեցին այս խորհրդի մէջ երեկք չըգործածեց օրհնած իւղ (որ միւռոնը չէ), որպէսկետե՛, Ոչ իւղն տայր առողջութիւն հիւանդին, ալլ անուն Տեառն։ որ Ս. Նորհալին է ասում։ Յակոբոսի Ե. 14-ի մեկնութեան ծԱ. Ճառում։ Այս խորհուրդը կատարում է մեր ծիսարանի մէջ սահմանուած աղօթքների և բժշկութեան Սւետարանի ընթերցուածներով և հիւանդի վրայ ձեռք դնելով։

և օծմամբ՝ տալիս է արժանապէս ընտրեալին իշխանութիւն եւ շնորհ հովուել Քրիստոսի հօան եւ կատարել Ս. Խորհուրդները։ Սորան վկայում է առաքեալն ասելով։ „Ալսպէս համարեսցին զմեզ մարդիկ, իբրև պաշտօնեայց Քրիստոսի եւ հազարապետու խորհրդոցն Աստուծոյ։ Ա. Կորնթ. 4. 1։ Զգուշ կացէք անձանց և ամենալին հօտիղ, յորում եղ զգեղ չողին սուրբ տեսուչը՝ հովուել զժողովուրդ Տեառն, զոր ապրեցոյց արեամբն իւրով, Գործ. Ի. 28։ Հովուել ժողովուրդը՝ նշանակում է դաստիարակել հաւատացեալներին հաւատի, բարեպաշտութեան և բարի գործերի մէջ։ Զեռնադրութեան խորհուրդը սահմանեց ինքն Յիսուս Քրիստոս՝ Բեթանիա կամ Զիթենեաց լերան վրայ։ Նա իւր աստուածալին ձեռքերը բարձրացրեց և օրհնեց նոցա, որպէս վկայում է Ս. Գիրքն՝ ասելով. „Եհան զնոսա մինչև ի թեթանիա, եւ ամբարձեալ զծեու իւր՝ օրհնեաց զնոսա։ Պուկաս իԴ. 50։

Սուաքեալներն իշխանութիւն առնելով՝ ձեռնադրեցին իրանց համար լաջորդներ։ Օրինակ՝ Ս. Հոգու ազդմամբ ձեռնադրեցին Բառնաբասին և Սաւլոսին (Պողոսին), ապա ուղարկեցին Աստուծոյ գործին։ „Մինչդեռ ի պաշտման Տեառն կալին (առաքեալք) և պահէին, ասէ Հոգին սուրբ. Որոշեցէք ինձ զհառնաբաս և զՍաւզոս ի գործ՝ յոր կոչեցեալ է իմ զդոսա. Յայնժամ պահեալ և աղօթս

արարեալ, եղին ծեռն ի վերայ նոցաւ և արձակեցին: Գործ. մ. 2. Յ: Բառնաբասն ու Պողոսը ձեռնադրութեամբ ստանալով Ա. Հոգու շնորհն և առաքելութեան իշխանութիւն՝ շրջեցան զանազան երկիրներ և ձեռնադրեցին նոցա ըստ Եկեղեցեաց երիցունա: աղօթս արարեալ հանդերձ պահովք, յանձն արարին զնոսա Տեառն, Գործ. մ. 22: Պօղոս առաքեալն իւր աշակերտ Տիտոսին զրում է. Վասն այնորիկ իսկ թողի զքեզ ի կրետէ, զի որ ինչ միանգամ պակաս իցէ ուղղեցեա. Եւ կացուցիս ըստ քաղաքաց երիցունա, որպէս և ես քեզ պատուիրեցի: Տիտ. Ա. 5:

Եկեղեցու պաշտօններն աստիճաններ ունին. այս պատճառով է, որ ձեռնադրութեան խորհուրդը կոչում է կարգ: Կարգը բաժանուում է նախ՝ երկու դասի: Առաջին դասի մէջ են հինգ փորքը կամ ստորին աստիճանները, երկրորդ դասի մէջ՝ երկու Մեծ կամ Վերին աստիճանները: Փորքը աստիճաններն են. 1, Գոռնապանութիւն, 2, Ընթերցանութիւն, 3, Երդմնեցուցչութիւն, 4) Զահընկալութիւն և 5, Կիսամարկաւագութիւն: Նոքա անուանում են Գլուխը, որք այդ աստիճաններն ունին և Ա. Խորհուրդների սպասաւորներ են միտն: Մեծ աստիճաններն են. 6, Սարկաւագութիւնը, որ սկսում է կիսամարկաւագութիւնից և 7, Քահանայութիւն: Եպիսկոպոսն և Կաթողիկոսն ևս ըստ կարգի քահանայ են, բայց քահանայից զա-

նազանւում են իրանց պաշտօնի և իշխանութեան գերազանցութեամբը միայն: Կարգի աստիճանը տրւում է Եպիսկոպոսից: Առաջինից մինչեւ վեցերորդ աստիճանները տրւում են աղօթքով և ձեռնադրութեամբ, իսկ 7-ը՝ նաև օծմամբ:

Քահանայի պաշտօնն է Կատարել Ա. Խորհուրդները՝ բացի կարգի խորհրդից՝ և հովուել ժողովուրդը: Եպիսկոպոսն է կարգի աստիճաններ տուողը. նա ձեռնադրում է և՛ վարդապետներ: Վարդապետը կամ արեղան կուսակրօն քահանայ է, որ քահանայարուց զինի Եպիսկոպոսից յատուկ օրհնութիւնով ստանում է վեղար, և յետոյ՝ որոշ արարողութեամբ նաև գաւազան և ծայրագոյն վարդապետութիւն: Կաթուղիկոսութիւնն եկեղեցական ծայրագոյն իշխանութիւնն է, ուստի և Կաթուղիկոսը կոչում է նաև քահանայապետ և Եպիսկոպոսամբետ, որ տրւում է առանձին արարողութեամբ և օծմամբ՝ ըստ սովորութեան եկեղեցու՝ 12 Եպիսկոպոսների ձեռնադրութեամբ: Նա ձեռնադրում է վարդապետներին Եպիսկոպոս, օրհնում է Ա Միւռոն, Կառավարում է Եկեղեցին առաքելական իշխանութեամբ և գերազոյն պետն է բոլոր հոգևորական դասի: Ամենայն Հայոց Կաթուղիկոսն է Ա. Թաղէոս և Բարդուղիմէոս առաքեալների և Ա. Գրիգոր Լուսաւորչի յաջորդն ու գահակալը: Հայաստանեալց Եկեղեցու բոլոր պաշտօնեաներն ընտրւում են Եկեղեցուց, ալինքն ժողովրդից: Քա-

Հանայացում ընտրւում է այն մասնական եկեղեցուց, որի հովիւն է լինելու, եպիսկոպոսն այն թեմից, որի հոգևոր տեսուչն է լինելու, Կաթողիկոսը՝ բրոր եկեղեցուց, այսինքն հաւանութեամբ համօրէն ազգի։ Ազգն ուղարկում է իւր հոգևոր և աշխարհական պատգամաւորներին Մայր Աթոռը Ա. Եջմիածին, ուր և ընտրւում է վիճակով եկեղեցու բարձրաստիճան պաշտօնեաներից մէկն և այնուհետեւ՝ օծում է 12 եպիսկոպոսներից Հայրապետ կամ Կաթողիկոս ամենայն Հայոց։ Այդպէս էր լինում մեր եկեղեցու նախնական սովորութեան համաձայն 1)։ Ա. Գիրքը պահանջում է, որ եկեղեցու պաշտօնեան լինի

նախ՝ Աստուծուց ընտրուած (Բ. Կորնթ. ֆ. 18): Երկրորդ՝ հմուտ Ա. Դրոց. Ա. Տիմ. Դ. 15—16: Բ. Տիմ. Բ. 1—2: Ովսէ. Դ. 6: Երրորդ՝ ունենայ հոգի եւ ջանք առարելական։ Բ. Կորնթ. Զ. 4: Ա. Տիմ. Գ. 2: Բ. Տիմ. Բ. 24 և այն։ Եբբ Ճ. 17: Եփես. Դ. 11—16: Բ. Կորնթ. Ճ. 19 և այն։ Առաքելական հոգի և ջանք ունին նոքա, որոնք ամեն ժամանակ և ամեն տեղ ուսուցանում են քրիստոնէական հաւատի ճշմարտութիւնները, արթնու-

1) Այժմ՝ ըստ Պետական օրինաց՝ պատգամաւորներն ընտրում են երկու Կաթողիկոսացու, որից մէկին հաստատում է Կայսրը Բարձրագոյն հրովարտակով և ապա հաստատուածն օծում է Կաթուղիկոս։

թեամբ հսկում են հօտի վրայ, հովում և բարգաւաճեցնելու մասնակի լինեցին իմաստութեամբ, հաւատարիմ են աստիւծալին, խորհուրդներին, բարձրագույն հակառակորդներին, և իրանց բարի օրինակներով առաջնորդում են հաւատացեալներին դէպի աստիւծանաշտութիւն, վարքի արքութիւն և վրկութիւն։ Առաջանց ա դա Զօրբորդ՝ որ ընտրուի բովանդակ եկեղեցուց, որի հավիւր պիտի լինի, և բարի վկայութիւն ունենայ ամենքից։ Ա. Տիմ. Գ. 7: մասնաւ սովորութիւնորա վարքի և բարքի արքութիւնը։ Ա. Տիմ. Գ. 9—10:

Աեցերորդ՝ կատարելահասակ, և մարմնով և անթերի լինի? (Բ. Տիմ. Գ. 9: Ա. Տիմ. Գ. 4—6: Դւտ. Ի. Ա. 17—25): Ճախի Հոգ առ առ առ առ առ Անարժան պաշտօնեաները։ Ա. Գիրքի վկայութեամբ՝ նոքա են, որոնք տղետ են Ա. Գրքի և Ա. Աստուծու շնորհաց տնտեսութեան, են մարդահաճ, ագահ, արծաթասէր, խարդախ, խաթեթակ, արբեցող, աշխարհամէր, փառասէր, գահսասէր՝ այլոց վրայ տիրելու ցանկութեամբ տղորուած, անձնապանծ, կոռաւարար, ընկերատեաց, կարգագանց, անզգամ, Աւետարանի աղճատող, ալլափառ վարդապետութեան հնարող և ուսուցանող և այն։

Ախմախների համար պահանձ է սոսկակի դատապարտութիւն։ Միք. Գ. 6—7: Երեմ. Լ. 9. 29—

31: Գաղատ. Ա. 8—9: Բ. Պետր. Բ. 1—3: Յայտ.
ԵԲ. 18—19:

Այսպիսի թերութիւններ ունեցողներին ձեռ-
նադրելուց զգուշացնում է առաքեալն՝ ասելով, «Զե-
ռըս վաղվաղակի լուրուք վերալ մի դնիցես, և մի
կցորդ լինիցիս մեղաց օտարաց»: Ա. Տիմ. Ե. 22:

Իսկ մարգարէն այսպէս է ասում Աստուծոյ
կողմից. «Զի դու զգիտութիւն մերժեցեր, մերժեցից
և ես զքեզ՝ զի մի քահանարացիս ինձ»: Ովսէ. Պ. 6:

Ը) ՇՆՈՐՀԱԲԱՇԽՈՒԹԻՒՆ

Նորհք են կոչում աստուածալին ամենակարո-
ղութեամբ եղած բոլոր ներգործութիւնները, որոնք
ընդունողի միտքն ու կամքը շարժում են գործել
բարին, գեղեցիկն և օգտակարը, և ընդունողին օդ-
նում են այդ ամենը կատարելու:

Աստուածալին շնորհաց միջոցով է լինում մեր
մտքի լուսաւորութիւնը, մեղքերի թողութիւնն և
արդարացումն, դէսկի բարին գիմելը, բարեգործու-
թեան մէջ բարդաւաճումն և յաւիտենական երա-
նութեան արժանաւորիլը: Աստուածալին շնորհաց
ընդունելութիւնը լինում է եկեղեցու խորհրդնե-
րի միջոցով, աստուածալին պատուիրանները պահե-
լով, բարեկալաշտութեան մէջ զարդանալով և հոգե-
ւոր իսնդրուածներով:

”Մի անվոլթ առներ զնորհացդ որի քեզ են,
որ տուաւ քեզ մարդարութեամբ ի ձեռնադրութե-
նէ երկցութեան»: Ա. Տիմ. Պ. 14: „Նորհքն ի
բազմաց յանցուածոցն (ածէ) յարդարութիւնն»; Հը-
ռով. Ե. 16:

„Զօրութիւն է Տէր երկիւղածաց իւրոց»: Սաղմ.:

„Արդարացեալք շնորհօքն եղիցուք ժառան-
դաւորք լուսով կենացն յաւիտենականաց»: Տիմ. Պ.

7. „Տէր ամբարտաւանից հակառակ կար, տայշնորհս
խոնարհաց»: Առակ. Պ. 34: „Թոշակն մեղաց՝
մահէ, այլ շնորհքն Աստուծոյ՝ կեանք յաւիտենից»:
Հռով. Զ. 23:

ԺԱ. ՅՈՒՐԻԱԾ

Մեռելոց յարութիւն ասելով ինչ ենք հասկա-
նում: — Աստուածալին ամենակարողութեան մի ներ-
գործութիւն, որով բոլոր մեռեալ մարդոց մարմին-
ները յառնելով՝ պիտի միանան իրանց հոգիների հետ
և կենդանանալով՝ դառնալու են հոգեսոր և ան-
մահ: Լոտ այսմ և ասում է առաքեալը. «Մերմա-
նի մարմին շնչաւոր՝ և յառնէ մարմին հոգեսոր. ե-
թէ զոյ մարմին շնչաւոր, զոյ և հոգեսոր»: Ա. Կո-
րընթ. ԺԵ. 44: «Զ պարտի է ապականութեանս

բովք, և յախժամ հատուցէ իւրաքանչիւր ըստ գործս իւր։։ Մատթ. ԺԶ. 27։

Յաւիտենական կամ ապագայ կեանքն ուրեմն այն կեանքն է, որ լինելու է մեռելոց յարութիւնից և հասարակաց դատաստանից լետով։

Այս կեանքը հաւատացեալների, աստուածամերների և բարեգործների համար այնքան երջանիկ պէտք է լինի, որ մենք այժմ երևակալել անգամ չենք կարող։ „Զե ևս է յայտ՝ եթէ զինչ լինելոց իցեմք“։ Ա. Յովհ. Գ. 2։ Իսկ Թօղոս առաքեալն ասում է. „Դիտեմ այլ մի ի Քրիստոս... զի յափշտակեցաւ ի դրախտն, և լուաւ քանա՞անձառն, զորոց է պարտ մարդոյ խօսիլ“։ Բ. Կորնթ. մ. Բ. 2. 4։

Այս անճառելի երանութիւնն արդարները սիետի վայելեն՝ տեսնելով ամենակալ Աստուծուն իւր լուսոյ և փառաց մէջ և նորա հետ միաւորուելով։ Այժմ տեսանեմք իբրև ընդ հայելի օրինակաւ, այլ յախժամ դէմ յանդիման. այժմ խելամուտ եմ փոքր ի շատէ, այլ յախժամ զիտացից՝ որպէս և նախնեաւ զիս“։ Ա. Կորնթ. ԺԳ. 12։ „Յախժամ արդարքն ծագեսցեն իբրև զարեգակն յարքայութեան երկնից, որ ունիցի ականջս լսելով՝ լուիցէ“։ Մատթ. ԺԳ. 43։ „Զի եղիցի Աստուծած ամենայն յամենայնի“։ Ա. Կորնթ. ԺԵ. 28։ Ամենքն ևս հաւասարապէս չեն լինիլ երջանիկ, այլ պէս-պէս չափով, նախելով՝ թէ ով և որչափ բարգաւաճեցաւ այստեղ յաւատի, սիրոյ և բարեգործութեան մէջ։

Այդ բացատրում է առաքեալն այսպէս. „Այլ փառք (են) արեգական, և այլ փառք լուսնի; Այլ փառք ասուեղաց. և աստղ քան զաստղ առաւելէ փառօք։ Նորնպէս և յարութիւն մեռելոց“։ Ա. Կորնթ. ԺԵ. 41—42։

Բայց ինչ է լինելու անհաւատների և անօրէնների վիճակը։ Նոքա պիտի դատապարտուին յաւիտենական տանջանքների։ „Եւ երթիցին նոքա ի առանջանսն յաւիտենականս, և արդարքն ի կեանը յաւիտենականս“։ Մատթ. ԻԵ. 46։

Ինչ օգուտ ունի մտածելը մահուան, յարութեան, վերջին դատաստանի, յաւիտենական երջանկութեան և յաւիտենական տանջանքի մասին։ Այդ ամենի վրայ մտածելն այն օգուտն ունի, որ օգնում է մեզ զապել մեր հակումները դէպի մեղքը, հեռանալ դէպի երկրաւոր բաները մեր ունեցած կրքերից, կամ չափաւորել այն կրքերը. իսկ երկրաւոր բարքերներից զըկուածներին այդ մտածմունքը միսիթարում է և քաջալերում, արծարծում է մեր մէջ մաքուր կեանք վարելու, Աստուծոյ համար մէջ մաքուր կեանք զարելու, յաւիտենական երջանկութիւն ժառանգեալու լու համար հաւատ, յոյս և սէր, որոնց միջոցսկն իրօք հասնում ենք յաւիտենական փրկութեան։ Են չեն իրացնալ այսու ուղարկած վիմագրական արքային, գրաւուս բառայի արձանաւարդապահ փազրու և

Ա յցան ՄըԱ Սերե բԿրՈՐԴ (ա
-ահայս մզ ծյօթ Ե ծաւուամ և ան է մասնիք գոզս
-ում նառի է ծաւու թլ. Բ. բոշով և նու արա
մուսն մզան դու բորտ առ անդամ ու ու ծաւու
§ 12. Գաղափար բրիստոնէ ական յուսոյ՝
-նորա հիման և միջոցների մասին.

Հնչ է քրիստոնէ պական յոյսը:
-Յամ է Աստուծոյ հաւատարմութեան վրայ
եղած (սրտի հանգստութիւնը, կամ անդորրութիւնը՝
թէ Աստուած սնդադար հոգում է մեր փրկութեան
մասին և թէ՝ շնորհելու է մեզ խոստացած երա-
նութիւնը, կամ երջանկութիւնը: Այս յուսը հիմ-
նուած է մեր Տէր Յիսուս Քրիստոսի վրայ, որով-
հետեւ նա է մեր յուսոյ հիմն: Ա. Տիմ. Ա. 1:
Փրկարար յուսը ձեռք բերելու միջոցներն են. նաև՝
աղօթքը, երկրորդ՝ երանութեան ճշմարիտ վարդա-
պետութիւնն և երրորդ՝ այդ վարդապետութեան
անկեղծ արտօվ հետեւիը:

§ 13. Աղօթքի մասին ընդհանրապես.
Յիսուս մզ ծյօթ միջանալու մայ ժամանակ
-ասաւ Յիսուս ինքն է պատուիրում մեզ
աղօթել, որ ատանանք մեր ցանկացածը, „Եւ զոր
կնչ խնդրից յանուն իմ, արարից զայն զի փա-
ռաւորեսցի Հայր յՈրդի“, Յովհ. մԴ. 13:

ա) Ի՞նչ է աղօթքը: — Աղօթքը մել մտքի և
սրտի գիմումն է առ Աստուած: Աղօթքն արտա-
յախուռամ է խօսքով, որ ուղղուած է լինում Աս-
տուծուն: Վերամքառնարով մեր միտքն ու սիրուն
առ Աստուած նախ օրհնում, փառաբանում ենք
Նորան, իւր աստուածային կատարելութեան հա-
մար. երկորդ՝ զոհանում կամ շնորհակալութիւն
ենք յայտնում իւր բարերարութեան համար. եր-
րորդ՝ լինուլում՝ ենք Նորանից մեր պիտուքները: Հատ
այսմ՝ երեք գլխաւոր մասն ունի Սղօթքը: 1) Օրհ-
նութիւն կամ փառաբանութիւն. 2) գրութիւն:
3) խնդրուածք:

բ) Կարելի է աղօթել առանց խօսքի արտայա-
տութեան: Կարելի է միայն մտքով ու սրտով ա-
ղօթել: Սորա օրինակ կարելի է տեսնել Մովսէսի
մէջ՝ կարմիր ծովն անցնելուց առաջ: Տես Ելք մԴ.
15: Այս տեսակ աղօթքը կոչւում է մ'ուտաւոր և
սրտամբուղին, կամ՝ աղօթք ներքին: Սորա հակա-
ռակ աղօթքը կոչւում է բանաւոր (բերանացի) կամ
արտաքին՝ երբ արտայատում է խօսքով և ընթա-
նում է պաշտամունքի առանձին նշաններով, որ
լինում է առանձին և հրապարակական:

գ). Կարող է լինել արտաքին աղօթքն առանց
ներքինի: — Սղոթէս է լինում, երբ մէկն արտասա-
նում է աղօթքի բառերն առանց մտառութեան և
զգացման: Այսպիսի արտաքին անուշադիր և ան-
սիրտ աղօթքը բառական չէ շնորհ ստանալու հա-

մար, և Աստուած ալդալիսի աղօթքը մինչեւ անգամ անընդունելի է Համարում ասելով.՝ Ժողովուրդու այս շրթամբը պատռէ զիս, և սիրտք իւրեանց հեռացեալ մեկուսի է յիշէն։ Զուր պաշտեն զիս։ Մատթ. ձԵ. 8—9։

Դ) Սրդեօք բաւական չէ միմիայն ներքին աղօթքն՝ առանց արտաքինի։ Ռւնենալով հոգի և մարմին՝ պարտաւոր ենք փառաւորել Աստուծուն հոգւով և բերանով. և եթէ մարդուս սիրտը լի է ջերմեռանդ զգացումներով՝ բնական է, որ սրտի յաւելուածից խօսի եւ ըերանը։ Սորա Համաձայն Ա. Գիրքն ևս ասում է. «Փառաւոր արարէք զԱստուած ի մարմինս ձեր և լոգիս ձեր»։ Ա. Կորնիժ. Զ. 20։ — „Մարդ բարի՝ ի բարի գանձուց սրտի իւրոյ հանէ զբարիս“։ — „Քանզի ի յաւելուածոյ սրտի իօսի բերան“։ Մատթ. ձԲ. 35. 34։ „Ամբարձ զաշս իւր յերկինս և ասէ. Հայլ, Հասեալ է ժամ, փառաւորեալ զորդի քո“։ Յովհ. ձԵ. 1։ „Եւ ինքն մեկնեցաւ ի նոցանէ իբրև քարընկէց մի, եղ ծունդ՝ կայր յաղօթս“։ Ղուկ. իԲ. 41։ „Եւ մատուցեալ յառաջ սակաւիկ մի՝ անկաւ ի վերաչ երեսաց իւրոց, կաց յաղօթս…։ Մատթ. իԶ. 39։

§ 14 Տէրունական աղօթք

Տէրունական է կոչում այն աղօթքը, որ Յի-

ուս ինքը առվորեցը էց իւր աշակերտներին և նոքա աւանդեցին բոլոր հաւատացեալներին։

Տէրունական աղօթքն է Համայն քրիստոնէից աղօթքն, և է բոլոր աղօթքների Համար որպէս օրինակ։ Նա կարգացւում է այսպէս.

„Հայր մեր, որ յերկինս ես, զօմում (բ)

- 1) Սուրբ եղիցի անուն Քո.
- 2) Եկեսցէ արքայութիւն Քո.
- 3) Եղիցին կամք Քո, որպէս յերկինս և յերկրի.
- 4) Զհաց մեր Հանսապազորդ, տուր մեզ այսօր.
- 5) Եւ ժող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց.
- 6) Եւ մի տանիք զմեզ ի փորձութիւն.
- 7) Այ փրկեա զմեզ ի չարէ։

Զի բոյ է արքայութիւն, եւ զօրութիւն, և վառք յափուեանս ամէն։ Մատթ. Զ. 9—13։

Տէրունական աղօթքի միտքը յաւ դիտելու Համար՝ բաժանում ենք Երեք գլուխոր մասերի, այն է՝ յառաջաբան կամ կողումն, եօթն իննդրուածք և վերջաբան կամ փառաբանութիւն։

ԿՈՉՈՒՄՆ ԿԱՄ ՅԱԼԱԶԱՐԱՆ

Ի՞նչպէս ենք Համարձակւում Աստուծուն Հայր անուանել։ — Այդ իրաւունքն ստանում ենք նախ՝ Յիսուս Քրիստոսին Աստուածորդի գաւանելով, և երկրարդ՝ այդ Հաւատով և շնորհաց միջոցաւ վերածըն-

ուելով, «Խսկ որք ընկաման դնա, և տ նոցա իշխանութիւն որդիս Աստուծոյ լինել, ո որոց հաւատաց են յանուն նորա»: Յովհ, Ա., 12: «Ոյք ոչ յարենէ, և ոչ ի կամաց մարմնով, և ոչ ի կամաց առն, այլ Աստուծոյ ծնան»: — 13: Թէպէտ և աղօթրդը մէկը լինի՝ բաց և այնպէս նա ասում է Հայր մեր, և ոչ Հայր իմ, որիվհետեւ քրիստոնէական եղբայրսիրութիւնը պահանջում է կոչել Աստուծուն և խնդրել նրանից շնորհ ոչ միայն իւր համար, այլ և ամենքի համար, որովհետեւ Աստուած մէկի Աստուածը չէ, այլ ամենքի Աստուածն է ու Հայրը, որ յերկինս է:

Աստուած ամեն տեղ է, բաց որ յերկինս ես, խօսքը նշանակում է, թէ մեր աղօթրքի կացած միջոցին պարտաւոր ենք մի կողմ թողնել բոլոր երկրաւոր ու մարմնաւոր բաներն և վերամբառնալ մըտքով ու սրտով դէպի երկնաւորը, յաւիտենականն և պատուածախը:

ԱՌԱՋԻՆ ԽՆԴՐՈՒԻԱԾՔ
Թէպէտեւ Աստուծոյ անունը սուրբ է ինքնըստ ինքեան, Սուրբ է անուն նորա, Ղուկ. Ա. 49: — այսու ամենալիւ խնդրում ենք, որ ասուրը լինի նորա անունը, ալսինքն՝ նորա յաւիտենական սրբութիւնը մեր մէջ լինի սուրբ: Այս կարելի է նախ երբ Աստուծոյ անունը մեր սրտի մէջ ունենալով, այնպէս ապրինքն է նոր-

ըա արքութեանն, երկրորդ այդպիսի սուրբ կիանքով փառաւորենք նորա սուրբ անունը, և երբորդ՝ երեսուրիշներն ևս տեմնելով մեր բարի գործերն ու կեանքը՝ փառաւորեին: Աստուծուն իւրա սրբութեան մէջ: «Այնպէս լուսաւորեսցէ լուս ձեր առաջի մարդկան, որպէս զի տեսցեն զգործաւ ձեր բարիս և փառաւորեսցեն զհայր ձեր որ յերկինս է»: Մատթ. Ա. 16: յայրով և մասնաւունը մասն է նախաձայն ցմաժի մաքրնա և այս դասնա զար մաքրն ու շցուն ցմայն նրանի խնդրուի լուսի ընդունութիւնը ըանաւ և կեսցէ արքայութիւն Քո, ասելիս պէտք է հասկանալ նորա շնորհաց արքայութիւնը, որ Առաքեալի խօսքով է թագաւորութիւն արդարութեան, իննուութեան և խաղաղութեան „ի Հոգի սուրբ“: Հոռմ. Ճ. 17:

Այս թագաւորութիւնը ոմանց համար դեռ չէ եկած իւր բոլոր զօրութեամբ, ոմանց համար ընաւ իսկ չէ եկած՝ մինչ թագաւորում է մեղքը նոցա մանհկանացու մարմնի մէջ, որին և հնագանդում են: Հոռմ. Ճ. 12: Աստուծոյ թագաւորութիւնը նորա շնորհաց զօրութիւնն է, որ ծնւում է մեր մէջ և զօրանում, ինչպէս մի խորհրդաւոր աներքին հանգամանք: Այս մտքով ասաց Յիսուս հարցնող փարիսեցիներին, թէ «Ոչ գայ արքայութիւնն Աստուծոյ խորանոք. (զգալի երկեցամբ)... զի ահա արքայութիւնն Աստուծոյ ի ներքս ի ձեզ է», Ո.ուկ. Ճ. 20, 21: «Քրիստոնեան խնդրելու է բացի շնոր-

Հաց թագաւորութիւնից, նաև Աստուծոյ փառաց
թագաւորութիւնը. այն է՝ հաւատացեալների լիա-
կատար երջանկութեան թագաւորութիւնը, որ հան-
դերձելումն է. „Զցանկալն եւանել եւ ընդ Քրիս-
տոսի լինել՝ առաւելլաւ համարիմ“: Փիլիպ. Ա. 23:

ԵՐՐՈՐԴ ԽԵՂԻՌՈՒԱԾՔ

„Եղիշին կամք քո“ ասելով խնդրում ենք Աս-
տուծուց, որ այն ամենը, ինչ որ անում ենք, կամ
պատահում է մեզ՝ լինին ոչ այնպէս, որպէս մենք
ենք կամենում, այլ ինչպէս իրան Աստուծուն է
հաճելի: Ինչու այսպէս: — Որովհետեւ մենք յաճախ
սխալում ենք մեր բաղձանքների մէջ, իսկ Աստ-
ուծած անսխալ է. և նա մեզ համար անհամեմատ
աւելի բարիք է ցանկանում, քան թէ մենք ինք-
ներս. և եթէ մեր յամառութիւնն ու կամայակա-
նութիւնն արգելք չըլինին՝ Աստուծած միշտ պատ-
րաստ է շնօրհել մեզ կարեորն ու անհրաժեշտը:
„Այ այնմ՝ որ կարողն է առաւել քան զամենալն
ինչ առնել յաճախութեամբ՝ քան զոր խնդրեմքն
և իմանամք, ըստ զօրութեանն որ յաջողեալն է ի
մեզ, նմա փառք լեկեղեցւոչն“: Եփես. Գ. 20, 21:

Աստուծուց խնդրում ենք, որ նորա կամքը
լինի երկրիս վրայ, անպէս, ինչպէս է երկնքում:
Սորանով կամենում ենք մեր գործերով նմանիլ

երկնքի և. Հրեշտակներին, և սուրբերին, որոնք
միշտ և յամենալնի՝ առանց բացառութեան, կատա-
րում են Աստուծոյ կամքը:

ՉՈՐՐՈՐԴ ԽԵՂԻՌՈՒԱԾՔ

Հանապազօրեալ կամ առօրեալ հացը կարևոր
և անհրաժեշտ է մեր կեցութեան կամ գոյութեան
համար: Յիսուսի մեզ տուած խրատին համեմատ՝
պէտք է խնդրենք միմիայն մեր կեցութեան համար
անհրաժեշտ և կարեոր եղած հանապազօրեալ հացն
և ուրիշ պիտոյքները. իսկ ինչ որ մեր պիտոյքնե-
րին ծառալելուց զատ, աւելորդ է, ինչպէս ճոխու-
թիւն կամ հարստութիւն, այդ պէտք է յանձնա-
րարենք Աստուծոյ կամքին, որ եթէ շնորհէ՝ պէտք
է ընդունենք շնորհակալ սրտով, իսկ եթէ ոչ՝ ա-
մենելին տրտնջելու չենք: Մեր պարտքն է առանց
ծուլանալու և առանց ընկերին զրկելու՝ աշխատել,
գործել. իսկ տալու չափն ու ժամանակը պէտք է
Աստուծոյ կամքին թողնենք: Մեզ հրամայուած է
խնդրել միայն առօրեալ կամ „այսօրուայ“ հացը,
որպէս զի ապագայ հացի և կեցութեան պատճա-
ռով՝ չափազանցութեան չըհասցնենք մեր հոգսերը,
այ այն յանձնենք Աստուծոյ բարութեան և ողոր-
մածութեան. ըստ այնմ՝ թէ. „Մի այսուհետեւ հո-
գացցեք վասն վաղուին՝ զի վաղիւն վասն իւր հո-

գասցի. շատ է աւուրն չար իւր“։ Մատթ. Զ. 34։ Քանզի գիտէ Հայրն ձեր երկնաւոր՝ թէ պիտոյ է ձեզ այդ ամենալն։ Խնդրեցէք նախ զարքալութիւնն Աստուծոյ և զարդարութիւն նորա։ և այդ ամենալն յաւելցի ձեզ“։ Մատթ. Զ. 32. 33. „Մի այսուհետև հոգացէք վասն վաղուին“ խօսքը չէ նշանակում չըհոգալ, չըգործել, չաշխատել ապագայի համար, սրովհետև նոյն Ս. Գիրքն է հրամայում շաբաթուայ վեց օրը նուիրել գործի և աշխատութեան. նոյն Ս. Գիրքն է ասում. „որ ոչ գործիցէ և կերիցէ մի“—ո՞վ որ չէ աշխատում չըպիտի ուտէ. նոյն Ս. Գիրքն է ասում ճակատիդ քրտինքովն ապրիս. նոյն Ս. Գիրքն է, որ ծուլութիւնը մահացու մեղք է համարում։ Մի այսուհետև հոգացէք վասն վաղուին, ասելով Քրիստոս արգելում է չափազանց հոգալը, ագահաբար դիզելը, անարդար միջոցներով ապագան ապահովելու պարաւելի հոգաբը։

„Զհաց մեր հանապազորք“ նշանակում է մի այլ հաց ևս, որ միայն հոգեւոր է և գերագուն քան նիւթական հացը։ Որովհետև մարդս բաղկացած է մարմնից և հոգուց, պէտք և արժան է խնդրել ոչ միայն մարմնին անհրաժեշտ հացն ու պէտքերը, այլ և հոգուն անհրաժեշտ պիտուրը՝ հոգեւոր սընունդ, առանց որին մեր ներքին մարդը կը մեռնի քաղցից։ Եւ ո՞րն է հոգու անհրաժեշտ ու կարեւոր հացը։—Պա է. Աստուծոյ խօսքն և Յիսուս Քրիս-

տոսի. Մարմինն ու Արիւնը. վասն զի Տէրն ասաց, թէ . Ո՞չ հացիւ միայն կեցցէ մարդ, այլ ամենալն ըանիւ, որ ելանէ ի բերանով Աստուծոյ“։ Մատթ. Դ. 4։ „Որ ուտէ զմարմին իմ և ըմպէ զարիւն իմ, ունի զկեանս յաւիտենականս“։—«Ես եմ հացն կենաց, — „Եւ հացն, զոր ես տաց՝ մարմին իմ է, զոր ես տաց վասն կենաց աշխարհի“։ Յովհ. Զ. 55. 48—52։ Աստուծոյ բերանից ելած խօսքն է Ս. Գիրքը, որի մէջ է մթերել Աստուծուած մեր հոգեւոր կենացի անհրաժեշտ փրկարար և կենդանարար պաշարն. ու սնունդը՝ մեր հոգեւոր հացը։ Հինգութիւն ըստ առաջնայի գոտուայն անունու ազգի վ. Ս. Այսու սնան նմանի առաջնու գոտու ազգի վ. Ս. Այսու սնան գոտուայն չինդերորդ. Խնդրորիչածք մեր մեղքը մեղք մեղք պարտիս մեր, որպէս ևս մեք թողումք մերոց պարտապանաց“։ Պարտքն է մեր մեղքերը։ Ինչու մեղքը պարտք է կոչում։—Ս. յս «պարտք» խօսքի իմաստը պէտք է լաւ հասկանալ։ Մենք ինչ որ ունինք՝ Աստուծուց ենք ստացել, և պարտաւոր ենք ամենը վերադարձնել նորան, այսինքն մեր բոլոր ունեցածը գնել նորա կամքն և օրէնքի տակ, հնազանդել և հպատակել նորա պատուիրաններին. բայց եթէ այդ չենք անում ապա ուրեմն մնում ենք պարտաւոր նորա արդարագաւութեան առաջ։ Իսկ „մեր պարտապանները“ նոքան, որոնք չեն տալիս մեզ այն, ինչ որ՝ Աստուծոյ

օրէնքին համեմատ պարտաւոր էին տալ. օրինակ՝ Սիրոյ պատուիրանին համեմատ չըսիրեցին մեզ՝ չոգնեցին, չըկարեկցեցին, այլ ատեցին, անարգեցին, թշնամանեցին և զրկեցին։ Բայց Եթէ մենք չարութիւնը չարութեամբ հատուցանելու լինինք, հետևած կրլինինք Մովսէսին, որ ասում է. «Ակն ընդ ական եւ ատամն ընդ ատաման», և ոչ թէ Քըրիստոսին, որ պատուիրում է „Մի կալ հակառակ չարին“։ — Սիրեցէք զթշնամիս ձեր. բարի արարէք ատելեաց ձերոց։ „Եղերուք դուք կատարեալ, որպէս և չալին ձեր երկնաւոր կատարեալ է“։ „Զի զարեգակն իւր ծագէ ի վերայ չարաց և բարեաց. և ածէ անձրև ի վերայ արդարոց և մեղաւորաց“։ Մատթ. Ե. Ով որ այս պատուիրանին համաձայն չէ վարում, նա միշտ պարտական է մնում Աստուծոյ արդարադատութեան առաջ։ Երբ Աստուծամենագէտ և արդարադատ է, ապա ինչպէս ենք վստահանում լուսալ, թէ նա կը թողնէ մեր պարտքերը, Եթէ մենք ևս մեր պարտապանների պարտքերը չըթողնենք։ Մենք չենք ստանալ երբէք թողութիւն մեր մեղքերին, Եթէ մենք ևս չըներենք մեր դէմ մեղաւորների մեղքերը։ այս հաստատ է և ստուգ։ Մատթ. Զ. 14—15։

Ապա ուրեմն, երբ ասում ենք՝ «Եւ թող մեզ զպարտիս մեր՝ որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց», պիտի հաւատանք, որ նախ՝ մեր մեղքերին թողութիւն կըլինի Յիսուս Քըրիստոսի միակ

միջնորդութեամբ. (Ա. Տիմ. 5, 6). և երկրորդ՝ որ մեր խնդրած թողութիւնը տրում է մեզ այն պայմանով, որ և մենք թողնենք, այսինքն ներենք մեր դէմ մեղաւորների, մեր սկարտապանների պարտքերը կամ մեղքերը։ Ապակս է պատուիրում Ա. Աւետարանը, թէ, Եթէ թողուցուք մարդկան զյանցանս նոցա, թողցէ և ձեզ հայրն ձեր երկնաւոր զյանցանս ձեր։ Ապա թէ ոչ թողուցուք մարդկան զյանցանս նոցա, և ոչ հայրն ձեր թողցէ ձեզ զյանցանս ձեր։ Մատթ. Զ. 14, 15։

Խնչո՞ւ Աստուծամ մեզ չէ ներում, երբ մենք ևս չենք ներում մեր ընկերներին կամ ընդհանրապէս մարդոց։ — Որպա պատճառն այն է, որ մենք չըներելով գառնում ենք եղբարատեաց, չարագործ և այդպիսով զրկւում ենք կամաւ Աստուծոյ ողորմութիւնից։ Ուստի որպէս եւ մեր թողուք մերոց պարտապանաց աղօթքն անելիս՝ մեր սրտի մէջ չըպէտք է պահենք ոչ բարկութիւն և ոչ թշնամութիւն դէպի մէկը, այլ պէտք է ամենի հետ հաշտ և սիրով լինինք։ Հատ այսմ. „Եթէ մատուցանիցես զպատարագ քո ի վերայ սեղանու, և անդ լիշեսցես՝ Եթէ եղբար քո ունիցի ինչ խէթ զքէն, թող զպատարագն քո առաջի սեղանոյն, և երթ նախ հաշտեաց ընդ եղբօր քում, և ապա եկեալ մատուսջիր զպատարագն քո“։ Մատթ. Ե. 23—24։ Եթէ չես կարող տեսնել կամ գտնել նորան, որի դէմ յանցաւոր ես՝ ամենագէտ և ամենատես Աստուծոյ առաջ

Հաշտուիր նորա հետ սրտիդ մէջ. մեղաւոր ես՝ ներողութիւն ինդըիր Ս.ստուծուց, զրկուած կամ զըրպարտուած ես՝ մարդասիրաքար ներիր նորան սըրտիդ մէջ և մի լինիր ատող և վրէժխնդիր։ Առաքեալն ևս պատուիրում է ասելով. „ընդ ամենայն մարդկան զինադադութիւն կալչիք“։ Հոռմ. ԺԲ. 18.

— Մի զանձանց վրէժխնդրէք, սիրելիք, ալլ տուք տեղի բարկութեան. քանդի գրեալ է. Իմ է վրէժխնդրութիւն, և ես հատուցից՝ առէ Տէր։ Ալլ եթէ քաղցեալ է թշնամին քո՛ հաց տուր նմա, և եթէ ծարաւի ջուր տուր նմա։ Մի լաղթիր ի չարէ, ալլ լաղթեա բարեաւն չարին։ Հոռմ. ԺԲ. 19—21։

ՎԵՃՆՐՈՐԴ ԽԵՂԻՌՈՒԱՃՔ

Ալլ խնդրուածքի մէջ փորձութիւն նշանակում է հանգամանքների այնպիսի բերմունք, ուր վտանգ կայ հաւատքը կորցնելու կամ ծանր մեղքի մէջ ընկնելու։ Ալսալիսի փորձանքները դալիս են մեր վրայ կամ մեր ներքին աշխարհից, կամ մեզանից դուրս գտնուած՝ արտաքին աշխարհից և կամ մեզ հետ շփուղ մարդկանցից։ Ուրեմն „Եւ մի տանիր զմեզ ի փորձութիւն“ խօսքը նշանակում է, որ թէւ մենք խաբուելով միշտ հակուած ենք դիմել դէպի վտանգը, դէպի փորձութիւնը՝ բայց Դու,

Տէր, մի թող տար մեզ գնալ դէպի այն. և եթէ հարկ լինի մեզ փորձութեան մէջ ընկնել խրատուելու, փորձառու լինելու, զօրանալու ու սրբուելու համար՝ սակայն Դու, Տէր, չըթոց տաս մեզ ընկճուել, յուսահատուել և խսպառ լաղթուել փորձութիւններից կամ փորձանքից, ալլ հասիր և փրկիր մեզ վերահստ չարից։

ՅՈԹՆԵՐՈՐԴ ԽԵՂԻՌՈՒԱՃՔ

„Ալլ փրկեա զմեզ ի չարէ“։ Այս խնդրուածքով հայցում ենք փրկութիւն ամենայն չարից որպիսին և կարող լինի գալ մեզ վրայ աշխարհիս մէջ։ Զար կամ չարիք և կամ չարութիւն ենք անուանում այն ամենը, ինչ որ կարող է վնասարեցնել մեր մարմնին, հոգուն, մտքին և բարոյականին։ Ալդպիսի վնասարեց հանգամանքներից մարդս երեք բոլորովին ազատ չէ եղած և չէ կարող լինել։ Բայց միւնոյն ժամանակ դժուար և շատ անգամ նոյն խոկ անհնարին է առանց Ս.ստուծոյ օգնութեան՝ լոկ մեր ուժով չարին լաղթել. մանաւանդ որ մեղաց չարիքից, բանսարկուի գալթակղեցուցիչ հըրաալոյըներից, չարութեան ոգու ազդեցութիւնից ազատելու համար՝ մեր սեփական ոլժերը բաւական չեն մեզ, ալլ պէտք է մեզ դիմել Ս.ստուծուն և խնդրել նորա օգնութիւնը։

ՓԱՌԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԿԱՅՄ ՎԵՐՋԱՅԱՆ

Տէրունական աղօթքին է կցուած մի վերջաբան ևս, որ կոչում է փառաբանութիւն։ Այդ նորա համար է, որ նախ՝ մենք մեզ համար երկնալոր չօրից ողորմութիւն խնդրելով՝ նորան արդար և իրաւացի լարգանք մատուցանենք, երկրորդ՝ որ իմանալի կերպով կամ մտաւորապէս աւելի և աւելի հաստատուինք այս լոյսի մէջ, թէ նորանն է լաւիտենական թագաւորութիւնը, զօրութիւնն եւ փառքը. և թէ՝ նա է շնորհում մեզ մեր խնդրածները, որովհետև նա միայն ունի իշխանութիւն կատարել մեր խնդրուածքը՝ և այս վերաբերում, վայելում է միայն ևեթ նորա փառքին, զօրութեանն և թագաւորութեանը։ Ամէն բառը նշանակում է ճշմարիակամ թէ՝ թող լինի։ Այս բառը յարակցուած է Տէրունական աղօթքի վերջաբան փառաբանութեանը, ցոյց տալու համար, թէ աղօթքը մատուցւում է հաւատքով և, առանց երկարութեան, ինչպէս ուսուցանում է Յակոբոս Առաքեալը. „բայց խնդրեսցէ (իւրաքանչիւր ոք) հաւատովք՝ և մի երկմտեսցէ. զի որ երկմիտն է... մի ակնկացի մարդն այն առնուլ ինչ լԱստուծոյ։ Յակ. Ա. 6. 7:

§ 15. Ին Երանութիւնքը

Որպէս զի փրկութեան և երջանկութեան յոյսի մէջ մարդս ամրանայ՝ պէտք է աղօթքի հետ միացնէ իւր անպհական ջանքերն ևս. աշխատի մըտքով ըմբռնած և սրտով զգացած գաղափարները կենդանացնել իւր գործերով և ձգտումներով։ Այս մասին ասում է Փրկիչը. „Զի կոչեք զիս Տէր Տէր, և զոր ասեմն, ոչ առնէք։ Ղուկ. Զ. 46.։ Ոչ ամենայն որ առէ ցիս՝ Տէր Տէր, մտցէ յարքայութիւն իւրկնից. այլ որ առնէ զկամս Հօր իմոյ որ յերկինսն է“, Մատթ. Է. 21.։ Անձնական բարեպաշտական գործերին ղեկավարող պէտք է լիսի Յիսուս Քրիստոսի բարոյական վարդապետութիւնը, որ համառօտուած է ինն Երանութիւնների մէջ, որոնք են.

- 1) Երանի աղքատաց հոգւով, զի նոցա է արքայութիւնն երկնից;
- 2) Երանի սպանորաց, զի նոքա մխիթարեսցին։
- 3) Երանի հեղոց, զի նոքա ժառանգեսցն զերկիր։
- 4) Երանի որ քաղցեալ և ծարաւի իցեն արդարութեան, զի նոքա կագեսցին։
- 5) Երանի ողորմածաց, զի նոքա ողորմութիւն գտցեն։
- 6) Երանի այնոցիկ, որ սուրբ են սրտիւք, զի նոքա զԱստուած տեսցեն։
- 7) Երանի խաղաղարաց, զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին։

8) Երանի որ հալածեալ իցեն վասն արդարութեան,
զի նոցա է արքայութիւն երկնից;
9) Երանի է ձեզ՝ յորժամ նախատիցեն զձեզ և հա-
լածեցեն, և ասիցեն զամենալն բան չար զձենջ
սում վասն իմ, ցնծացէք և ուրախ լերուք, զի
վարձք ձեր բազում են լերկինս“: Մատթ. 16.
3—12:
Այս խրատական պատուիրանները լաւ հասկա-
նալու համար՝ պէտք է նկատել, որ Յիսուս այս
պատուիրաններով տալիս է այն բարոյական ուսու-
մը, որով մարդիկ արժանի պիտի լինին երանու-
թեան: Բայց ինքը լինելով հեզ և խոնարհ սրտի
տէր՝ չառաջարկեց իւր այս ուսումը հրամայելով,
այլ երանելով նոցա, որոնք յօժարակամ կընդունեն
և ազատակամ կիրագործեն: Լսու այսմ և իւրաքան-
չիւր Երանութեան մէջ պէտք է նախ նկատել Երա-
նութեան ուսումն կամ պատուիրանը, և երկրորդ
նոցա կատարման հետևանքը, կամ հատուցման
խոստումն:

ԵՐԱՆՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԻՆ ՊԱՏՈՒԻՐԱՆԸ

Երանութեան ցանկացողները պէտք է լինին
հոգւով աղքատ: Ի՞նչ է նշանակում լինել, հոգւով
աղքատ: — Այդ նշանակում է լինել հոգեպէս հա-
մոզուած, թէ ինչ որ ունինք՝ մեզանից չէ և մե-

ըր չէ, այլ ունինք միայն այն՝ ինչ որ Տէրն է շնորհում.
և թէ առանց Աստուծոյ շնորհացն և օգնութեան՝
անձնագիր ոչինչ բարի գործել չենք կարող: Այս
համոզմամբ պէտք է ճանաչենք մեր տկարութիւնն
և յամենալնի դիմենք Աստուծոյ ողորմութեանն և
գթութեանը: Բայց Ոսկեբերանի հոգու աղքատու-
թիւնն է «իմաստութիւն հեղութեան»: Ոչ ոք ըր-
պիտի հպարտանալ իւր ճոխութեամբ, գիտնականու-
թեամբ, բարձր պաշտօններով և աստիճանով, որով-
հետեւ գոքա բոլորն այս աշխարհիս մէջ պիտի ու-
նենակ իրանց վերջը և չեն կարող փոխարինել հո-
գեոր բարիքներին: «Որ խոնարհեցուցանէ զանձն՝
բարձրացի»: Մատթ. 17. 12:
Ի՞նչ է խոստանում Յիսուս հոգւով աղքատնե-
րին: — Երկնքի արքայութիւն: Այս կեանքում պատ-
կանում է նոցա ներքնապէս և սկզբնաւորմամբ և
այն՝ հաւատի և յօրի ազդմամբ: իսկ հանդերձե-
լումն՝ կատարելապէս յաւիտենական երանութեան
հաղորդ լինելով:

ԵՐԱՆՈՒԹԵԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏՈՒԻՐԱՆԸ

«Երանի սգաւորներին»: Ի՞նչ է նշանակում
սգաւոր: — Եղաւոր են նոքա, որոնք ճանաչելով ի-
րանց պակասութիւնները՝ համոզուած են, որ ար-
ժանապէս չեն կատարում իրանց պատառկանու-
թիւններն առ Աստուծու և առ մարդիկ և մինչև

անդամ՝ իրանց արժանի համարելով՝ աստուածալին
բարկութեան՝ զղջում են իրանց յանցանքները, ա-
պաշխարում են, խոստովանում են իրանց մեղաւո-
րութիւնն և բեկուած սրտով ու արտասուքով դե-
մում են Աստուծոյ գիրութեանն և ողրմութեանը:;
Աստուածալին գործերի ճիշտ կատարման անձեռն-
հասութիւնը բարեպաշտ մարդուն տրտմեցնում է,
յորդորում է նրան դիմել ապաշխարութեան, և նա
ապաշխարում է առանց ստրջանալու: Այսպիսի
տրտմութեան մէջ է փրկութիւնն ու կեանքը, իսկ
աշխարհային վաղանցուկ բաների համար տրտմելը
մահ է պատճառում, — հոգեոր մահ: Սորա համար
է ասում առաքեալը: „Զի որ ըստ Աստուծոյն տըրտ-
մութիւն է, ապաշխարութիւն ի փրկութիւն առանց
զղջանալոյ գործէ, իսկ աշխարհի տրտմութիւն
մահ գործէ“: Բ. Կորնթ. է. 10:

Տէրը՝ խոստանում է՝ Աստուծոյ գէմ եղած ա-
նիբաւութեանց մասին սգաւոր եղողներին միսիթա-
րութիւն: Ի՞նչ է այդ միիթարութիւնը: — Ենորհ, գը-
թութիւն և թողութիւն նոցա մեղքերին, ևս և
անդորրութիւն նոցա խղճին:

Քանի որ Ճշմարիտ սրտով ապաշաւելը թողու-
թիւն է բերում մեր մեղքերին՝ սորանից հետեւում
է, որ մեղքերի նկատմամբ եղած տրտմութիւնը ըլ-
պէտք է ընդարձակուի մինչեւ յուսահատութիւն,
որ գարձեալ ըստ ինքեան մեղք է:

ԵՐԱՄՍՈՒԹԵԱՆ ԵՐՐՈՐԴՅ ՊԵՏՈՒՀԻՌԱՆՀԱՅ
ա պարմաց մացմայ բարդ մածն նախական պարմաց
Երանութեան փափագողները պարտաւոր էն
լինել հեզ: Ի՞նչ է հեզութիւնը: — Հոգու մեղմ տրա-
մադրութիւնն է, որ միացած է զգուշութեան
հետ. ոչ ոքի չիպրդովիլ զուր տեղը, և չի վրդովուիլ
անախորդ դիպուածներից. Ճշմարիտ քրիստոնեան եր-
բէք որ և է ձախորդութեան պատճառով՝ չըպիտի
զայրանալ և բարկանայ՝ եթէ որ և է բան սպատա-
հում է հակառակ նորա ցանկացածին և ակնկա-
լութեան:

Տէրը հեզերին խոստանում է, թէ նոքա պի-
տի ժառանգեն երկիրս: Այս ի՞նչ է նշանակում:
— Այս խոստումն մի կանխասացութիւն է Քրիստոսի
հետեւողների նկատմամբ ընդհանրագէս, և արդէն
կապարուած է մասամբ այդ կանխասացութիւնը ո-
րովհետեւ հեզ քրիստոնեաները՝ փոխանակ հեթա-
նոսական հալածանքներով ջնջուելու՝ ընդհակառա-
կը հետզհետէ բազմացան և ժառանգեցին երկրիս-
մեծագոյն մասը, որ առաջ հեթանոսների ժառան-
գութիւնն էր: Իսկ միւս նշանակութիւնը, որ ունի
ար խոստումն քրիստոնեալ ազգերի և անհատների
նկատմամբ՝ այս է, որ նոքա ովիտի ստանան ժա-
ռանգութիւն՝ ըստ Սաղմոս երգուին՝ կենդանեաց
երկրում, այնտեղ, ուր ասլրում են և չեն մեռնում.
այսինքն՝ պիտի ժառանգեն յաւիտենական երա-
նութիւնը: Սաղմ. ԻԶ. 13:

ԵՐԱՆՈՒԻԹԵԱՆ ԶՈՐՅՈՒԹ ՊԱՏՈՒԻՐԱՆԸ
Հառա լոճառամ խոյժառած մասնապար ընալի յս
կը Երանութեան փափագողները ալիտի լինին
քաղցած և ծարաւ, սրդարութեան համար: «Ար-
դարութիւն», ասելով թէև կարելի է հասկանալ
ամենայն առաքինութիւն, որ քրիստոնէի յատկանի-
շը ալիտի լինի և ամենքի համար անհրաժեշտ, որ-
պէս հացն ու ջուրը՝ բայց այստեղ հասկանալու ենք
այն յաւկանական արդարութիւնը, որ Թանիէլ
մարգարէի ձեռքով (Թ. 24) խոստացուած էր և
պիտի գար Յիսուս Քրիստոսի միջոցաւ՝ նորա շնոր-
հաց և հաւատի տըւչութեամբ: Այս արդարութեան
մասին Պօղոս առաքեալն ասում է. „Բայց արդ
առանց օրինացն իսկ արդարութիւնն Աստուծոյ
յալտնեալ է, վկայեալ յօրինաց անտի և ի մարգա-
րէից, Քանզի արդարութիւնն Աստուծոյ ի հաւատոց
անտի Յիսուսի Քրիստոսի, յամենայն հաւատացեալս
(է), և ոչինչ է խտիր, քանզի ամենեքին մեղան,
և նուազեալ են ի փառացն Աստուծոյ, և արդարա-
նան ձրի նորին շնորհօք ի օնոն միրկութեանն, որ
ի Քրիստոս Յիսուս, զոր յառաջն ետ Աստուծ
քաւութիւն ի ձեռն հաւատոցն արեամբն նորա ի
հանդէս արդարութեանն նորա՝ վասն թողութեան
յառաջազդյն մեղացն զործելոց»: Հոռմ. Գ. 21—
26: Ո՞վ են արդարութեան համար քաղցածներն
ու ծարաւները: — Նորա են, որմնք սիրելով բարե-
գործութիւնը՝ իրանց չեն համարում արդար և ա-

ռաքինի, չեն ապաւինում իրանց բարեգործութեանը,
ալ իրանց պարտական ճանաչելով Աստուծոյ առաջ՝
հաւատում են, որ միմիայն Յիսուսի Քրիստոսի ձրի
շնորհովն և արդարութեամբ ալիտի միրկուին, ուստի
և քաղցածի ու ծարաւի պէս ձգտում են գէպի
Յիսուս Քրիստոս, որ է հաւատացեալների արդարութիւնը, հոգեւոր սնունդն եւ զովարար աղբիւրը:
Այդ արդարութեան համար քաղցածներին և ծար-
աւներին խոստանում է Աստուծոյ յագեցնել: Ինչու
պէս որ մարմնաւոր յագումն բերում էնախ՝ քաղցի
և ծարաւի զգայութեան բաւարարութիւն և երկ-
րորդ՝ ոյժ և ամրութիւն մարմնին՝ ալապէս և հո-
գեսոր յագումն նախ՝ անդորրութիւն է տալիս նե-
րումն ստացած մեզաւորի ներքին մարգուն, երկ-
րորդ՝ տալիս է զօրութիւն բարիք գործելու, որոնք
ձեռք են բերում արդարացնցիւ շնորհների միջո-
ցով: Սակայն որովհետև հողին ստեղծուած է լինել
երջանիկ անսահման բարութեամբ, ուստի նորա
կատարեալ յագումն լինելու է յաւիտենական կեան-
քում, ինչպէս Սաղմոսերգուն է ասում. «Ես արդա-
րութեամբ երեւեցայց երկսաց քոց, յագեցայց
յերեւել փառաց քոց»: Սաղմ. Ֆ. 15:

ԵՐԱՆՈՒԻԹԵԱՆ ՀԻՆԴԵՐՈՐԴ ՊԱՏՈՒԻՐԱՆԸ
Երջանկութեան փափագողները ալիտի լինին
ողործած: Ի՞նչպէս պէտք է կատարել այս պատուի-

բանը: Ողորմած մարդը պէտք է նիւթական և հոգեւոր ողորմութիւն անէ: Նիւթական ողորմութիւնն է. 1, քաղցածին կերակրել. 2, ծարաւին ջուր տալ. 3, մերկերին հազցնել, կամ պատշաճաւոր և անհրաժեշտ հագուստի կարօտողին տալ կուրերը: 4, Այցելել բանտարկեալներին: 5, այցելել հիւանդին, ծառայելնորան, օգնելնորան առողջանալու, կոմ պատրաստել նորան քրիստոնէաբար մեռնելու: 6, Պանդխտին լինդունել և տալ հանգիստիւր տան մէջ կամ ուր պատշաճաւոր է. 7. Հոգալ մեռածների թաղման պէտքերը պատշաճաւոր ծէսով. 8, լինել պաշտպան զրկուածների իրաւանց. 9, օգնել հասարակաց բարեկեցութեանը. 10, օգտակար լինել ազգի և մարդկութեան բարօրութեան, և այն և այն: Ողորմածութեան հոգեւոր գործերն են.

1, Յորդարանքով մոլորէալին դարձնել դէպի ճըշմարտութիւնը:

2, Տգէտին ուսուցանել ճշմարտութիւնն ու բարին: 3, Տալ մերձաւորին պարտուապատշաճ ժամանտկին փրկարար խորհուրդ, երբ նա դժուարանում է և կամ չէ նշմարում վերահաս վտանգը:

4, Մերձաւորի համար ազօթել առ Աստուած:

5, Մխիթարել տրտմեալներին:

6, Փախչել չարին չար հատուցումն անելուց:

7, Սրտանց ներել մեզ վշտացողներին և այն:

Ընդարձակ է ողորմածութեան պատուիրանն և բազմատեսակ են ողորմածութեան գործերը, բայց

իշեցինք գլխաւարները միայն: Ամենայն ողորմութիւն պէտք է ունենայ բարձրացնող, բարոյականացնող, կըթող և դաստիարակող նպատակ և նշանակութիւն, և երբ այդ նշանակութեանը չէ ծառայում, անօգուտ է և գուցե վնասակար ևս լինի, ուստի պէտք է լաւ կշռել ողորմածութեան գործը: Յանցաւորներին արդարագատութեան ենթարկելն և արդարապէս դատաստան անելը՝ հակառակ չէ այս պատուիրանին, որովհետեւ գործանով նախ՝ հոգ է տարւում նոցա ուղղուելուն, և երկրորդ նոցա յանցաւոր գործերից նախասրահպանում են անմեղներն ու աշխարհի խաղաղութիւնը: Արաւանակ Ինչ է խոստանում Տէրը ողորմածներին: Խրտանում է, որ նոքա ողորմածութիւնն էրդտնեն: Այս նշանակում է, թէ նոքա աստուածալին դպտաստանի առաջ իրանց յանցանքներին ներումն կըդանեն և կարժանանան յաւիտենական ողորմութեան, կազատուին դատապարտութիւնից և կը վայելեն յաւիտենական երջանկութիւն:

ԵՐԱՆՈՒԹԵԱՆ ՎԵՃԵՐՈՐԴ, ՊԱՑՈՒԿԻՐԱՆԾԼ

Երանութեան փափագողները պիտի լինին սըրտով սուրբ, ալսինքն՝ մաքուր և ազնիւ սիրտ պէտք է ունենան: Այս նշանակում է լինել ճշմարիտ, ան-

կեղծ, պարզ, անխարժախտ, Երբ մէկին սրտով չես
ընդունում որպէս բարի, ազնիա, առաքինի մարդ՝
ըպէտք է կեղծես քո զգացումները դէպի նա, չը
պէտք է ձեւանաս այնպէս, որ նա հաւատալ, թէ
դու իւր մտերիմն ես և դէպի ինքն ունիս բարեկա-
մական, մտերմական տրամադրութիւն։ Սրտի սըր-
բութիւնը կամ անկեղծութիւնը նկատում է, երբ
մարդս չէ ձեւանում համակիր մէկին՝ եթէ համա-
կրութիւնը չէ բղխում սրտից։ Սրտի բարի ձգտում-
ներն արտայալտում են բարի արարքներով։ Առանց
բարի գործի, լոկ համակիր ձեւանլը սրտի ստորու-
թեան լայտարար է։ Մարդս կարօղ է կըթել իւր
գգացումները, անկեղծութեան բարձր ստիճանին
հասնել՝ եթէ անընդհատ հսկողութիւն անէ ինքն
իւր վրայ, դուքս մղէ սրտից ամեն ապօրինի և ստոր
ցանկութիւններն ու խոկումները, ամեն ապօրինի
ձգտումները դէպի Երկրային առարկաները։ Այս ա-
մենը կարօղ է մարդ անել՝ Երբ շարունակ հետևի
աստուածալին պատուիրաններին, լրջմտօրէն սովորի
հաւատի և սիրոյ պատգամները։ մտքումը պահէ Յի-
սուս Քրիստոսի մեր վրկութեան համար կրած չար-
չարանքն և խաչի մահը։

Ի՞նչ է խօստանում Յիսուս սրտով սուրբ
մարդկանց։ Խօստանում է, թէ նոքա պիտի տեսնեն
Աստուծուն։ Որովհետև յաւիտենական Երանութեան
աղբիւրն աստուածտեսութիւնն է, ուստի և Փրկչի
խոստումն, թէ սռւրբ միրտ ունեցողներն Աստու-

ծուն պիտի տեսնեն՝ զյաւիտենական Երանութեան
բարձրագոյն աստիճանի խոստումն է, որը նհանդեր-
ձելումն պիտի վայելեն սրտով որորբն մարդիկ ամուս-
նութաւառարար առաջնաւութիւնը սահման և պահ-
ապահութ սիրութ ազ նիւթիւն մաս մնանց մուս ուսի երգ
Երանութեան վափագողները պիտի լինին իրա-
դաղարար։ Ի՞նչպէս պէտք է կատարել այս պատ-
ուիրանը։ Սորա համար պարտաւոր ենք վարուել
ամենքի հետ մարդասիրաբար, առիթ չըտալ հակա-
ռակութեան, պատահած վիճաբանութիւնները պի-
տի աշխատենք վերջացնել համաձայն ճշմարտու-
թեան, մինչև անդամ զիջումն անելով մեր հակա-
ռակորդին, եթէ այդ զիջումն վնասակար չէ մեր
պաշտօնին և բարոյական պարտականութեան և ոչ
ոքի համար վնասալեր չէ։ Թարտաւոր ենք և ուրիշ
հակառակորդներին ու միմեանց հետ թշնամաբնոր
վարուղներին իրար հետ հաշտեցնել, եթէ այդ հը-
նալրաւոր է մեզ, իսկ եթէ մեր կարողութիւնից
վեր է պէտք է աղօթքով խնդրենք Աստուծուց
նոցա մէջ հաշտութեան ոդին գորացնել և խաղա-
ղութիւնը թագաւորեցնել իւր ժողովրդի մէջ։

Ի՞նչ է խօստանում Փրկչը խաղաղութիւնը
պահողներին։ Այն թէ նոքա Աստուծոյ որորի
կը կոչուին։ Եւ այս նորա համար է, որ ինադա-
դարարներն իրանց գործով հետեւող են դառնում

Աստուծոյ Միածին Որդուն, որ իշաւ երկնքից հաշ-
տեցնել մեղաւոր մարդկութիւնն իւր Հօր արդարա-
դատութեան հետ. ուստի և նոցա տրւում է Աս-
տուծոյ „շնորհաց որդի“ անունը, և այս անուան
արժանաւոր աստիճանն երանութեան:

ԵՐԱՆՈՒԻԹԵԱՆ ՈՒԽԵՆՐՈՌԴ ՊԱՏՈՒԻՐԱՆԸ

Յաւիտենական երանութեան վափագունեցող-
ները պէտք է պատրաստ լինին համբերութեամբ
տանելու ծշմարտութեան համար հալածանք՝ ա-
ռանց դաւաճանելու և ուրանալու այն: Ուրեմն այս
պատուիրանը պահանջում է, որ լինինք ծշմարտա-
սէր, հաստատամիտ և առաջինութեան մէջ ան-
ընկնծելի: Սա պահանջում է արիութիւն և համ-
բերութիւն այն դիպուածներում, երբ ճշմարտու-
թեան և առաջինութեան չըդաւաճանելու համար՝
ընկնում ենք թշուառութեան, տառապանքի և վր-
տանգի մէջ:

Ի՞նչ է խոստանում Փրկիչը ճշմարտութեան
համար հալածանք կրողներին: — Երկնքի արքայու-
թիւն, իբրև փոխարէն այն արքայութեան, որից
զըկուեցաւ հալածուելով. ինչպէս և խոստացաւ հոգ-
ով աղքատներին՝ լրացնելու իրանց զգացած պա-
կասութիւնն ու նուազութիւնը:

ԵՐԱՆՈՒԻԹԵԱՆ ԻՆՍԵՐՈՐԴ ՊԱՏՈՒԻՐԱՆԸ
Երանութեան ցանկացողները պէտք է պատ-
րաստ լինին սիրով ընդունելու ամեն տեսակ զբր-
ուլարտութիւն, հալածանք, տառապանք եւ մին-
չել իսկ մահ յանուն Յիսուսի և յանուն ուղղա-
վառ հաւատի ու եկեղեցու: Այս պատուիրանի պա-
հանջած սիրագործութիւնը կոչւում է նահատա-
կութիւն: Յաւիտենից թագաւորը սոցա խոստացաւ
երանութեան գերագոյն աստիճանն ասելով. „Ցնծա-
ցէք և ուրախ լեռուք զի վարձը ձեր քազում են
յերկինս“: Մատթ. Ե. 12:

Մեր յոյսի աղբիւրն է Յիսուս Քրիստոսի աստ-
ուածակին խօսքը կամ Ս. Գիրքն ընդհանրապէս, որ
հաւատի և յոյսի փրկարար վարդապետութեան հետ
դնում է մեր առաջ նաև սիրոյ վարդապետութիւնը՝
ինչպէս լրումն քրիստոնէական աստուածալին յաւի-
տենական վարդապետութեան: Առաջ առաջ այս աղբա-
կան աղաքաղաքական գործութիւնները պատճենա-
կան գործութիւններ են: Առաջ առաջ այս աղբակա-
ն աղաքաղաքական գործութիւնները պատճենա-
կան գործութիւններ են: Առաջ առաջ այս աղբակա-
ն աղաքաղաքական գործութիւնները պատճենա-
կան գործութիւններ են: Առաջ առաջ այս աղբակա-
ն աղաքաղաքական գործութիւնները պատճենա-
կան գործութիւններ են: Առաջ առաջ այս աղբակա-

ՍԱԿԱՆ ԵՐՐՈՌ ՈՒ ԴՆԱՅԻՆ ՊՐԵՎԱՐ
ՀԵԲ ուսոր շանք գլուխան ուսչոր արու չի ճէք
առաջ բյառ աժմարա թլա գառավ ունի ունակ ։ Եած
քառ դոմիոց մաժմառանց կուսառա մոյաւի կուսառ
և իմայի դոմիոց ։ 16. Սիրոյ մասին ։ Եած պահան
մինչուն մամեց լուս ունակ ունակ դոմիոց ։ Ա.
ՀԱԽԱՑԻ ԵԽ ՍԻՐՈՑ ՄԷՋ ԵՂԱՑ ՑԱՐԱԲԵ-
ՐԵՄ ։ ԲՈՒ ՌՈՒԹԻՒՆԸ ԸՆԴ պահառ զար
ար համեն պարագի ձուռամ ընտառ ունակ ։ Եած
Ճշմարիտ հաւատի ներգործութիւնն ու պը-
տուղը քրիստոնէի մէջ պէտք է լինի սէրն և առ-
րան համապատասխան քարեզործութիւնը ։ „Զի ի
Քրիստոս Յիսուս ոչ թշպատութիւն ինչ կարող է, և
ոչ անթիվատութիւն ։ ալ հաւատը՝ սիրով աջո-
դեալը ։ Գողած Ե. Յ. Քրիստոնէի համար բաւա-
կան չէ միայն հաւատն, որովհետեւ հաւատն առանց
սիրոյ եւ քարի գործեղի չէ ներգործող և կենդա-
նի, ալ մեռած, ուրեմն և ընդունակ չէ տանել
մեղ յաւելտենական կեանքը ։ „Մեք գիտեմք՝ զի փո-
խեցաք ի մահուանէ ի կեանս, քանզի սիրեմք գեղ-
բարս իսկ ոչ սիրէ, անդէնի մահուն մնայ ։
Ա. Յովհ. Գ. 14. առջօք զուռո՞ւ չամառ խոռան
„Զինչ օգուտ իցէ, եղբարք իմ, եթէ ասիցէ
ոք հաւատս ունել եւս գործունչ ունիցի ։ միթէ
կարիցե՞ն հաւատքն ապրեցուցանել զնաւ Եթէ եղբար-
ոք կամ քոլը իցեն մերկը կամ կարօտեալ աւուրն կե-
րակրոյ, և (և) ասիցէ ոք ի ձէնջ ցնսսա երթաթէ իսա-

ղաղութեամբ, ջեռարուք և լագեցարուք ։ և տալ-
ցէք ոչ նոցա զպէտս մարմնոյ, զինչ օգուտ իցէ ։
Յակ. Բ. 14, 16. Առաքեալն արակէս պարզ ցոյց
տալով, թէ լոկ հաւատով քրիստոնեան ըլպիտի ալ-
ըի, ալլ թէ հաւատի հետ թորդուած պիտի լինի և
բարի գործը աւելցնում է ։ „Զոր օրինակ մարմին
առանց հոգւոյ մեռեալ է սոյնպէս և հաւատը ա-
ռանց զործոց մեռեալ են“ ։ Յակ. Բ. 26: Խնչպէս
որ չէ կարելի առանց հաւատի փրկուել, միան սի-
րով ու բարի գործերով, նոյնպէս կարելի չէ փորկ-
ուիլ միայն հաւատով, առանց սիրոյ և բարի
գործերի ։ Առաքեալի ասելով՝ Աբրահամ հայր մեր
ոչ արաքէն ի գործոց արդարացաւ՝ հանեալ ի սե-
ղան զորդին եւը գիտահակ պատարագ ։ (Բ. 21):
«Տեսանես՝ զի հաւատքն եղեն գործակիցք գործոց
նորա և ի գործոց անտի հաւատքն կատարեցան ։»
(22). Արդարե, ով որ Աբրահամի պէտ առ Աստ-
ուած ճշմարիտ հաւատ ունի, նա միայն կարող է
ունենալ և սէր և բարի գործը ։ Մեղքով իսանգար-
ուած մարդկային բնութիւնը չէ կամազ ճշմարիտ
բարեգործ լինել, մինչև Յիսուս Քրիստոսի մաքուր
հաւատով չստանայ հոգւոր զօրութիւն, կամ աստ-
ուածային շնորհաց պարգևել ։ Առանց հաւատոց
անհնար է հաճոյ լինել (Աստուծոյ), ալ հաւատալ
արժան է ալյնմ որ մերձենալ առ Աստուծոյ թէ ։
Աստուծոյ և որք ինքը են զնա՝ լինի պարգևատու
երը. ԺԱ. «Զի որ միանգամ ի գործոց օրինացն

են, ընդ անիծիւք են. քանզի գրեալ է, թէ անիծեալ ամենալմ մարդ որ ոչ կացցէ յամենալն գլորեալսն ի գիրա օրինաց՝ առնել զամենալն։ Զի՞օրինօքն ոչ ոք արդարանալ առաջի. Աստուծոյ այն յայտ իսկ է. զի Սրբարն, առէ, ի հաւատոց կեցցէ։ Գաղատ. Պ. 10, 11։ — Ս.յուուհետև որք ի հաւատոց անտի են, օրհնին ընդ հաւատացելոյն Ս.բրահամու։ (9)։

«Զի շնորհօք նորա (Յիսուսի) էք փրկեալք ի ձեռն հաւատոցն... ոչ ի գործոց, զի մի ոք պարծեսցի։» Եփես. Բ. 8—10։

Ի՞նչ պէտք է ասել այնպիսի սիրոյ համար, որ լծորդուած չէ բարի գործերի հետ։

Պէտք է ասել, որ ալրպիսի սէրը կեղծիք է և ոչ ճշմարիտ սէր. վասն զի ճշմարիտ սէրը բնականաբար արտադրում է բարի գործեր։ Յիսուս Քրիստոս ասում է. «Որ ունի զպատուիրանս իմ և սպահէ զնոսա, նա է, որ սիրէ զիս. և որ սիրէ զիս՝ սիրեսցի ի Հօրէ իմմէ. և ես սիրեցից զնա,.. և առնա եկեսցուք՝ և օթևանս առ նմա արացուք։» Յովհ. Ֆ. 21—24։ «Ս.յո է սէրն Աստուծոյ, եթէ զպատուիրանս նորա պահեսցուք. և պատուիրանքն նորա չեն ինչ ծանունք։» Ս. Յովհ. Ե. 3։ «Որդեակը, մի բանիւք և լեզուօք սիրեսցուք, ալլ արդեամք և ճշմարտութեամբ։» Ս. Յովհ. Փ. 18։

Բ. ԱՍՑՈՒԽՈՅՑ ՕՐԵՆՔՆ ու ՊԱՑՈՒԽԻՐԱՆՆԵՐՆ զայտուացած ամենալմ միջոցներ ունինք տարբերելու բարի գործերը չար գործերից։ — Նախ՝ Ս.աստուծոյ այն օրէնքը, որ մեր մէջն է կամ խղճի վկայութիւնը. երկրորդ՝ Աստուծոյ արտաքին օրէնքը կամ պատուիրանները։ Պօղոս Ս.ռաքեալն ասում է հեթանոսների նկատմամբ, «Որք ցուցանեն զգործս օրինացն դրեալ ի սիրոս իւրեանց վկայութեամբ մտաց իւրեանց և յանդիմանել զմիմեանս ի խորհրդոց իւրեանց, կամ թէ պատասխանի իսկ տալ»։ Հռոմ. Բ. 15։

Եթէ մարդս ունի ներքին օրէնք, ապա արտաքինն ինչո՞ւ է տրուած։ — Ս.ըտաքին օրէնքն այն պատճառով տրուեցաւ, որ մարդիկ չանալով ներքին օրէնքին և վարելով մարմնական և յանցաւոր կեանք՝ խեղդեցին իրանց մէջ ներքին օրէնքի ձայնը. ուստի և անհրաժեշտ եղաւ նոցա այն լիշեցնել արտաքուատ, պատուիրանների միջոցով։ «Իսկ զի՞նչ իցեն օրէնք. — Յանցուածոց վասն յաւելան»։ Դադատ. Պ. 19։

Երբ և ի՞նչպէս տրուեցաւ մարդոց Ս.աստուծոյ արտաքին օրէնքը. — Այն ժամանակ, երբ Ս.բրահամի սերունդն եղող երբայեցիք հրաշալիքներով Եղիպատոսի գերութիւնից ազատուեցան, և արդէն ճանապարհ էին ընկած դէպի իրանց խոստացուած երկիրը՝ երբ Սինալի անապատը հասան՝ նոցա առաջնորդ մարդարէն Սովուէ՝ արժանացաւ Սինայ

լերան վերաբ՝ հրովար և ամասով իրան կայտնուող Աստուծուց ստանալ Օրէնքը: Այս այօրէնքի գլխաւոր և ընդհանուր պատուիրանները լուսանեն, որոնք գրուած էին երկու քարեղէն առախտակների վրայ: 1, Ես եմ Տէր Աստուած քո... մի՛ եղիցին քեզ այս աստուածք բաց յինէն: 2, Մի՛ արասցեն դու քեզ կուռա: 3, Մի՛ առնուցու զանուն Աստուծոյ քոյ ի վերայ մնութեաց: 4, Յիշեսչիր զօրն շաբաթուց սրբել զնա: 5, Պատրիեա զհայր քո եւ զմայր քո: 6, Մի՛ սպանաներ: 7, Մի՛ շնար: 8, Մի՛ զրանար: 9, Մի՛ սուտ վկայեր: 10, Մի՛ ցանկանար տան ընկերի քո... եւ մի՛ ամենայնի զինչ ընկերի քո իցէ... ել. ի. 1—18 և Բ. Օրին. Ե. 7—21: Թէպէտե այս պատուիրանները Աստուած տուաւ նախ Խրայէլի ժողովը դին, քայց և մենք՝ քրիստոնեաներս էլ պարտաւոր ենք հնազանդել նոցա, որովհետեւ ըստ էութեան նոքա միւնոյն օրէնքն են, որոնք Պողոս Առաքեալի խօսքի համեմատ՝ զրուած են ամեն մարդի սրտի մէջ, որպէս զիւ ամենքը նոցա համաձայն վարուին Հռովմ. Բ. 15: Նոյն իսկ մեր Փրկիչը հրամայեց արհել պատուիրանները՝ բաւկաւենական կեանք ստանալու հա-

մալ, և սովորեցրեց լաւանս ըմբռնել և գործադրել էին մինչև իւր ժամանակը: Աստթ. Ժ. 17. Ա. Ե. զլ. բ. այս Պատուիրանները գրուած էին նրկու տախտակների վրայ: Մնկի վրայ սէր առ Աստուած և միւսի վրայ սէր առ ընկերն և ըստ արմ հրամաւում է մեզ երկու տեսակի պարտականութիւն: Ինքն Յիշուս Քրիստոս իրան հարցնող փարիսեցուն պատասխանելով ասաց. «Սիրեսցեա զէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ, և յամենայն անձնէ քումմէ, և յամենայն մտաց քոց այս մեծն և առաջին պատուիրան, և երկորդն՝ նման մին, սիրեսցես զընկեր քո իբրև զանձն քո: Յայս երկուս պատուիրանս ամենայն օրէնք և մարդարէք կախեալ կան»: Մատթ. Ի. 36—40: Ընկեր ասելով՝ հասկանում ենք բոլոր մարդիկ, որովհետեւ բոլորս էլ մի և նոյն հախածնողներից ենք սերօւած: Բայց մերձաւոր են մեզ նոքա, որոնք որպէս մի երկնաւոր Հօր զաւակներ՝ մեզ հետ ևս միւնոյն հաւատքն ու դաւանական խռատվանութիւնն ունին: ի Յիշուս Քրիստոս:—Պատուիրանների մէջ չըկայ որոշ պատուիրան Սիրոյ Առ անզն, որովհետեւ առանց պատուիրանի ևս, բնականարար Ոչ ոք երեկք ատեայ զանձն իւր, այլ սնուցանէ և գարմանէ զնա: Եփես. Ե. 29: Սուլբ Գրքի համեմատ սիրել պարտաւոր ենք մեր անձը՝ Ապան Աստուածոյ միայն և վասն ընկերին: Սիրել ընկերին և մերձաւորին դարձեալ

„Վասն Աստուծոյն, իսկ Աստուծուն սիրել պարտաւոր ենք՝ Վասն իւր միայն՝ և այն մամենից աւելի՛ Առ անձն ունեցած սէրը պարտաւոր ենք զոհել ընկերի և մերձաւորի սիրոյն, իսկ անօթ, ընկերի ու մերձաւորի սէրը պարտաւոր ենք զոհել Աստուծոյ սիրոյն։ Այսպէս է պատուիրում Յիսուս Քրիստոս՝ ասերով։ Մեծ ևս քան զայս սէր ոչ ոք ունի՝ եթէ զանձն իւր դիցէ ի վերաբ բարևկամաց իւրոց։ Յովհ. ԺԵ. 14: Եւ թէ՝ „Որ սիրէ զհայր կամ զմայր առաւել քան զիս՝ ոչ է փնձ արժանի. և որ սիրէ զուտոր կամ դրատր առաւել քան զիս՝ չէ ինձ արժանի։ Մատթ. Ժ. 37: Յաւագուար առաջնական պատուիրանները բովանդակւում են երկու օրէնքի մէջ, բայց և այնպէս նոքա տասն պատգամների են վերածուած, որպէս զի կարդանանշք պարզ պատկերացնել մեզ մեր պարտաւորութիւններն առ Աստուծ ունեցած պարտաւորութիւններս բովանդակուած են առաջին չորս պատուիրանների մէջ, արսպէս՝ Առաջին պատուիրանը հրամայում է ճանաչել եւ պատշել միակ ճշմարիտ Աստծուն. Երկրորդ պատուիրանը հրամայում է հեռանալ սուս աստուածաշտութիւնից. Երրորդը հրամայում է չըխանդարել աստուածպաշտութիւնը խօսքով անգամ. Չորրորդը պատուիրում է ի նըկատի ունենալ աստուածպաշտութեան մէջ ժամանակի եւ գործերի կարգաւորութիւնը։ — Իսկ վեր-

ջին վեց պատուիրանների մէջ հրամանագրեում է մերձաւորին և ընկերին վերաբերեալ սլարպըներս։ Հինգերորդ պատուիրանով հրամայում է սիրել եւ պատուել մերձաւորին՝ մանաւանդ մեզ մօտիկ մերձաւորին՝ սկսելով ծնողներից։ Վեցերորդը պատուիրում է չըլվնասել մերձաւորի կեանքին։ Եօթներորդը պատուիրում է չըլվնասել նոցա վարքի մաքրութեանը։ Ութերորդը պատուիրում է չըլվնասել նոցա սեպհականութեանը։ Իններորդը պատուիրում է չըլվնասել նոցա խօսքով և Տաներորդն արգելում է նոյն իսկ նոցա վնասել ցանկանալը։ Դէպի մեր անձն ունեցած պարտականութիւններս որոշում է մեր՝ դէպի մերձաւորն ունենալու պարտականութեան պատուիրանների մէջ, ըստ որում մերձաւորին սիրել պարտաւոր ենք այնպէս՝ ինչպէս մեր անօթ. իմանալով թէ որպիսի պարտականութիւններ ունինք կատարելու դէպի մեր անօթ՝ նոյն պարտականութիւնները պիտի ունենանք կատարելու և դէպի մեր մերձաւորները։ Եփես. Ե. 23: Առաջին ՊԱՏՈՒԻՐԱՆ

Է ծանալչել Տէր Աստուծունք Այս ճանաչողութիւնից ծագում են բատօվկ պարտաւորութիւններ: 1) Պարտաւոր ենք ուստուածքիսութիւնը, որ ըստոր գիտութիւններից կարևորագոյն է մարդու համար: 2) Պարտաւոր ենք սիրով և ժրածանութեամբ լսել Աստուծոյ և իւր գործերի մասին քարոզուած խօսքը՝ թէ եկեղեցու մէջ և թէ ընտանեկան շրջանում: Երբ այդ մասին լինում է բարեպաշտական խօսակցութիւն: 3) Պարտաւոր ենք ամձամբ կարդալ գրքեր կամ ունկնդիր լինել այնպիսի գրքերի ընթերցանութեան, որ ուսուցանում և առաջնորդում են մեզ դէպի ճշմարիտ Աստուածզիւթիւններ՝ ինչպէս Ս. Գիրքը, Ս. Հալքերի գրութիւններն և ամենայն գիրք, որք գրուած են բարեպաշտ հոգւով և երկեղածութեամբ:

Մի եղիցին քեզ այլ աստուածք բաց լինէն:

Այս խօսքերով Աստուած պատուիրում է մեզ դառնալ դէպի իրան, որպէս մեր միակ ճշմարիտ Աստուծուն և կամ որ նոյն է՝ հոգւով և սրտով պաշտել նորան միայն, չունենալ ուրիշ պաշտելու անձեր և առարկաներ: Հոգւով և սրտով աստուածպաշտութիւնը կոչւում է ներքին աստուածպաշտութիւն:

Ներքին աստուածպաշտութեան են վերաբերում: 1) Հաւատալ Աստուծուն. 2) Ծրջել կամ զնալ Աստուծոյ առաջ, այսինքն՝ խորհել Աստուծոյ մասին, և ամեն քանում զգուշութեամբ վար-

մել որովհետև նա տեսնում է ոչ միայն մեր գործերը, այլ և մեր ծածուկ խորհուրդները: 3) Աստուծուց երկրշել այսինքն Աստուծոյ պատուիրանների գէմ գործելը համարել մեզ համար ամենամեծ դժբաղութիւն, և ամեն կերպ աշխատել, որպէս զի մեր երկնաւոր չօրն արժանաւոր, սիրելի և հաճելի գաւակներ լինինք: 4) Ապահնել Աստուծուն միայն. 5) Նորան սիրել. 6) Հնագանդել նորան, այսինքն միշտ պատրաստ լինել կատարելու այն, ինչ որ նա պատուիրում է իւր Ս. Գրքի մէջ և չըտրնջան երբ նա այն չէ անում մեզ, ինչ որ մենք կ'ուզէինք: 7) Հպատակել նորան, որպէս Գերագոյն իութեան: 8) Փառաբանել նորան, որպէս ամենտիկատարեալին: 9) Գոհութիւն մատուցանել նորան, որպէս մեր Արարչին, նախախնամողին և Փրկչին: 10) Օգնութեան կանչել Աստուծուն, որպէս ամենալարի, ամենակարոշ և ամենիմաստուն օգնողի՝ մեր բոլոր բարի սկզբնաւորութեանց մէջ, և նրանով սկսել շարունակել և լրագործել իրան հաճելի բաները:

Խկ արտաքին աստուածպաշտութեան վերաբերում են: 1) Քարոզել Աստուած, այսինքն՝ խոստովանել, թէ նա է մեր Աստուածը, և չըդրժել նորան՝ թէպէտ այդ խոստովանութեան համար մեռնել ևս հարկ լինի: 2) Մասնակցել հասարակաց աստուածպաշտութեան, որ կարգադրուած է քըրիստոնէական ուղղափառ եկեղեցուց:

Որպէս զի աւելի ճիշտ ըմբռնենք առաջին
պատութիւնը պարտաւոր ենք գիտենալ նաև, թէ
նորա գէմ որպիսի մեղքեր կարող են լինել: Մեղք են.

1) Անհատուածութիւնը, այսինքն երբ մար-
դիկ, որոց Սազմոսերգուն իրաւամբ անուանում է
անզգամ կամ անմիտ՝ կամենալով Աստուծոյ ահեղ
դատաստանի երկիւղից ազատուել, իրանց մըտ-
քում ասում են, թէ ոչ որոյ Աստուած: Սազմ.
ԺԴ. 1:

2, Բազմաստուածութիւնը՝ այսինքն՝ երբ փո-
խանակ մի ճշմարիտ Աստուծոյ, դաւանում են շատ
որւտ աստուածներ:

3, Անհաւատութիւնը, երբ խոստովանելով թէ
կայ Սատուած, չեն խոստովանում նորա նախախ-
նամութիւնն ու յայտնութիւնն ևս:

4, Հերետիկոսութիւնը, երբ մարդիկ հաւատո-
քի վարդապետութեան մէջ ներմուծում են կար-
ծիքներ կամ ուսմունք, որոնք հակառակ են աստ-
ուածգիտութեան ճշմարիտ վարդապետութեան:

5, Հերձուած կամ աղանդ, այսինքն ինքնա-
կամ բաժանուին աստուածպաշտութեան միաբա-
նութիւնից կամ աստուածալին ուղղափառ եկեղե-
ցուց՝ Ս. Գրքի խօսքին թիւը մեկնութիւն տալով:

6, Աստուածուրացութիւն, երբ մարդիկ հրա-
ժարում են ճշմարիտ հաւատքից, դրդուած մարդ-
կալին երկիւղից կամ աշխարհալին շահերից:

7, Յուսահաւատութիւն, երբ մարդիկ շնորհ և

Փրկութիւն ստանալու յոյսերը բոլորովին կարում են
Աստուծուց:

8, Կախարդութիւն, երբ մարդիկ Աստուծոյ
զօրութեան վրայ հաւատքը թողած՝ հաւատ են
ընծալում գաղտնի, և յաճախ ևս արարածների չար
զօրութեան, մանաւանդ չար ոգիների զօրութեան
հաւատալով՝ աշխատում են ներգործել նոցանով:

9, Մնուիհապաշտութիւն, երբ նշանակութիւն
և հաւատք են ընծալում որ և է սովորական բանի,
իբր թէ նորա մէջ լինի աստուածալին զօրութիւն,
և փոխանակ Աստուծոյ՝ նորա վրայ են յու դնում,
կամ նորանից վախենում են: Հաւատում են գրբա-
ցութեան, աչքով տալու, հմայութեան, բժժանք-
ների, յուռութների և այլ աւելորդապաշտութեանց՝
փրկարար զօրութիւն գնելով նոցա մէջ, որ ամե-
նեին չունին: Սոքա բոլորը հակառակ են ճշմարիտ
աստուածպաշտութեան և, հետեւաբար, մեղք են Ա.
պատուիրանի դէմ և յանցանք:

10, Ծուլութիւն՝ վերաբերմամբ բարեպաշ-
տութեան, աղօթքի և հասարակաց աստուածպաշ-
տութեան:

11, Սիրել արարածներին աւելի քան Ա-
րարջին:

12, Մարդահաճութիւն, երբ հաճոյանում են
մարդկանց կամքին, հակառակ Աստուծոյ կամքին:

13, Ապաւինելք մարդկանց, երբ մէկը ապա-
ւինում է մարդկանց ընդունակութեան և կը կամ

այսոց զօրութեան, և ոչ Աստուծոյ ողորմութեան
և օգնութեան:

Ընչու կարեոր է իմանալ, որ մարդահաճու-
թիւնն ու մարդկանց ապաւինելը հակառակ են
առաջին պատուիրանին:—Որովհետեւ մարդը, որին
հաճոյանում ենք և որի վրայ լոյս գնում՝ մինչ
ցմոռացումն Աստուծոյ՝ դառնում է մեզ համար մի
տեսակ աստուած՝ փոխանակ ճշմարիտ Աստուծոյ:
Ահա այդ աստիճան մարդահաճութիւնն և մարդա-
պաւինութիւնը հակառակ է Ա. պատուիրանին: Սորա
համաձայն և Պօղոս Առաքեալն ասում է. „Արդ՝
մարդկան հաճոյ լինիցիմ, թէ Աստուծոյ, կամ իւընդ-
րիցեմ մարդկան հաճոյ լինել. Եթէ տակաւին մարդ-
կան հաճոյ լինեի, ապա Քրիստոսի ծառայ ոչ էի“:
Գաղատ. Ա. 10: Իսկ մարդկանց ապաւինութեան
նկատմամբ՝ ասում է Ա. Գիրքը. «Ալապէս ասէ Տէր,
անիծեալ լիցի մարդ որ արացցէ զրոյս իւր ի մարդ,
և ապաստան լինիցի ի մարմին բազկի նորա, և
ապստամբիցէ ի Տեառնէ սիրտ նորա“: Երեմ. Ժէ. 5:
Եթէ առաջին պատուիրանը հրամայում է բա-
րեպաշտօրէն պաշտել միակ Աստուծուն, ապա Բնչ-
պէս է համաձայնում այս պատուիրանին՝ հրեշտակ-
ներին և սուրբերին մեր մատուցած յարգանքը:—Եթէ
նոցա պատիւ և յարդ մատուցանելը լաւ հասկա-
նանք, նոքա բոլորովին համաձայն կըմինին Ա. պատ-
ուիրանին. վասն զի մեր տուած պատիւը, յարգը
բացառապէս վերաբերում ենք այն աստուածալին

Հնորհին կամ զօրութեան, որ բնակուելով նոցա մէջ
ներգործում է ըստ պատշաճին՝ Աստուծոյ թժովով-
ութեամբ: Ալապէս, ընդունելով նոցա Աստուծոյ
շնորհաց, կամ զօրութեան սուրբ ու մաքուր բնա-
կարան՝ դիմում ենք նոցա միջոցով առ Աստուծ և
իրանից միայն խնդրում մեր պիտոյիները Սրարչից,
և ոչ արարածներից:

ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏՈՒԻՐԱՆ

Ի՞նչ է նշանակում „կուռք“ բառը, որի մասին
խօսում է երկրորդ պատուիրանը:—Սոյն պատուի-
րանի մէջ արդէն բացատրուած է, թէ „կուռքն“ է
որ և է երկնաւոր կամ երկրաւոր արարածի նմա-
նահանութիւնը, կամ պատկերակերպը և կամ պատ-
կերը, որին մարդիկ երկրագում են՝ փոխանակ Աստ-
ծուն երկրպագելու: Ուրեմն երկրորդ պատուիրանը
հրամայում է չերկրպագել որ և է արարածի և նո-
րա պատկերին, կամ նմանահանութեան: Բայց ա-
մենեին հակառակ չէ երե սըբագոլծած պատկեր-
ները գործ ենք ածում, որպէս սուրբ միջոցներ, ո-
րոց օգնութեամբ բարեկալաշտաբար լիշում ենք և
Աստուծոյ և նորա սրբոց գործերը: Այս մտքով
պատկերները գըքեր են, որոց մէջ տառերի և բա-
ռերի տեղ դրուած են անձեր և իրեր: Ինչպէս որ
սըբարար խորհուրդների միջոցով ստանում ենք

Աստուծոյ շնորհաց՝ պարզեները՝ նոյնպէս և տէ-
րունական խօսքի և սրբարար պաշտամունքների և
արարողութիւնների միջոցով աստուածալին պարզե-
ւատու շնորհն իջնում սրբագործում է եկեղեցա-
կան պատկերներն ու անօթները, որոնք այնուհե-
տեւ լինում են արժանի մեր յարգանքին ու պատ-
ուին: Վերջապէս, յարգանք մատուցանելը պատկերի
նախատպին՝ և պաշտելը՝ երկու տարբեր բաներ
են: Պաշտում ենք Աստծուն միայն, իսկ նորա սըր-
բերին՝ պատում ենք:

Աստուծոյ պատկերին մէջ Աստծուն պէտք է
երկրպագենք, իսկ սըբոց պատկերի մէջ՝ յարգում
ենք այն սըբերի աստուածահաճոյ սըբութիւնը:
Երկրորդ պատուիրանի դէմ եղած մեղքը կոչ-
ւում է ընդհանուր անունով՝ կռապաշտութիւն.
բացի բուն և կռափա կռապաշտութիւնից՝ կայ և
նուըր կռապաշտութիւն, ինչպէս են. 1) Ազահու-
թիւնը, 2) Որկրամոլութիւնը, 3) Հպարտութիւնը,
որին պատկանում է և փառասիրութիւնը: Պօղոս
Սուաքեալն է ասում, թէ ազահութիւնն է կռա-
պաշտութիւն. Պօղոս. Գ. 5: Սորա պատճառն այն
է, որ ագահ մարդը զբաղուած է աւելի երկրաւոր
ճոխութեան հոգածերով, քան թէ իւր առ Աստուած
պարտականութեամբ: Երկրորդ պատուիրանը դատա-
պարտելով ագահութիւնը՝ պատուիրում է առաստ-
ծեռնութիւն և ողորմածութիւն:

Որկրամոլութիւնը դատապարտում է և դորա-

նով իսկ՝ պատուիրում ժուժկալութիւն և չափաւո-
րութիւն: Որկրամոլութիւնը դատապարտում է, ո-
րովհետեւ որկրամոլներն իրանց զգայական բաւա-
կանութիւնը գերածասում են ամեն նուիրական
բաներից. այս պատճառով և Պօղոս առաքեալն աշ-
տում է. „Որոց Աստուած որովայնն իւրեանց է“,
կամ որովայնն է իրանց կուռքը, որին և պաշտղում
են: Փիլիպ: Գ. 19: Կուռք առաջաւայր և առաջաւայր
ինչու հալարտութիւնն եւ փառասիրութիւնը
պատկանում են կոազպաշտութեան: — Որովհետեւ հը-
պարտն ու փառասիրը գնահաճատում են իրանց ըն-
դունակութիւնն ու առաւելութիւններն ամեն բա-
նից աւելի, և սոքա դառնում են նոցա համար
կուռք: Փառասիրը ցանկանում է, որ ուրիշներն ևս
իւր կուռքին երկրպագեն: Ճանապարհ առաջաւայր
կեղծաւորութիւնն եւս երկրորդ պատուիրա-
նի դէմ է այն ժամանակ, երբ կեղծաւորները կրօ-
նական ծէսերի մէջ անգամ ձևանում են բարեգաշտ
օրինալ՝ պահեցողութեան և կարգապահութեան նը-
կատմամբ՝ իրանց երեւեցնում են մաքրակեաց, որպէս
զի ժողովրդից շորթեն գովասանութիւն և յարգանք՝
առանց ուղելու իրանց սիրտը ներքնապէս: Մատթ.
Զ. 5—7: Երկրորդ պատուիրանը, արգելելավ հպար-
տութիւնը, փառասիրութիւնն և կեղծաւորութիւ-
նը՝ պատուիրում է լինել հեզ, կոռնպրի, պարզ,
ընական և գործել բարին ծածկապէս, առանց
հռչակ հանելու, առանց ժմբկահարութեան և փող

մ հայ մոլա մազ դմէ կայրէն Ա. Հաստում:
փշելսւ, ինչպէս կեղծաւոր փարիսեցիներն էին անում:

առաջ նորոշքյա Վ լուսաւու պա զօնը Ա
ծագմանաբ վամշո մո ման համ համարի բանս
ԵՐՐՈՐԴ ՊԱՏՈՒԻՇՐԱՆ

Չ աշքնայդմա վեճ վայրու չ մայա
արա, Մի տոնուցուս գանուն Աստուծոյ քո է
վերալ մնոտեաց, նշանակում է՝ փուչ կամ դատարկ
բաների համար չըփշել Աստուծոյ անունը: Այդ լի-
նում է՝ երբ լիշտում է Աստուծոյ անունը սովորական
խօսակցութեան ժամանակ՝ անօդուտ և մնոտի վի-
ճաբանութեան մէջ, մանաւանդ՝ երբ արտասան-
ում է առանց պատկառանքի այն նպատակով, որ
պէս զի նորանով հաստատուի մի ստութիւն:

Երբորդ պատուիրանով արգելում են.

- 1) Աստուծոյ դէմ եղած անզգամութիւնը, կամ յան-
դուդն և անպատկառ խօսքերը:
- 2) Տրտունջ առ. Աստուած, կամ գանգատներ նորա
տնօրէնութեանց դէմ:
- 3) Անարգանը, երբ նուիրական բաները դարձնում
են ծաղրի առարկայ և հայհոյում:
- 4) Առուտ երդուկելը, երբ երդմամբ հաստատում
են մի բան, որ չըկալ կամ չէ եղած:
- 5) Ամեն փուչ կամ դուզն բաների համար երդման
վատ սովորութիւնը, խօսակցութեան, առեւտրի,
պայմանի և դաշինքի մէջ: Այսախիների դէմ ա-
սաց Փրկիչը. Այլ ես ասեմ ձեզ՝ ամենեին մի

երդնուլ. Այլ եղիցի ձեր բան, այսն՝ ալո՛, և
հէն ոչ. զի աւելին բան զայն իշարէնէ՛, Մատթէ. Ե.
Ե. 34. 37:

Արդեօք այս խօսքերով չէ արգելում հասա-
րակաց կեանքի մէջ՝ նոյն իսկ օրէնքի պահանջած
երդումն ես:

— Ո՛չ: Կարելի է երդուել՝ եթէ անհրաժեշտ է
երդումն անձի և ընկերի իրաւունքը, սեպհակա-
նութիւնն և արդարութիւնը պահպանելու համար՝
յանուն բարձրագոյն ճշմարտութեան, յանուն սովորը
և կենդանի Աստուծոյ: Հատ այսմ և Պողոս Սուա-
քեալն ասում է. «Ապաքէն մարդիկ որ ինչ իվեր
է քան զինքեանս՝ յայն երդնուն. և ամենայն հա-
կառակութեան նոյա վճիռ ի հաստատութիւն, եր-
դումն է. որով առաւել ևս կամեցեալ Աստուծոյ՝
ցուցանել ժառանգաւորաց աւետեացն զհաստա-
տութիւն խորհրդոյն իւրոյ, միջնորդեաց երդ-
մամը»: Եբբ. Զ. 16—17:

Ուրեմն, եթէ նոյն ինքն Աստուած՝ իւր խոստ-
ման անդարձութիւնը համեցաւ հաստատել երդ-
մամը, գորանով թող տուաւ և մեզ ամենակա-
րեւոր և անհրաժեշտ դէպքերում՝ օրինաւոր իշխա-
նութեան պահանջմամբ՝ գործածել երդումն երկիւ-
զածութեամբ և հաստատուն դիտաւորութեամբ՝
որ նորանով հաստատենք զուտ ճշմարտութիւնը:
որպէս ինքներս ենք ճանաչել այն ճշմարտութիւնը:
Ներսէս Ննորհալին զգուշացնում է մեզ ասելով.

Մի եղիցի ձեզ յօժարութեամբ դիմել յերդմունս
յանունն Աստուծոյ, և յԱւետարանն առորբ և ի
խաչ առանց մեծագոյն հարկի. Ընդհ. Թղ. առ իշխ.

Ո. Յովհ. Ոսկեթերանն ևս պատուիրում է
նախ՝ չերդնուլ, իսկ եթէ հարկ լինի՝ գոնէ սուտ
չերդնուլ. «Բաժանեալ ի բաժինս գառաքինութիւնն,
արասցուք սկիզբն նախ չերդնուլ, և անտի մի սուտ
երդնուլ. Մատթ. մեկն. ԺԱ. ճառ:

ՀՈՐՌՈՌԴ ՊԱՏՈՒԻՌԱՆ

Ընչու Աստուած հրամայեց եօթնեկի եօթնե-
րորդ օրը սուրբ պահել: — Իորա պատճառն այն է,
որ Աստուած իւր բոլոր ստեղծագործութիւնը վեր-
ջացրեց վեց օրում և եօթներորդ օրը հանգստա-
ցաւ, այսինքն գագարեց ստեղծագործելուց: Քրիս-
տոնէական եկեղեցին շաբաթ աւուր փոխարէն տօ-
նում է շաբաթուայ առաջին օրը, որ կոչում է
Միաշաբաթ կամ Կիւրակի, սկսեալ Քրիստոսի Յարու-
թեան օրից. այդ պատճառով Միաշաբաթը կամ
Կիւրակի օրը կոչում է նոյնպէս և Յարութեան
օր, կամ լոկ Յարութիւն: Առաքեալներն իրանք այդ
օրը սահմանեցին իբրև շաբաթ՝ (այսինքն հանգստ-
առած օր) հացը բեկանալու, այսինքն՝ հաղորդու-
թեան խորհրդի կատարման համար. (Փոք. Ի. 7):

Եօթնեկի առաջին օրն Յիսուս երկեցաւ աշա-
կերտներին. և յաջորդ եօթնեկի նոյն օրը դարձեալ
նոցա հետ էր, և ինքն իրան յայտնեց Թոմասին:
Ա. Կորնթ. ԺԱ. 20: ԺԴ. 23 և 40 համարներից
երեսում է, որ աշակերտները սովոր էին ամեն տեղ
միասին ժողովուել և պաշտօն մատուցանել, այսինքն
Տէրունական ընթրիքը կատարել. նոյն Ա. Կորնթ.
ԺԶ. 1 և 2 համարներից երեսում է, որ այդ ժո-
ղովները լինում էին „ի միաշաբաթւոց“ այսինքն
կիւրակի: Յայտնութեան Ա. 10-ից երեսում է, որ
Յովհաննէս առաքեալն ու աւետարանիչը պահում
էր Միաշաբաթը մասնաւոր կերպով, և կիրակին այն
միջոցին արդէն „Տէրունական օր“ կոչումն էր ստա-
ցած. որ և յարատեսում է մինչև այսօր: Կրտսերն
Պլինիոս, որ Պոնտոսում բգեշխի փոխանորդ էր՝
առաջին դարու վերջերում, Տրայանոս կայսրին
գրած թղթի մէջ ասում է, թէ քրիստոնեաները
„սովոր են մի որոշ օր ժողովուել յառաջ քան այդն,
երգել ի պատիւ Քրիստոսի, իբրև Աստուծոյ, և
ուխտել որ և է յանցանք կամ ոճիր չըգործել“ և
այն: Յուստինիոս վկան պատմում է, թէ „Տէրու-
նական օրը բոլոր քրիստոնեաները քաղաքներում և
գիւղերում ի մի խմբուելով, կարդում են մարգա-
րէից և առաքելոց գրուածները. նախագահ Հոգեո-
րականը ատենաբանութեամբ յորդորում է ժողովը-
գին լիշել և գործադրել՝ ինչ որ լսեցին: Յետոյ
միասին աղօթում են և կատարում յորինուրդը,

վասն զիւայն օրն է օր յարութեան Տեառն մերոյ“:
Տէրունական օրը պէտք է սուըք պահել, այս-
ինքն՝ այն օրը սրբուամ է առ Աստուած մատուց-
ուած ջերմեռանդ աղօթքներով, մարդասիրական
հարկաւոր գործերով, հրապարակական և առանձ-
նական փառաբանութեամբ և գոհութեամբ։ Այդ
օրը պէտք է մտքի հանդարտութեամբ բարոյական
և կրօնական ճշմարտութեանց վրայ խորհել, կար-
դալ, պատմել, մեկնել և քարոզել Աստուծոյ խօս-
քը։ Կեանքի սովորական գործերը պէտք է այն օ-
րը մի կողմը դնել իսպառ, և նուիրել մեզ բարե-
պաշտութեան և առաքինական գործերի և գոր-
ծունեութեան։

„Յիշեա սրբել զօր շաբաթուց“ խօսքն ունի
և ուրիշ նշանակութիւն։ Հին ուխտի եկեղեցին „շա-
բաթ“ ասելով՝ հասկանում էր ուրիշ օրեր ևս, որոնք
սահմանուած էին տօնելու, կամ պահոց համար,
օրինակ՝ Պասերի տօնը, Սրբութեան տօնը, և
այլն։ Քրիստոնէական եկեղեցին ևս՝ «տէրունական
օր» ասելով՝ միայն միաշաբաթը չէ հասկանում, այլ
և ուրիշ տօն օրեր ևս, որոնք սահմանուած են ի
փառս Աստուծոյ և ի պատիւ Աստուածամօր։ Նաև
Աստուծոյ սրբերի համար կան սահմանուած տօներ,
որոնք նոյնպէս պէտք է տօնուին հանդիսով և հո-
գևոր ցնծութիւններով։

Ամենազլիսաւոր տօներն են՝ մարմնացեալ Աստ-
ուածորդուն և իւր մշտակոյս Մօրը վերաբերեալ

- տօները, որ ըստ կարգի գիտաց սոքաւեն մսախ
1, Տօն լղութեան և Աստուածածնի։ Այսուհետեւ մաս
2, Տօն Ծննդեան Աստուածածնի։ Այսուհետեւ մաս
3, Տօն ընծալման Ա. Աստուածածնի ի Տաճանմ։
4, Տօն Աւետման կամ Աւետեաց, այնէ 7 Ապրիլի,
երբ հրեշտակը Ա. Կոյս Մարիամին աւետեց, թէ
նորանից Ա. Հոգւոյ զօրութեամբ պիտի ծնուի
Աստուածորդի Յիսուսը։
5, Տօն Ծննդեան Փրկչի և Աստուածայալտնութեան։
6, Տօն Մկրտութեան։ Մեր եկեղեցին առաքելա-
կան սովորութեան համեմատ՝ ծննդեան և
Մկրտութեան երկու տօները միասին է կա-
տարում Յունուարի վեցին։ Այդ երկու տօները
միասին կոչում են Աստուածայայտնութիւն,
կամ տօն Յայտնութեան։
7, Տօն Անուանակոչութեան Տեառն, որ կատար-
ւում է Յունուարի 13-ին։
8, Տօն Տեառնընդպուածի կամ Քրիստոսի քառաս-
նօրեալ հասակում տաճար տարուելուն, որտեղ
նորան ընդ առաջ եկաւ Սիմէօն ծերունին։ Այս
տօնը կատարում է Քետրւարի 14-ին։
9, Տօն Պատճառակերպութեան կամ Վարդակառոյն։
10, Տօն Յիսուսի հանդիսիւ Երուսաղէմ մտնելուն,
կամ Ծաղկազարդ։
11, Տօն Յարութեան կամ Զատիկ և Պասեր, որ է
սկիզբն և գլուխ բոլոր տօների, որովհետեւ բո-
լոր շաբաթական տօների փոփոխման պատճառն է։

Մեր տօներն երկու տեսակ են՝ շարժական և
անշարժ։ Անշարժ են Աւետեաց, Աստուածա-
յալութեան, Անուանակոչութեան, Տեառնլնդա-
ռաջի և Աստուածածնի Յզութեան (9 Դեկտեմբերի),
Ծննդեան (8 սեպտեմբերի) և Տաճարին ընծալման
(21 նոյեմբերի) տօները. միւս բոլոր տօները՝ թէ
Տէրունական և թէ Սրբոց շարժական են, այսինքն
միշտ միւնոյն ամսաթուին չեն հանդիպում, այլ
գանազան ժամանակներում։ Սորա պատճառն է այն՝
որ Զատիկն ևս որից կախումն ունին շարժական
տօները՝ միշտ միւնոյն ամսաթուին չէ հանդիպում,
այլ գանազան միջոցներում։ ուստի նորա շարժուե-
լոց շարժում են և միւս շարժական տօները։
12, Տօն Համբարձման Տեառն։
13, Տօն Հոգեգալստեան կամ Պենտէկոստէ։
14, Տօն Վերափոխման Ս, Աստուածածնի։
15, Տօն Ս. Խաչի։ Այս բոլոր տօներն և սոցա հետ
նաև Թաղէոս և Բարդուղիմէոս առաքեալների եր-
կու, Ս. Գրիգոր Լուսաւորչի երեք տօները, Հրեշ-
տակապետաց, ամենայն Սրբոց, Ս. Էջմիածնի, Ս.
Թարգմանչաց, Ս. Սահակի և Մեսրովի, Արքարև
Տրդատ Ս. թագաւորների, Ս. Ղեոնդեանց և Ս.
Վարդանանց տօները, որպէս և տիեզերական Ս.
Ժողովների տօները կերակի են և եկեղեցին տօնում
է հանդիսավուն

Այս բոլոր տօներին քրիստոնեաները պէտք է
զբաղուին հոգեւոր գործերով, պարապին այդ տօնե-

րի մասին գրուածներով, խմբուին միասին և Հրա-
պարակական պաշտամամբ՝ ժամասացութեամբ և Ա.
պատարագով փառաւորեն Աստծուն իւր մեծար-
քանչ գործերի համար և լիշտակեն նորա սրբերի
սիրագործութիւնները։

Զորբորդ պատուիրանը խօսելով վեցօրեայ գոր-
ծելու մասին, դատապարտում է նոցա, որոնք ոչինչ
գործով չեն պարապում, այլ զբաղւում են մարդ-
կալին արժանաւորութեան անվայել զքօսանքներով
և կամ ժամանակն անցընում են անգործութեամբ։
թէ իրանց անօգուտ և թէ ուրիշների համար վնա-
սակար կերպով։ Այդպիսիները թէ տօների սրբու-
թեան և թէ լի օրուայ աշխատանքի աստուածալին
սկզբանց արատ են բերում իրանց օրինազանց վարք
ու բարքով, որով և մեղանցում են աստուածալին
չորրորդ պատուիրանի դէմ։ թէ կիրակի և թէ
միւս նշանաւոր տօների ժամանակ սարմնական գոր-
ծերը դադարեցնելով, պէտք է նախ լիօրուայ գոր-
ծերը սրբել առ Աստուած ուղղած գոհացողական
աղօթքներով և օրհնութիւններով, և երկրորդ կազ-
դուրել մեր մարմնի, հոգու և մտքի զօրութիւն-
ները պատշաճ հրահանգներով և վարժութիւննե-
րով, այնպէս որ՝ տօն օրը լինի օր մարմնաւոր,
հոգեւոր և մտաւոր առողջութեան, օր բարեպաշ-
տութեան, օր վերանորոգման և հոգեւոր մխիթա-
թեան։

Հինգեսը զատում զատում զատում զատում զատում զատում
 Ծնողաց նկատմամբ՝ հինգերորդ պատուիրանը
 հրամանում է պատուել նոցա՝ որ ընդհանրապէս
 նշանակում է, մատուցուած նոցա՝ որ ընդհանրապէս
 1, Պատուավ վարուել նոցա հետ,
 2, Հնագանդել նոցա,
 3, նոցա հիւանդութեան, ծերութեան և անկա-
 րութեան ժամանակ՝ կերակրել եւ հոգալ նո-
 ցա պէտքերը սիրով և անտրառունջ.
 4, նոցա կենդանութեան ժամանակ՝ ինչպէս և մեռ-
 յօն լելուց լետոյ՝ ազօթել նոցա հոգու փրկութեան
 համար, ճիշտ կատարել նոցա կամքն և կտակը:
 Ուշակի ծնողները պատիւ ու լարգանք չունե-
 նալը մի լանցանք է, որի ծանրութեան մասին ալսպէս
 պէտք է մտածենք, թէ որչափ որ հեշտ ու բնական
 է ծնողներին սիրելը, որոց մենք պարտական ենք մեր
 կեանքը՝ այնչափ և ծանր մեղք է սէր և լարգանք
 չըմատուցանել նոցա: Այս սկզբունքով՝ Մովսէսի օ-
 րէնքի մէջ սահմանուած էր մահու պատիժ ալն-
 պիսիների համար, որոնք իրանց հօր կամ մօր դէմ
 կըչարախօսէին: Ելից ԻԱ. 16:

Ծնողաց պատուելու օրէնքին լարակցուած է
 խոստումն բարութեան և երկար կենաց. սորա
 նպատակն է այդ վարձատրութեան խոստումով ա-
 ւելի հզօր կերպով արծարծել մեր սրտերում ծնո-

ղական պատուի զգացումն և պատուիրանի կատար-
 ման յօժարութիւնը:
 Այս պատուիրանի վրայ են հիմուած նախ՝ ըն-
 տանեկան և երկրորդ՝ հասարակաց կեանքի բոլոր
 կարգ ու կանոնը, խաղաղութեան և բարգաւաճ-
 ման բոլոր պայմանները: Բարութեան և երկարա-
 կեցութեան խոստումն կատարում է ինքն Սստուած
 պատուիրանապահ որդոց համար:
 Նախահայրերի և նահապետների օրինակից ե-
 րեւում է, որ Սստուած նոցա խօսքին տալիս էր ա-
 ռանձին զօրութիւն, նոցա օրհնութիւնն և անէծ-
 քը կատարում էին անթերի: Ծննդոց իէ: Հօր
 օրհնութեամբը հաստատում է որդոց տունը: Սի-
 րաք: Գ. 9: Սստուած իւր ամենաըարի և արդար
 նախախնամութեամբ յատկապէս պահպանում է ծը-
 նողասէր որդոց կեանքն և տալիս է յաջողութիւն և
 բարիք երկրիս վրայ, մինչև կենդանի են. իսկ նոցա
 կատարեալ առաքինութեան լիակատար վարձատրու-
 թիւնը՝ այն անմահ և լաւիտենական երանութեամբ
 լի կեանքն է որ շնորհելու է Սստուած պատուի-
 րանապահներին երկնակին հայրենիքում՝ ըարու-
 թեան երկրում:

Ընչու ընկերութեան պատուիրանների մէջ
 նախ խօսւում է ծնողաց վրայ:
 Սորա պատճառն այն է, որ բնականարար մեզ
 ամենից մերձաւոր են մեր ծնողները. և ծնողներին

քրպատուողը՝ հազիւ թէ միւս մերձաւորներին պատուելու ընդունակ լինի:

Բացի մեր բնական ծնողներից՝ պէտք է իմաստանք, որ ուենենք և հոգևոր ծնողներ:

Ծնողք են մեզ համար նոքա, որոնք այլ և այլ կերպով մեր բնտկան ծնողների պարտքն են կատարում մեր վերաբերութեամբ. օրինակ՝ հոգում են մեր մարմնաւոր, մտաւոր և հոգևոր պիտոյքներն և մեզ դէպի բարին առաջնորդում:

Սոքա են.

1, Թագաւորն եւ հայրենիքը, որովհետև թագաւորութիւնն է մի ընտանիք, որի մէջ թագաւորն է հայր, իսկ հալատակներն են որդիք թագաւորի և հայրենեաց:

2, Հոգեւոր հովիւներն եւ ուսուցիչները, որովհետև նոքա ուսմամբ և ս. խորհուրդների միջոցով վերածնում են մեզ հոգևոր կեանքով և կըրթում, դաստիարակում ու լուսաւորում են մեզ նոյն կեանքի մէջ:

3, Հասակով երէցները կամ մեծերը, ծերերը:

4, Բարերարները:

5, Իշխանաւորները կամ առաջնորդողները:

Թագաւորի վերաբերութեամբ՝ որ ազգապետն է Ս. Գիրքն ասում է. „Աստուծոյ երկերուք, զժագաւորս պատուեցէք“: Ա. Պետր. Բ. 17: Մինչ ո՞ր աստիճան պէտք է տարածուի հայրենեաց սէրը՝ բացատրում է մեզ սրբազն աւետարանին ասե-

լով. „Մեծ ևս զար սէր՝ ոչ ոք ունի, եթէ զանձն իւր դիցէ ի վերայ բարեկամաց իւրոց“: Յովհ. Ժե. 13:

Հոգևոր հովիւների և ուսուցիչների պերաբերութեամբ՝ Ս. Գիրքը պատուիրում է. „Ունկնդիր լեռուք առաջնորդաց ձերոց և հալատակ կացէք նոցա. զի նոքա տքնին վասն ոգւոց ձերոց՝ որպէս թէ համարս տալոց իցեն ընդ ձեր. զի խնդութեամբ արացեն զայն՝ և մի լոգւոց հանելով. զի այն ոչ յօգուտ ձեր է“: Եբր. ՃԳ. 17:

Ծերեցին պատուելու կամ հասակով մեծերին յարգելու համար՝ Ս. Գիրքը պատուիրում է արելով. „Զծերն մի պատուհասիցես, այլ միիթարեսջիր իւրմւ զհայր“: „Զերիտասարգս իւրմւ զեղարս (ունել)“: Ս. Տիմ. Ե. 1:

„Առաջի ալեաց յառնիցես, և պատուեսցես գերեսս ծերոյն: Եւ երկնչիցիս յԱստուծոյ քումմէ“: Ղետ. ԺԹ. 32:

Կան և ուրիշ իշխանաւորներ, որոնց պարաւոր ենք պատուել մեր ծնողների պէս: Սոքա են, դպրոցների զեկավարներն և դաստիարակները, որոնք հոգում են մեր կրթութեան մասին, որոց նկատմամբ Ս. Գիրքը պատուիրում է մեզ ասելով. „Ազաշեմ զձեզ, եղբարք, ճանաչել զվաստակաւորս և զվերակացուս ձեր ի Տէր, և զիրատիչս ձեր. և համարեցարուք զնոսա տրժանիս առաւել սիրոյ վասն գործոյ նոցա“: Ա. Թեսաղ. Ե. 12. 13: „Հա-

Ղորդութիւն արասցէ աշակերտն վարդապետին՝ յա-
մենախն բարութիւնս ։ Գաղատ. Զ. Յ. Յար մէջմաւ
Մեր բոլոր Երախտաւորների Նկատմամբ՝ պար-
տաւորում է մեզ Ս. Գ. Ի իրքն ասելով, «Ս. Ր. Հատու-
ցէք զմենեցուն զպարտս. որում զհարկ՝ զհարկն,
որում զմաքս՝ զմաքսն, որում զերկիւղ՝ զերկիւղն,
որում զպատիւ՝ զպատիւն. և մի ումեք պարտա-
պան գտանիցիք, և չոռմ. Ժ. 7: Ասութիւն ։ Ա.
Ս. Գիրքը ծնողներին և բոլոր իշխանաւորնե-
րին ևս պարտաւորեցնում է կատարել իրանց պար-
տականութիւնը գէպի որդիքն ու ստորագրեալ ան-
ձերն ըատ պատշաճին. «Հարք, մի զայրացուցանէք
զորդիս ձեր, այլ սնուցանիշիք զնոսա խրատու եւ ուս-
մաւը Տեառն, և Եփես. Զ. 4:
Հոգեսը հովիւներին պատուիրում է ասելով՝
«Արածեցէք որ ի ձեզ հօտդ է Աստուծու. վերա-
կացու լինել՝ մի իբրև ակամայ, այլ կամաւ ըստ
Աստուծու. մի զօշաքաղութեամբ, այլ յօժարու-
թեամբ. մի իբրև տիրելով վիճակացն, այլ լինել օ-
րինակ հօտին. զի յերևել Հովուապետին՝ ընդունի-
ջիք զանթառամ փառաց պսակն. Ա. Պետր. Ե. 2, 3, 4:
Ս. Գիրքը պատուիրում է բոլոր իշխանաւոր-
ներին և Տէրերին ևս դէպի իրանց ստորագրեալնե-
րը լինել ինչպէս հայր՝ ասելով. «Տեարք, զիրաւունս
և զհաւասարութիւն ծառալից ձերոց շնորհեցէք.
գիտասջիք զի և ձեր Տէր գոյ իերկինս. Կող. Դ. 1:
Ի՞նչպէս պէտք է վարուել այն դէպքում, երբ

պատահի, որ ծնողը կամ իշխողները մեզանից պա-
հանջեն գործել մի որպես է գործ, որ ընդդեմ լինի
մեր հաւատի և Ս. արուծոյ օրէնքին, կամ մեր խրո-
ջին. — Ս. լուսիսի դէպքերում պէտք Եասելնոցա այն,
ինչ որ առաքեալներն ասացին Հրէից ծերակոյտին
կամ դատաւորներին. «Եթէ արժան իցէ... գեղ լսել
առաւել քան Աստուծոյ, ընտրեցէք»: Գործ. Դ.
19: Եւ համբերութեամբ պէտք է կրել այն ամենը,
ինչ որ պատահելու լինի՝ հաւատն և աստուածալին
օրէնքը սուրբ զահելու պատճառով։ Պէտք է հաւատի մէջ գերազանցող նահատակ-
ների օրինակներին լինինք հետևող և երբէք ըշհա-
մածայնենք ոչ ոքի, երբ նորա առաջարկութիւնը
մեր խղճին, հաւատին և Ս. ստուծոյ օրէնքին հա-
կառակ է: Այն, ինչ որ պահանջում է մեզանից
հինգերորդ պատուիրանը՝ միմիան Աստուծոյ օրէն-
քին և արդարութեան հնագանդութիւնն է:

Վեցերորդ պատուիրանով արգելում է սպա-
նութիւնը, կամ մերձաւորի կեանքին որ և է կեր-
պով վնասելը: «Զանպարտն և զարդարն մի սպա-
նանիցես»: Ելից Դ. 7: «Զայր արիւնահեղ և զնեն-
գաւոր պիղծ առնես դու, Տէր»: Սաղմ. Ե. 7: «Արք

արիւնահեղք և նենդաւորք մի հասարակեցեն գա-
ւուրս իւթեանց“:

Սպանութիւնը համարւում է իրաւացի՝ 1) երբ
զինուորը պատերազմի մէջ սպանում է հայրենեաց
թշնամուն. „Եթէ մարտիկ ոք իցէ՝ ոչ պսակի եթէ
ոչ ըստ օրինին մարտիցէ“, Բ. Տիմ. Բ. Յ. 2) Երբ
Տէրութեան կամ դատաւորի վճռին համեմատ է
կատարւում. „Աստուծոյ պաշտօնեալ է (իշխանն
կամ դատաւորն) քեզ ի բարիս. ապա եթէ չար
գործիցես, երկիր. զի ոչ եթէ վայրապար ածեալ է
սուսեր ընդ մէջ. Աստուծոյ սպասաւոր է՝ վրէժ-
խընդիր ի բարկութիւն այնմ, որ զշարն գործիցէ“:
Հռոմ. ԺԿ. 4: Եւ մեր Լամբրոնացին ասում է.
։ Սպանութիւնն յորժամ ըստ օրինի (է), սուրբ է։
Առակ. մեկ. ԻԱ. դլ.։

Պատահում է և ակամայ սպանութիւն, երբ
օրինակ՝ սպանում են յանկարծ և առանց դիտաւո-
րութեան, պատահմամբ։ Այսպիսի դէպքում ևս
սպանողը չէ կարող բոլորովին անմեղ համարուիլ,
եթէ կարևոր զգուշութիւն չէ գործ դրել դիպուա-
ծական սպանման դէմ, և յամենայն դէպս պէտք
ունի խղձմտանքը սրբելու համար՝ իւր անձը դնել
եկեղեցուց սահմանուած ապաշխարանքի տակ։

Կարևոր է զիտենալ, թէ սպանման որպիսի
դիպուածներն են համարւում հակառակ պատուի-
րանիս։ Բացի անմիջական սպանութիւնից, որպիսի
և իցէ գործիքով՝ ալս յանցանքին են պատկանում

Հետևեալ և սոցա նման դէպքերն եւ.

1, Երբ դատաւորը դատապարտում է դատի
ենթարկուածին, որի անմեղութիւնը լայտնի է նորան։

2, Երբ մէկը թագցնում է կամ ազատում
մարդասպանին, և այսու տալիս է նորան միջոց
նոր սպանութիւն գործելու։

3, Երբ մէկը կարող էր ազատել մերձաւորին
կամ ընկերին մահից, բայց չէ ազատում, օրինակ՝
երբ հարուստը թողնում է աղքատին սովամահ
լինել։

4, Երբ մէկը մարդուս ուժից վեր ծանրու-
թեամբ և խստագոյն պատիժներով մաշում է
ստորագրեալներին և սորանով փութացնում է նոցա
մահը։

5, Երբ մէկը ժուժկալութեան հակառակ գոր-
ծերով կամ այլ մեղքերով մաշում, կարծում է իւր
սեպհական կեանքը, որ է ինքնասպանութիւն։

Պէտք է իմանալ, որ ինքնասպանութիւնն
սպանութիւններից ամենաօրինազանցն է։ Որով-
հետև՝ եթէ բնութեան դէմ է սպանել ուրիշն՝
ալսինքն մեր նմանին, ապա աւելի ևս հակառակ
է բնութեան՝ լինել անծնասպան։ Բացի սորանից՝
մեր կեանքն իսկ միայն մեզ չէ պատկանում իրեւ
սեպհականութիւն, այլ մանաւանդ Աստուծուն, որ
նորա Տուիչն է։ Մարմինք ձեր տաճար են Հոգ-
ւոյն որ էի ձեզ զոր ունիքն լԱստուծոյ. և չէք ան-
ձանց տէր։ Ա. Կորնթ. Զ. 19,

Մենամարտութիւնը նոյնպէս դատավարութում
է վեցերորդ պատութիւնով։ Վասն զի մասնաւոր
վիրաւորանքի կամ վէճի վճռողն է նախ՝ իշխանու-
թիւնից կարգուած դատաւորը, ևոչ ինքնիշխանու-
թիւնը. Երկրորդ՝ մենամարտողը ստանձնում է ինք-
նակամ մի գործ, որի մէջ յայտնապէս նախադրուում
է թէ իւր և թէ ախոյեանի մահը։ Ուրեմն մենա-
մարտի մէջ բովանդակուում են երեք սոսկալի յան-
ցանք. ապատամբութիւն գրական օրէնքի դէմ,
սպանութիւն և անժնասպանութիւն, որոնք հակա-
ռակ են պատուիրանին։

Բացի մարմնական սպանութիւնից՝ կայ և հի-
գեւոր սպանութիւն, որ ընդհանուր անունով կոչ-
ում է գայթակղութիւն։ Երբ մէկն ընկերին կամ
մերձաւորին մոլորեցնում է և ձգում անհաւատու-
թեան և ապօրինութեան մէջ՝ դորանով գայթակ-
ղեցնում է նորան և ենթարկում նորա հոգին քա-
րոյական մահուան։ Այս պատճառով Փրկիչն ասում
է. „Որ ոք գայթակղեցուսցէ զմի ՛ փոքրիանց յայ-
ցանէ լիս հաւատացելոց, լաւ է նմա՝ եթէ կախիցի եր-
կան իշոյ ընդ պարանոց նորա՝ և ընկղմիցի ի խոր-
ծովու։ Մատթ. ձլ. 6։”

Կան սպանման կամ մահացնելու նըբագոյն տե-
սակներն ես, որոց մի քանիսը միայն լիշել պէտք
է։ Սոցա կարգին են պատկանում բոլոր այն գոր-
ծերն ու խօսքերը, որոնք հակառակ են ընկերու-
թեան օրէնքին, որոնք անարդարութեամբ խախ-

տում են մերձաւորի հանգիստն ու ապահովութիւ-
նը։ Այս տեսակիցն են նոյնպէս ներքին ատելութիւնը,
նախանձը, չկամութիւնն և այլն, որոնք թէև չարտա-
յալտուին՝ այնուամենայիւ դէպքը բերածին պէս ընկե-
րին վնաս պիտի պատճառեն։ Ուստի և առաքեալն
ասում է. „Ամենայն որ ատեայ զեղբայր իւր՝ մար-
դասպան է”։ Ա. Յովհ. Գ. 15։

Ուրեմն եթէ արգելում մերձաւորի կեանքին
վնասել՝ սորանով իսկ հրամաւում է՝ որչափ կարելի
է, պահպանել մերձաւորի կեանքը։ Ուստի՝ սո-
րանից յառաջանում են հետեւալ պարտականու-
թիւնները.

- 1, Օգնել կարօտեալներին.
- 2, Խնամել որբերին, այրիներին և աղքատներին.
- 3, Մխիթարել տիսուրներին և տրտմեալներին.
- 4, Թեթևացնել գմբաղների վիճակը։
- 5, Վարուել ամենքի հետ հեգութեամբ, սիրով և
կրթողաբար։
- 6, Հաշտուել խռովեալների հետ.
- 7, Ներել վիրաւորողին և բարերարել թշնամեաց
և այլն։

Եթէ մենք ընդունակ ինչինք կատարել այս
պարտականութիւնները՝ պիտի անշուշտ զգայինք
այն քաղցրութիւնը, որ զգում են առաքինիք՝ կա-
տարելով Փրկչի պատուիրանները։

Դիմում արով այս մասին գլուխ զդացույ ու մզմէ
այս կամ այս այս բարութեամբ գույց ամ մզմէ
այս կամ այս այս բարութեամբ գույց ամ մզմէ
այս կամ այս այս բարութեամբ գույց ամ մզմէ

ՅՈԹՆԵՐՈՌԴ ՊԱՏՈՒԻՒՄՆ

Եօթներորդ պատուիրանով արգելում է շնութիւնը։ Սա պարունակում է իւր մէջ մեղքի ամենագարշելի տեսակները, որոց մասին Պօղոս առաքեալը գրում է քրիստոնեաներին, որ իրանց մէջ նոցա անունն անգամ չըլառուի, և աւելացնում է ասելով. „Զայս տեղեկացեալ գիտասջիք, թէ ամենայն պոռնիկ, կամ պիղծ, կամ տգահ՝ որ է կոապարիշտ, ոչ ունի ժառանգութիւն յարքալութեանն Քրիստոսին և Աստուծոյ։“ Եփես. Ե. 5. 6։

Շնութեան մեղքը չարագոյն է դատուած՝ ոչ միայն այն դէպքում, երբ կատարուած իրողութիւն է լինում, այլ և այն ժամանակ՝ երբ դեռ լոկ ցանկութիւն է սրտի մէջ։ Մովսէսի օրէնքով՝ շնացող թէ ալըն և թէ կինը պատժում էին մահով։ Դետաց. Ի. 10. ԽՍ. 9: Յովհ. Ը. 5։

Յիսուսը դատապարտում է շնութեան դիտաւորութիւնն անգամ՝ և ասում է. „Ամենայն որ հայի ի կին մարդ առ ի ցանկանալոյ նմա, անդէն շնացաւ լնդ նմա ի սրտի իրում։“ Մատթ. Ե. 28։

Որպէս զի մարդ կարողանայ մաքուր պահել իւր սիրտը՝ պէտք է հեռու կենայ ամեն գալթակղեցիչ առիթներից՝ օրինակ անպարկեշտ խօսք ու զըուցից, անհամեստ կատակներից, չըպէտք է ներկայանայ գալթակղեցիչ տեսարանների և այլն։

Սորա համար է ասում Փրկիչը. «Եթէ ակն քո աջ գալթակղեցուցանէ զքեզ, խեա զնա և ընկեա ի քէն»։ Մատթ. Ե. 29. ծշմարիտ՝ պէտք է գալթակղեցիչ աչքը հանել և ի բաց ձգել, բայց ոչ թէ ձեռքով, այլ կամ քով, կամ քի հաստատութեամբ, բարյական զօրութեամբ։ Ով որ հաստատապէս վրճում է չընայել այն բանին, որ գալթակղեցնում է՝ նա արդէն հանում և ձգում է իրանից մոլորեցնող աչքը։

Եօթներորդ պատուիրանը դատապարտելով և արգելելով շնութիւնն իւր ամեն տեսակներով՝ սուրանով իսկ հրամալում է ամիւսնական սէր նու հաւատարմութիւն։ «Պատուական է ամուսնութիւն ամենւին, և սուրբ անկողինք. բայց զշունս և զպունիկս դատի Աստուած։» Եփր. ԺԴ. 4։ Ս. Գիրքը մարդի և կնոջ պարտականութեան մասին տալիս է հետևեալ հրամանը. „Ա՛րք, սիրեցէք զկանալս ձեր, որպէս և Քրիստոս սիրեաց գեկեղեցի, և զանձն իւր մատնեաց վասն նորա։“ Եփես. Ե. 25։ „Կանալք իւրեանց արանց հնազանդ լիցին իբրև Տեառն. զի ալր է գլուխ կնոջ, որպէս և Քրիստոս զլուխ է եկեղեցւոյ, և ինքն է փրկիչ մարմնոյ։“ (անդ 22. 23)։

Դատ չարիքներից՝ օրինակ, աղքատութիւնից, թշուառութիւնից, մահաբեր լուսահատութիւնից, խելագարութիւնից և այլն՝ զերծ մնալու համար՝ պէտք է հնազանդել այս աստուածացին պատուիրանին և սիրել առաքինի վարք ու բարքը։

Այս առաջնամաս ՈՒԹԵՌՈՐԴԻ ՊԱՏՌԻՒՄՆ կատարուի
ովաւառապահ մամավարութեամբ այս լաւ և առանց
Այս պատուիրանով ընդհանրապէս արգելում
է զողութիւնը, կամ որ և է կերպով իւրացնելն այն
քանի, որ պատկանում է ուրիշին. Այս մեղքի գլո-
խաւորապէս տեսակներն են. 1. Կամ յայտնապէս և ուժով ուրիշ
1, Կողոպտումն՝ կամ յայտնապէս և ուժով ուրիշ
մեսպհականութեան խլելը, իւրացնելը:
2, Գողութիւնը՝ կամ ուրիշիւրսեպհականութիւնն
ծածուկ տանելը:
3, Խաքէութիւնը՝ կամ ուրիշիւրսեպհականութիւնն
իւրացնելը խարդախմիջոցներով. օրինակ՝ երբ
տակիս են կեղծ գրամ վոխանակ իսկականի, վը-
շացած կամ վատ տեսակի ապրանք՝ վոխանակ
լաւի, գործ են ածում նենգած չափու կշիռ, չեն
տակիս գնուածը, ծածկում են իրանց կայքն ու
գոյքը, պարտքերը չըհատուցանելու. կամար՝ ան-
կատար են թողնում աղայմանը, կտակը, խոս-
ուումը, թագնում են գոյզութեան մէջ մեղա-
դրուածներին, որով և պավսասուածին զրկում են
բաւարարութիւնից և այլն: անզոր և այս
4, Սեղանակապտութիւն, կամ սեպհականելը մի
քանի, որ նուիրուած է Աստուծուն և պատկա-
նում է եկեղեցուն. և այս աններելի մեղքերից
մէկն է: բայց նույն գոյզու մաս մուտ այս
5, Սիմոնականութիւն, կամ հոգեւոր կողոպտու-
մըն, երբ մէկը յանձնում, իսկ միւսը ստանձնում է

հոգեւոր մի պաշտօն՝ ոչ ըստ արժանաւորու-
թեան, այլ շահախնդրութեան, հարստանալու
նպատակով, կամ թէ, հոգեւոր պաշտօնը Ստա-
նում են որպէս միջոց նիւթական ապրաւստի: 2
6, Կաշտակերութիւն, երբ ստորագրեալներից, կամ
դատի ենթարկուածից ստանում են կաշտք, և
կամ շահախնդրութեան համար՝ բարձրացնում
ճանի և պաշտօնի են բարձրացնում անպրժան-
ներին, արդարացնում են յանցաւորին, նեղում
են անմեղներին և այլն:
7, Պաշտօնապղծութիւն, երբ ստանում են ուո-
ճիկ պաշտօնի համար, կամ վարձ՝ մի գործ կա-
տարելու, բայց պաշտօնն ու գործը սրբութեամբ
չեն կատարում և այսպիսով գործանում են թէ
ուոճիկը կամ վարձը, և թէ այս օգուտը, որ կա-
րող էին աշխատութեամբ մատակարարել հասա-
րակութեան, կամ նորան, որի համար պարտա-
ւոր էին աշխատել: Այս կարգին են պատկա-
նում և նոքա, որոնք կարող էին աշխատու-
թեամբ վաստակել իրանց ապրուածը, բայց ապ-
րում են ողորմութեամբ, հասարակաց հազուով
և մուրացկանութեամբ: Անդաւայս անդաւայս
8, Հարստանարութիւն, երբ որ և է իրաւունքի կեր-
պարանքով, բայց իրավէս արգարութեան և մար-
դաս լութեան օրէնքի գէմ՝ իրանց օգտին են
դաս լութեան օրէնքի գէմ՝ իրանց օգտին են
դարձնում ուրիշիւրսեպհականութիւնը, կամ ու-
րիշիւրսեպհականութիւնը, նոյնպէս մերձաւորին թշշ-

ուառացներով: օրինակ՝ երբ պարտատէրները ծանրաբեռնում են պարտապահներին ծանր տոկոսներով, երբ կալուածատէրները հարկերով կամ ծանր պարմաններով ճնշում են իրանցից կախումըն ունեցողներին, երբ գործատէրները գորուարակիր աշխատութիւններով ծանրաբեռնում են աշխատողներին կամ գործակատարներին, երբ սովի ժամանակ ուտեստը վաճառում են բարձրագոյն գներով և այն և այլն:

- Այս մեղքերն արգելելով՝ ութերորդ պատուիրանը հետևաբար հրամայում է գործել հետևեալը.
- 1, Անշահասիրութիւն և անաչառութիւն.
 - 2, Հաւատարմութիւն և անկեղծութիւն.
 - 3, Արդարադատութիւն և ճշմարտութիւն.
 - 4, Գլութիւն և ողորմածութիւն դէպի կարօտեալները:

Անգութն և ագահը մեղանչում են այս պատուիրանի դէմ, որովհետև կարող էին և չըկամեցան Աստուծոյ տուած աւելորդից բաժին հանել կարոտեալ ընկերին, մոռանալով՝ որ ինչ որ մենք ունինք՝ իսկապէս Աստուծունն է, և նա տուաւ մեզ աւելին՝ որպէս զի օգնենք աղքատին և չքաւորին: Ուստի երբ մեր անզիւթեան և ագահութեան պատճառով՝ մեր ունեցածից մաս չենք տալիս աղքատին, նշանակում է՝ յափշտակում, ծածկում ենք նոցա բաժինն և Աստուծոյ պարզեց. այս ևս գողութիւն է:

Ութերորդ պատուիրանի դէմ եղած մեղքելի

հակառակ կայ մի բարձրագոյն առաքինութիւն ևս, որ Ա. Աւետարանն առաջարկում է, ոչ որպէս ամենքի համար պարտականութիւն, այլ որպէս պայման՝ բարեպաշտութեան մէջ կատարելագոյն լինելու ցանկացողներին, այն է՝ հրաժարուել բոլոր սեպ-հականութիւնից և գնալ Փրկչի ետևից. «Եթէ կամիս կատարեալ լինիլ, Երթ վաճառեա զինչս քո և տուր աղքատաց... և եկ զկնի իմ»: Մատթ. ձթ. 21: Սակայն այս կոչին թէև շատերն են հրաւիրուած, բայց սակաւք են ընդունակ. գորա համար ևս ասաց Փրկիչը. «Առ ի մարդկանէ այդ անկար է, այլ առ յլլստուծոյ ամենայն ինչ զօրաւոր»: Մատթ. ձթ. 26:

ԻՆՆԵՐՈՐԴԻ ՊԱՏՈՒԻՐԱՆ

Իններորդ պատուիրանն արգելում է ընկերը դէմ սուտ վկայութիւն տալն, և առհասարակ ամենայն ստախօսութիւնն:

- Ի՞նչ է նշանակում սուտ վկայութիւն:
- 1, Սուտ վկայութիւն դատաւորի կամ գատապահնի առաջ երբ գատարանում մէկի դէմ վկայում, գանգատում կամ մատնութիւն են անում սուտ, հակառակ ճշմարտութեան և խղճի:
 - 2, Երբ մէկի քամնակից բամբասում են, կամ երեսին ասում այլ և այլ զբարտութիւններ:

— վանդիմանել և դատապար-
տել ուղիշներին՝ երբ նոքա իրօք ունին այս կամ
այն պակասութիւնները։ Աւետարանը չէ կամենում
ալդ եթէ մենք առաջնձին պաշտօնով հրաւիրուած
չենք դատելուց։ Մի դատիք զի մի դատիցիք։
Մատթաէ. վ. Բայց երբ այդպիսի կոչումն կամ
պարտաւորութիւն դրսած լինի մեր վրայ դատելու
կամ յանդիմանելու ընկերի պակասութիւններն և
մոլութիւնները, պէտք է անաշառ, անկեղծ և ար-
դար լինինք մեր դատարանիմէջ, պէտք է լիշենք
Փրկչի խօսքը՝ թէ ճի որով դատաստանաւ դատիք՝
դատելոց էք. և որով չափով չափէք չափեսցի ձեզ“,
(անդ 2): Եւ որպէս զի մեր յանդիմանելն և դա-
տաստանը չըհամարուի դատարկ խօսք, կեղծաւո-
րութիւն, ընկերին անարդելու և չարահամբաւելու
լոկ միջոց, այլ նախտակ ունենալ ընկերին լուղու-
թիւնածելն և մոլութիւնից ու մոլորութիւնից վըը-
կելը՝ նախ քան նորան դատելը, նախ քան ուրիշնե-
րին խրատիչ և ուղղիչ լինելը՝ մենք ինքներս Ա-
ւետարանի օրէնքի համաձայն պարտաւոր ենք լի-
նել ուղիղ, խրատուած և հրահանգուած ճշմար-
տութեան և բարոյական սկզբունքներով. պէտք է
ինքնին եղած լինինք մեր անաշառ դատաւորը, որ-
պէս զի չըլսենք ընկերից և հասարակութեան բե-
րանից՝ թէ „Կեղծաւոր, հան նախ զգերանդ յակա-
նէ քումմէ և ապա հայեսցիս հանել զշիւղն յա-
կանէ եղբօր քո“։ Մատթ. է. 5: Կեղծաւորներին և

անկեղծներին ճանաչելու համար իսկ պէտք է Փըրկ-
չի ասածի պէս՝ նոցա գործերից խրատուինք. 1. ի
պտղոյ նոցա ծանիցիք գնուա“։ Մատթ. է. 20: մա-
թիւն թիւն մեր խօսած ճշմարտութիւնը որ և և է
վնաս անգամ պատճառելու լինի մեր ընկերին և
մերձաւորներին՝ այդ վնասն իւր օգուտն ունի դար-
ձեալ, աւ է ասել ճշմարտութիւնը, ի հաշիւչառ-
նելով ընկերի առերելով շահը՝ բան այդ շահը
պահպաննելու նպատակով ստել սուտ վկայել։ թէ
ազգականութիւնից բարեկամութիւնից կամ ուրիշ
պատճառներից դրդուած՝ կամենանք ստելով կամ
սուտ վկայելով այս և այն դէպքում պաշտպանել
մեր բարեկամին, մերձաւորին կամ մօտիկ ծանօթին
հակառակ ճշմարտութեան թէ և դորանով շահած
կը լինինք նորան, որին մերն ենք համարում և
որի հետ կապուած ենք բնական և քաղաքացիա-
կան սերտ կապերով, գուցէ և անիսելի կապերով,
բայց այնու ամենալին մենք դորանով աստուածա-
հաճոյ գործ չենք լինիլ կատարած, այլ մարգահա-
ճոյ. իսկ մարդահաճութիւնը դէմ է քրիստոնէու-
թեան հոգուն. մարդահաճութիւնն է ստութիւն,
որից հեռանալը պատուիրելով պատուիրում է Ս.
Դիրքն և ասում. „Ի բաց մերկանալ ի ձէնջ ըստ
առաջին գնացիցն զմարդն հին, զալականեալն ցան-
կութեամբք խրէսութեանն, Եփես. Դ. 22: Եւ
թէ՝ „Ի բաց ընկեցէք զստութիւն, խօսեցարնք
ճշմարտութիւն իւրաքանչիւր ընդ ընկերի իւ-

բում. զի եմք միմեանց անդամք“: (25):

Ինսերորդ պատուիրանի գէմ եղած մեղքերից գերծ մնալու յարմարագոյն միջոցն է զսպել մեր կրքերը, սանօ դնել մեր լեզուին. որպէս և առաքեալն է ասում: «Զի որ կամի զկեանս սիրել, և զաւուրս իւր տեսանել ի բարութեան, լռեցուցէ զլեզու իւր ի չարութենէ, և զշրթունս իւր ի չխօսելոյ զնենգութիւն». Ա. Պետր. Գ. 10: Կամ ըստ մարգարէին. «Բերան արդարոյ խորհի զիմաստութիւն, եւ լեզու նորա խօսեացի զիրաւունս»: Սաղմ. ԼԶ. 30: «Զքսուն և զերկխօսն առհասարակ անիծանիջիք, զի բազում խաղաղակեացս կորոյս...: Պղծէ զանձն իւր փասքուսն, և ուր և բնակեացէ մօտ՝ ատելի լիցիք»: Սիր. Իլ. 15. ԻՈ. 31:

ՏԱՄՆԵՐՈՐԴ ՊԱՏՈՒԻՐԱՆ

Տամներորդ պատուիրանն արգելում է այնպիսի ցանկութիւններ, որոնք հակառակ են առ ընկերն եղած սիրոյն, և այս ցանկութեան յարակից դիտաւորութիւնները:

Ինչու են արգելում ոչ միայն չար գործերը, այլ և չար ցանկութիւններն ու չար խորհուրդները կամ մտածմունքները: Նախ՝ այն պատճառով, որ երբ հոգու մէջ կայ վատ ցանկութիւն և միտք,

դա արդէն ապացուց է, որ այն հոգին մաքուր չէ Աստուծոյ առաջ, ըստ Սոլոմոնի՝ թէ. „Պիղծ է առաջի Տեառն խորհուրդ անիբրաւ“: Առակ. ԺԵ. 26: Ուստի հարկաւոր է սրբուիլ այս ներքին անսրբութիւնից, ինչպէս ուսուցանում է Առաքեալը. „Սրբեսցուք զանձինս մեր յամենալն արծութենէ մարմնոյ և հոգւոյ, կատարեսցուք զսրբութիւն ահիւն Աստուծոյ“ Բ. Կոր. Է. 1: Երկրորդ՝ այն պատճառով, որ յանցաւոր գործերից զերծ մնալու համար՝ պէտք է նախ զերծ լինել յանցաւոր խորհուրդներից և ցանկութիւններից, որոնցից, ինչպէս սերմերից՝ բուսնում են յանցաւոր գործերը, ըստ այնմ թէ. «Զի ի սրտէ ելանեն խորհուրդք չարք, սպանութիւնք, շնութիւնք, պոռնկութիւնք, գողութիւնք, սուտ վկայութիւնք, հայհոյութիւնք“: Մատթ. ԺԵ. 19: Եւ թէ. «Իւրաքանչիւր ոք փորձի առ ի լիւրոցն ցանկութեանց ձգեալ և պատրեալ. ապա այնուհետև ցանկութիւնն յղացեալ՝ զմեղս ծնանի, և մեղքն կատարեալ՝ զմահ ծնանին»: Յակ. Ա. 14. 15:

Այս պատուիրանով արգելում են ոչ միայն ցանկանալը, այլ և նախանձը, որ կարող է մահերել, շնութիւնը, շահախնդրական և տիրապետական խորհուրդներն ու ցանկութիւններն եալին: Այս մեղքերն արգելելով՝ տասներորդ պատուիրանը հետեաբար հրամայում է գործել հետեալը.

1, Պահել սրտի սրբութիւն.

2, Գոհ լինել մեր ունեցածով.

3, Գոհանալ Աստուծուց մեզ շնորհած վիճակի

և պարզեների համար.

4, Բուն մեր ճակատի քրտինքով, և ոչ յափըշ-
տակութեամբ ձեռք բերել մեր կենսական պիտուք-
ները՝ ինչպէս կարեւորն, այնպէս եւ ցանկալին:
Լաւ է՝ որ առաքեալի հետ ամեն քրիստոնեայ կա-
րողանայ ասել. „Ես ուսայ՝ որովք կարեմ բաւա-
կան լինել: Դիտեմ նուազել, գիտեմ առաւելուլ... և
յագել և քաղցենալ, յամենալի կարող եմ Այնու
որ զօրացուցն զիս“: Փիլիպ. Պ. 11—13:

ԱԿԻ՞Ք



Ց Ա Ն Կ

Յ Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն

Երես

§ 1.	Նախապատրաստութիւն	.	.	1.
§ 2.	Հաւատք	.	.	2.
§ 3.	Քրիստոնէական վարդապետութեան առարկան	.	.	2.
§ 4.	Աստուածային Յայտնութիւն	.	.	3.
§ 5.	Սրբազն աւանդութիւն եւ Աստ- ուածաշունչ Ս. Գիրք	.	.	4.
	Ա. Սրբազն աւանդութիւն.	.	.	5.
	Բ. Ս. Գիրք	.	.	5.
§ 6.	Առանձինն Ս. Գրքի մասին	.	.	9.
	Ա. Հին Կտակարան	.	.	11.
	Բ. Նոր Կտակարան	.	.	12.
§ 7.	Ի՞նչպէս պէտք է կարդալ Ս. Գիրքը			15.
§ 8.	Նախագիծ Քրիստոնէական վարդա- պետութեան	.	.	19.



ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Գլուխ առաջին

ՀԱԽԱՑԻ ՈՒՍՈՒՄՆ ԵՐԵՄ

§ 9.	Հաւատամքի եւ նորա ծագման մասին	21.
§ 10.	Հանգանակի յօդուածների բովանդակութիւնը	25.
§ 11.	Յօդուածների բացատրութիւնը	27.
ա)	Յօդուած	27.
բ)	Ամնասուրբ երրորդութիւն	34.
գ)	Աշխարհիս Արարշութիւնը	37.
դ)	Մարդուս Արարշութիւնը	38.
ե)	Աստուծոյ Նախախնամութիւնը	42.
թ.	Յօդուած	44.
ի.	Յօդուած	48.
ո.	Յօդուած	63.
ե.	Յօդուած	69.
Զ.	Յօդուած	73.
է.	Յօդուած	74.
Հ.	Յօդուած	76.
Թ.	Յօդուած	80.
Ժ.	Յօդուած	87.
ա)	Մկրտութիւն	90.
բ)	Դրոշմ	95.
գ)	Ապաշխարութիւն	98.
դ)	Հաղորդութիւն	100.
ե)	Ամուսնութիւն	106.

զ) Օծումն Հիւանդաց 109.

է) Կարգ կամ՝ ձեռնադրութիւն քահանայութեան 110.

ը) Ծնորհաբաշխութիւն 116.

ժԱ. Յօդուած 117.

ժԲ. Վերջին դատաստան եւ յափառենական կեանք 119.

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Գլուխ երկրորդ.

§ 12. Գաղափար քրիստոնէական Յուսոյ, նորա հիման եւ միջոցների մասին 122.

§ 13. Աղօթքի մասին լնդհանքապէս 122.

§ 14. Տէրունական Աղօթք 124.

Կոչումն կամ՝ յառաջաբան 125.

Առաջին խնդրուածք 126.

Երկրորդ խնդրուածք 127.

Երրորդ խնդրուածք 128.

Չորրորդ խնդրուածք 129.

Հինգերորդ խնդրուածք 131.

Վեցերորդ խնդրուածք 134.

Սովորորդ խնդրուածք 135.

Փառաբանութիւն 136.

§ 15. Ինն երանութիւնք 137.

Երանութեան առաջին պատուիրանք 138.

Երանութեան երկրորդ պատուիրանք 139.

Երանութեան երրորդ պատուիրանը	141.
Երանութեան չորրորդ պատուիրանը	142.
Երանութեան հինգերրորդ պատուիրանը	143.
Երանութեան վեցերրորդ պատուիրանը	145.
Երանութեան եօթերրորդ պատուիրանը	147.
Երանութեան ութերրորդ պատուիրանը	148.
Երանութեան իններրորդ պատուիրանը	149.

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ
ՊԼՈ.Խ ԵՐՐՈՐԴ.

§ 16 ՍԻՐՈՅ ՄԱՍԻՆ


Ա. Հաւատի եւ սիրոյ մէջ եղած յարաբերութիւնը	150.
Բ. Աստուծոյ Օրէնքն ու պատուիրանները	153.
Առաջին պատուիրան	157.
Երկրորդ պատուիրան	163.
Երրորդ պատուիրան	166.
Չորրորդ պատուիրան	168.
Հինգերրորդ պատուիրան	174.
Վեցերրորդ պատուիրան	179.
Եօթներրորդ պատուիրան	184.
Ութերրորդ պատուիրան	185.
Իններրորդ պատուիրան	189.
Տասներրորդ պատուիրան	192.

0014615

97

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0014515

